

*Տիգրան Ղանալանյան*

ՄՓՅՈՒՌՔԻ ՆԵՐՔԻՆ  
ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ  
1950-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Երևան  
2016

ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 66.3  
Ղ 360

*Գիրքը հրատարակվում է  
ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով,  
«Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի  
որոշման հիման վրա*

*Գլխավոր խմբագիր՝  
ԱՐԵՍՏԱԿԵՍ ՍԻՄԱՎՈՐՅԱՆ  
«Նորավանք» ԳԿՀ հայագիտական կենտրոնի ղեկավար*

*Խմբագիր՝  
ՎԱՀՐԱՍ ՀՈՎՅԱՆ  
«Նորավանք» ԳԿՀ հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ,  
Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար*

#### **Ղանալանյան Տիգրան**

**Ղ 360**

ՍՓՅՈՒՌՔԻ ՆԵՐՔԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ 1950-1980-ԱԿԱՆ  
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ/Տ.Ղանալանյան. - Եր.: «Նորավանք»  
ԳԿՀ, 2016. - 164 էջ:

Գիրքը նվիրված է XXդ. երկրորդ կեսին հայկական սփյուռքում ծավալված ներքին տեղաշարժերին: Այդ գործընթացը դիտարկվում է վեց երկրներից (Հունաստան, Ռումինիա, Բուլղարիա, Կիպրոս, Լիբանան, Սիրիա) հայերի արտագաղթի օրինակով: Լուսաբանվում են գաղթերի պատճառները, դրանց ընթացքը, ծավալները, դերակատար կազմակերպությունները: Համակողմանիորեն ներկայացվում են արտագաղթերի հետևանքներն ինչպես ելքի, այնպես էլ նոր երկրներում:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, սփյուռքագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

**ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 66.3**

**ISBN 978-9939-825-29-8**

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2016  
© «Նորավանք» ԳԿՀ, 2016

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ .....	4
ԱՐՏԱԳԱՂԹԸ ՀՈՒՆԱՍՏԱՆԻՑ .....	7
ԱՐՏԱԳԱՂԹԸ ՌՈՒՄԻՆԻԱՅԻՑ .....	29
ԱՐՏԱԳԱՂԹԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻՑ .....	52
ԱՐՏԱԳԱՂԹԸ ԿԻՊՐՈՍԻՑ .....	69
ԱՐՏԱԳԱՂԹԸ ԼԻԲԱՆԱՆԻՑ .....	86
ԱՐՏԱԳԱՂԹԸ ՍԻՐԻԱՅԻՑ .....	118
ՎԵՐՋԱԲԱՆ .....	142
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	145
PEՅՅՈՄԵ .....	156
SUMMARY .....	160

## ԱՌԱՋԱԲԱՆ

Սույն հետազոտությունը նպատակ ունի ներկայացնել Երկրորդ աշխարհամարտին հաջորդած տասնամյակների ընթացքում Սփյուռքում տեղի ունեցած տեղաշարժերը՝ քննարկելով մի քանի երկրների օրինակները: Սփյուռքի ներքին տեղաշարժերը երբևէ առանձին ուսումնասիրության նյութ չեն հանդիսացել, ուստի այս աշխատանքն այդ ուղղությամբ առաջին քայլերը կատարելու փորձ է: Ընդ որում՝ կարևորվում են ոչ միայն գաղթերի գործընթացը ներկայացնելը, դրանց պատճառները և ծավալները վերհանելը, այլև հետևանքները լուսաբանելը: Դիտարկվում են տեղաշարժերի հետևանքները ոչ միայն գաղթի ելքի երկրներից, այլև համառոտակի ներկայացվում են արտագաղթածների հետագա ճակատագիրը, նրանց դերակատարությունն իրենց նորահաստատ երկրների հայկական համայնքներում:

Սփյուռքի ժողովրդագրական գործընթացների պատմությանը նույնիսկ հպանցիկ հայացք նետելիս ակնհայտ է դառնում, որ այն խիստ բարդ և բազմաշերտ է: Արդեն 1920-ական թթ. սկսած, երբ ձևավորվում էր հայկական Սփյուռքը, ծավալվում են միգրացիոն շարժեր տարբեր համայնքներից: Եթե այս ու հաջորդ տասնամյակի ընթացքում տեղի ունեցած տեղաշարժերը պայմանավորված էին նորաստեղծ Սփյուռքի ձևավորման ու կայացման տրամաբանությամբ, ապա հաջորդ տասնամյակներին ծավալված գաղթերն ունեին սկզբունքորեն այլ պատճառ-

ներ: Երբ 1920-1930-ական թթ. Սփյուռքի ձևավորման արդյունքում արդեն 1940-ական թթ. սկզբում ստեղծվեց համեմատաբար կայուն կացություն, Երկրորդ աշխարհամարտից հետո ծավալված իրադարձությունները եկան պարտադրելու միանգամայն նոր իրողություններ:

Հայաբնակ մի շարք երկրներում ծայր առած հակամարտությունները, քաղաքացիական պատերազմները, ազգայնական շարժումները, կրոնական ծայրահեղականությունը, ամբողջատիրական վարչակարգերի հաստատումը, քաղաքական ցնցումները, սոցիալ-տնտեսական ճգնաժամերը և այլ գործոններ դրանցում բնակվող հայերին հարկադրեցին անհատապես, առանձին դեպքերում՝ զանգվածաբար, գաղթել նոր՝ ավելի ապահով, բարեկեցիկ և ժողովրդավարական պետություններ:

Սփյուռքի ներքին տեղաշարժերի գործընթացը հատկապես ցցուն հետևանքներ ունեցավ բալկանյան և մերձավորարևելյան երկրների հայկական համայնքներից տեղի ունեցած արտագաղթի պարագայում: Եթե նկատի առնենք, որ այս երկու տարածաշրջանները 1920-1930-ական թթ. Սփյուռքի հիմնական համախմբման վայրերից էին, ապա պարզ կդառնա այստեղից ծայր առած մեծածավալ արտագաղթի կարևորությունը:

Խոսելով բալկանյան երկրներից տեղի ունեցած արտագաղթի մասին՝ անհրաժեշտ է նշել, որ եթե Հունաստանում դրա գլխավոր պատճառը Երկրորդ աշխարհամարտին հաջորդած քաղաքացիական պատերազմն ու տնտեսական ծանր դրությունն էին, ապա Ռումինիայի և Բուլղարիայի պարագայում առաջնային նշանակություն ուներ ամբողջատիրական վարչակարգերի հաստատումը, քանզի դրանք, ընդհանուր քաղաքա-

կան կացությունից զատ, հետևողականորեն խոչընդոտում էին հայկական համայնքային կյանքին:

Աշխատանքում ներկայացված երկրորդ խմբում մերձավորարևելյան երեք երկրներն են, որոնք Սփյուռքի ներքին տեղաշարժերի կարևոր բաղկացուցիչներից են: Եթե Կիպրոսի հայության պարագայում հասկանալիորեն արտագաղթը հետևանք էր XXդ. երրորդ քառորդին այս երկրում ծավալված իրադարձությունների, ապա Սիրիայում և Լիբանանում տեղաշարժերն ու դրանց հետ փոխկապակցված զարգացումները շարունակվեցին նաև հետագա շրջանում, որոնք, ըստ էության, կրելով զգալի փոփոխություններ, ընթանում են առայսօր:

Սփյուռքի համար առաջնային նշանակություն ունեցող Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներից արտագաղթն ամենամեծ արձագանքն էր ստանում, քանզի այն անմիջականորեն ազդում էր ոչ միայն տվյալ երկրների ու տարածաշրջանի, այլև ողջ Սփյուռքի կառուցվածքային փոխակերպումների վրա:

Այսպիսով, արխիվային վավերագրերի, սփյուռքահայ մամուլի, թեմային առնչվող առկա գրականության պատմահամեմատական վերլուծության հիման վրա փորձ է արվում ներկայացնել Սփյուռքի ներքին տեղաշարժերի բաղկացուցիչ մասը կազմող ժողովրդագրական տեղաշարժերը՝ Հունաստանից, Ռումինիայից, Բուլղարիայից, Կիպրոսից, Լիբանանից և Սիրիայից հայերի արտագաղթի գործընթացի ու հետևանքների լուսաբանմամբ:

Սույն թեմայի հետազոտության ընթացքում ստացած արժեքավոր խորհուրդների համար երախտապարտ ենք պատմաբան Պետրոս Հովհաննիսյանին:

## ԱՐՏԱԳԱՂԹԸ ՀՈՒՆԱՍՏԱՆԻՑ

Երկրորդ աշխարհամարտը, 1946-1949թթ. քաղաքացիական պատերազմը, սոցիալ-տնտեսական ծանր դրությունը 1940-ական թթ. երկրորդ կեսից հարկադրեցին Հունաստանում ապաստանած հայությանը փնտրել ելքի ուղիներ<sup>1</sup>: Ամբողջ համայնքի գրեթե 2/3-ի համար ելքը հայրենիք վերադառնալն էր. 1946-1947թթ. 18.215 հազար հունահայեր հայրենադարձվեցին<sup>2</sup>: Մնացածներից շատերը Հունաստանից մեկնեցին օտար երկրներ: Եթե 1970-ական թթ. արտագաղթը շարունակվում էր փոքր ծավալներով, ապա 1980-ական թթ. գերիշխող դարձավ հակառակ գործընթացը՝ հայերի ներհոսքն այլ երկրներից, իսկ 1990-ական թթ. արդեն՝ նաև Հայաստանից: Ուստի, չնայած անհատական կարգով արտագաղթի շարունակմանը, հետագայում գերիշխող դարձավ միգրացիոն հակառակ միտումը:

1938թ. Աթենքի Ազգային կենտրոնական վարչության կողմից հունական կառավարությանը ներկայացված վիճակագրության համաձայն՝ Հունաստանում հայերի թիվը 27.080 էր, ըստ այլ տեղեկությունների՝ 31 հազար<sup>3</sup>:

---

<sup>1</sup> 1920-1930-ական թթ. Հունաստանից տեղի ունեցավ հայերի հսկայածավալ արտագաղթ (ներառյալ հայրենադարձությունը):

<sup>2</sup> Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Միջուռք առնչությունները և հայրենադարձությունը, Երևան, 1985, էջ 241:

<sup>3</sup> Գեորգեան Կ., Ամենուն տարեգիրքը 1960, Է. տարի, Պեյրութ, 1959, էջ 281:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին հունահայությունը հայտնվեց չափազանց ծանր վիճակում: 1941-1942թթ. ձմռանը ծայրահեղ աղքատ հայերի թիվը միայն Աթենքում և Պիրեայում հասնում էր 10 հազարի: Ավելի բարվոք էր վիճակը Սալոնիկում (հայերի թիվը մոտ 6 հազար էր), սակայն հետագայում այստեղ ևս դրությունը ծանրացավ: Ըստ Սալոնիկի հայոց հոգևոր հովվի հաղորդած տեղեկության՝ 1943-1944թթ. հազարից ավելի հայեր սովամահ եղան: Այդ ժամանակ Սփյուռքի այլ համայնքներ, հատկապես ամերիկահայերը, օգնություն ցուցաբերեցին հունահայերին: Ծանր կացությունը շարունակվեց մինչև 1945թ.: Ընդհանուր առմամբ, պատերազմի ժամանակ մահացած հունահայերի թիվը գերազանցում էր 3 հազարը<sup>1</sup>:

Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Հունաստանից 300-400<sup>2</sup> հայ բռնի տեղափոխվեց Գերմանիա: Նրանց անմիջական օգնություն ցուցաբերողներից էր Միսաք Թորլաքյանը: Նա գրում է. «Բոլորին գտնուած տեղերը ստուգեցինք, թէ ո՞ր են, որքա՞ն հեռու, քանի՞ հոգի եւ այլն: Եկանք Ռոտվալլտ: Ամենէն առաջ հագուստ հաւաքեցինք եւ Վադարշակ Դիլանեանի հետ դրկեցինք այս դժբախտներուն:

Անցայ Պերլին, որպէսզի այս խեղճերուն վիճակը ներկայացնեմ մերիններուն: Դրօն Պերլին էր: Անմիջական աշխատանքն ու անհրաժեշտ դիմումները կատարուեցան եւ բոլորն ալ

---

<sup>1</sup>Նույն տեղում, էջ 285-286, 290: Պարտիզանական կռիվներում և ընդհատակյա պայքարի ընթացքում զոհվեց 300 հունահայ, տե՛ս *Խալէյան Ե.*, Սփյուռքահայությունը Հայրենական պատերազմի տարիներին, «Պատմա-բանասիրական հանդես», 1975, թիվ 2, էջ 41:

<sup>2</sup>Ըստ Ա. Օրդուխանյանի՝ 200-250 հոգի, տե՛ս *Օրդուխանյան Ա.*, Армяне в послевоенной Германии, "Анив", Минск, 2011, № 2 (35), с. 57.



ազատեցան»<sup>1</sup>: Հետագայում Գերմանիայում մնացած հունահայերը, ԽՍՀՄ երկրներից և այլ վայրերից այստեղ եկած տեղահանված հայերի հետ, փոխադրվեցին ԱՄՆ՝ ԱՆՉԱ<sup>2</sup> կազմակերպության միջոցով: Պատերազմի արդյունքում որոշ թվով հունահայեր էլ տեղափոխվեցին Բուլղարիա, Ռումինիա<sup>3</sup> և Հարավսլավիա<sup>4</sup>: 1950-ական թթ. սկզբին, ըստ ԱՆՉԱ-ի նախագահ Ջորջ Մարտիկյանի՝ Հունաստանում մնացել էր 10 հազար հայ, որոնք ծանր դրության մեջ էին, ուստի վերջինս հույս էր հայտնում, թե «օր մը քարեկամ երկիր մը պիտի բանայ իր դռները անոնց առջեւ»<sup>5</sup>:

Հունահայերի արտագաղթի մասին խոսելիս անհրաժեշտ է հիշատակել նաև ընդհանրապես Հունաստանից տեղի ունեցած արտագաղթի մասին: Մասնավորապես, 1950-1974թթ. այս երկրից արտագաղթածների թիվը կազմեց մոտ 1 մլն մարդ: Ընդ որում, նրանց մեծամասնությունը՝ 603.300 հոգի, մեկնեց Գերմանիա, 170.700-ը՝ Ավստրալիա, 124.000-ը՝ ԱՄՆ և 80.200-ը՝ Կանադա<sup>6</sup>:

Սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում հունական իշխանությունները դեմ չէին հայերի արտագաղթին. «Հելլեն կառավարութիւնը մասնաւոր հրամանագիրով մը մասնաւոր դի-

<sup>1</sup> *Թորլաքեան Մ.*, Օրերուս հետ, Պէրութ, 2001, էջ 576:

<sup>2</sup> Հայրենագուրկ հայերի օգնության ամերիկյան ազգային կոմիտե: Հայ իրականության մեջ առավելաբար կիրառվել է անգլերեն հապավմամբ՝ ԱՆՉԱ (ANCHA, American National Committee to Aid Homeless Armenians):

<sup>3</sup> Հետագայում ընդհակառակը՝ որոշ թվով հայեր Ռումինիայից տեղափոխվեցին Հունաստան, տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 17.VI.1960, էջ 3:

<sup>4</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 709, ց. 3, գ. 178, թ. 21: Կա նաև այս խմբի ներկայացուցիչներից մեկի Ավստրալիա տեղափոխվելու օրինակ, տե՛ս *Mirzaian A.*, *Armenians in Australia and New Zealand*, Sydney, 1966, p. 57.

<sup>5</sup> *Մարտիկեան Ճ.*, Երգն Ամերիկայի, Պէրութ, 1957, էջ 386:

<sup>6</sup> *Kasimis C.*, *Kassimi Ch.*, Greece: A History of Migration, Migration Policy Institute. June 2004. <http://www.migrationinformation.org/Profiles/display.cfm?id=228>

րութիւններ ընծայած է Յունաստանի մէջ հաստատուած այն հայերուն, որոնք կը փափաքին հեռանալ այս երկրէն եւ այլ երկիրներ հաստատուիլ»<sup>1</sup>:

Արտագաղթի պատճառներն էին սոցիալ-տնտեսական ծանր դրությունն ու քաղաքացիական պատերազմը: Հայերի արտագաղթին նպաստում էր նաև այն, որ նրանց զգալի մասը հպատակություն չունէր<sup>2</sup>: Երկիրը լքելու պատճառներից մեկն անվտանգության խնդիրն էր, անապահովության զգացումը. «Արտագաղթի տրամադրութիւն գոյութիւն ունի միշտ. մեր հայրենակիցները մտահոգ են ընդհանրապէս ապագայի նկատմամբ, քաղաքական ընդհանուր կացութեան բերումով»<sup>3</sup>: Դեռևս կար նոր պատերազմական գործողությունների գոտում հայտնվելու վախը. «Եւրոպայի անորոշ ապագան եւ տնտեսական դժուար պայմանները կը նպաստեն արտագաղթի այդ ձգտումին: Յունահայ գաղութը զգայուն է Եւրոպայի եւ ընդհանրապէս խաղաղութեան տագնապներէն, մտահոգիչ հեռանկարներէն»<sup>4</sup>:

---

<sup>1</sup> «Զարթօնք», Բեյրութ, 2.III.1950, էջ 2: Ըստ «Հայրենիք» ամսագրի՝ համայնքի որոշ ներկայացուցիչներ առաջարկել էին Հունաստանի իշխանություններին թույլատրել հայ երիտասարդներին մեկնել երկրից: 1948թ. դեկտեմբերի 9-ից սկսեց գործել դրա թույլտվությունը: Կառավարությունը հավանություն տվեց զինապարտ տարիք ունեցող բոլոր հայերի մեկնելուն, անկախ նրանից՝ ծառայության մեջ են, թե ոչ, այն պայմանով, որ իրենց հետ վերցնեն իրենց ընտանիքները և հայտարարեն, որ այլևս Հունաստան չեն վերադառնա, տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1949, թիվ 2, էջ 108:

<sup>2</sup> Նույն տեղում, 1952, թիվ 4, էջ 111: Ըստ «Հայրենիք» ամսագրի՝ հունահայերի շրջանում մեծ դժգոհություն առաջացրեց նաև հունական իշխանությունների կողմից իրենց նորից թուրքափախտակ ճանաչելու մասին որոշումը, տե՛ս նույն տեղում, 1954, թիվ 7, էջ 110: «Հայրենիք» թերթում էլ կա մի հիշատակություն, որ նանսենյան անձնագրով մի հայի հույները ստիպել են կա՛մ լքել երկիրը, կա՛մ փոխել հպատակությունը, տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 9.X.1956, էջ 2:

<sup>3</sup> «Հայրենիք», Բոստոն, 1952, թիվ 9, էջ 110-111:

<sup>4</sup> Նույն տեղում, 1951, թիվ 1, էջ 97: Ըստ Գ. Չիչեկյանի՝ հունահայերը նաև վախենում էին, որ Թուրքիայի և Հունաստանի միջև կարող է «ինչ-որ բան տեղի ունենալ», և արտագաղթը որոշ չափով նաև պայմանավորված էր թուրքական վտանգով, տե՛ս *Chichekian G., The Armenian community of Québec, Montreal, 1989, p. 49-51.*

Կար նաև տեսակետ, որ արտագաղթում են լոկ ավելի բարվոք կյանք փնտրելու, և մեկնողներն ամեննին էլ աղքատներ չեն. «Եւ հետաքրքրական է իմանալ, թէ ովքե՞ր են մեկնողները. անգործնե՞ր, աղքատնե՞ր: Երբե՛ք: Բացառապէս տնտեսապէս բարեկեցիկ մարդիկ, դրամ ունեցողներ:

Եւ ինչո՞ւ կը մեկնին: Այն յոյսով, որ այն երկիրներուն մէջ՝ ուր պիտի հաստատուին, աւելի դրամ պիտի շահին եւ իբրե՛ւ թէ խաղաղութեան մէջ պիտի վայելեն իրենց շահած գումարները...»<sup>1</sup>:

1946թ. հունահայերը սկսեցին մեծ թվաքանակով արտագաղթել նախ Արգենտինա<sup>2</sup>, 1950-ական թթ.՝ նաև Կանադա: Ընդ որում, նրանք հիմնականում հաստատվում էին Բուենոս Այրես և Մոնրեալ քաղաքներում<sup>3</sup>: 1952թ. «Հայրենիք» ամսագրում կարդում ենք. «Այս վերջերս դարձեալ յամառօրէն կը խօսուէր դեպի Գանատա կամ Հարաւ. Ամերիկա գաղթի մասին: Արդէն որոշ թիւով հայրենակիցներ յաջողած էին, եւ կ'ըսուէր, թէ ուրիշ շատեր ալ շուտով պիտի փոխադրուին»<sup>4</sup>: Այս կանխատեսումն իրականացավ: Իսկ Բեյրութի «Արարատ» օրաթերթը դեռ 1950թ. գրում էր, որ արդեն մի քանի տարի շարունակվում է հունահայերի արտագաղթը տարբեր երկրներ, առանձնաբար Արգենտինա. «Շաբաթ չըլլար որ քանի մը հայ ընտանիքներ Բիրէայէն նաւ չառնեն ուրիշ երկիրներ փոխադրուելու համար:

Կ'երթան աւելի Արժանթին, ուրկէ կը ստանան վիզայի արտօնութիւն, նախապէս հոն հաստատուած ազգականներու

<sup>1</sup> «Հայրենիք», Բոստոն, 17.1.1957, էջ 1:

<sup>2</sup> «Մասիս», Բեյրութ, 10.1.1951, էջ 5:

<sup>3</sup> *Գէորգեան Կ.*, Ամէնուն տարեգիրքը, 1960 է. տարի, էջ 289:

<sup>4</sup> «Հայրենիք», Բոստոն, 1952, թիվ 4, էջ 111:

կամ բարեկամներու կողմէ կատարուած դիմումներու և թափուած աշխատանքներու շնորհիվ»<sup>1</sup>:

Երկրորդ աշխարհամարտից հետո Արգենտինա գաղթեցին ոչ միայն Հունաստանից, այլև Սիրիայից, Լիբանանից ու Ֆրանսիայից՝ ընդհանուր առմամբ 10 հազար հոգի<sup>2</sup>: 1950թ. գարնան դրությամբ, արդեն նախորդ 2-3 տարիների ընթացքում 800 հայ էր եկել այստեղ՝ գլխավորապես Հունաստանից<sup>3</sup>: Հաշվի առնելով նաև 1950-ական թթ. գաղթի ծավալները՝ Հունաստանից Արգենտինա եկած հայերի թիվը հասցվում է 3 հազարի<sup>4</sup>: Եկածների մի մասը հաստատվեց ոչ թե Բուենոս Այրեսում, այլ Կորդոբայում: 1947-1960թթ. Կորդոբայում հաստատվեց 55 ընտանիք, որոնցից 22-ը՝ Հունաստանից, 15-ը՝ Միջին Արևելքից, 11-ը՝ Ստամբուլից<sup>5</sup>:

Հայերի գաղթը Հունաստանից դեպի Կանադա սկսվեց 1950թ.: Պաշտոնական տվյալներում ազգության մասին նշումը շարունակվեց մինչև 1966թ., ուստի կարող ենք ներկայացնել միայն 1950-1966թթ. ընթացքում, ըստ պետական վիճակագրու-

---

<sup>1</sup> «Արարատ», Բեյրութ, 22.XI.1950, էջ 2:

<sup>2</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 100: Երբ սրան գումարվում են 1947-1960թթ. նաև Ռումինիայից ու Բուլղարիայից (մոտ հազար) և Ստամբուլից (մոտ 4 հազար) եկած հայ գաղթականները, ընդհանուր թիվը հասնում է մոտ 15 հազարի: Նույն թիվը տե՛ս նաև *Մատթեոսեան Վ.*, Հայերը Արժանթինի մէջ. նշմարներ մեկնաբանութեան համար, «Հայկազեան հայագիտական հանդես», հ. ԺԷ, Պեյրութ, 1997, էջ 384: Միայն 1946-1950թթ., ըստ Վ. Մատթեոսյանի, Արգենտինա եկած հայերի թիվը 673 հոգի էր, տե՛ս նույնի՝ Հարաւային կողմն աշխարհի. Հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչև 1950, Անթիլիաս, 2005, էջ 109:

<sup>3</sup> «The Armenian Review», 1950, No 1, p. 133.

<sup>4</sup> «Զարթօնք», Բեյրութ, 2.X.1952, էջ 3: Նաև՝ «Արարատ», Բեյրութ, 31.V.1962, էջ 2:

<sup>5</sup> *Մատթեոսեան Վ.*, Հարաւային կողմն աշխարհի. Հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչև 1950, էջ 125: Կորդոբայում հունահայ ընտանիքների թիվը, տարբեր տվյալներով, տատանվում էր 20-25-ի միջև, տե՛ս «Ազդակ», Բեյրութ, 19.XI.1958, էջ 3: Նաև՝ «Հայրենիք», Բոստոն, 6.IX.1973, էջ 3:

թյան, Կանադա եկած հունահայերի (թվով 610) այստեղ գալու տարեթվերը<sup>1</sup>.

1950	1951	1952	1953	1954	1955	1956	1957	
1	4	52	-	36	39	53	73	
1958	1959	1960	1961	1962	1963	1964	1965	1966
31	83	19	20	30	64	23	47	35

Եթե 1950-1959թթ. հունահայերը կազմում էին նույն ժամանակաշրջանում Կանադա ներգաղթած հայերի 69 տոկոսը, ապա հետագայում ավելի մեծաթիվ էին Եգիպտոսից, Լիբանանից և Թուրքիայից եկածները<sup>2</sup>: 1960թ. Հունաստանից առանձնապես Կանադա արտագաղթն էապես դանդաղել էր: Այս շրջանում արտագաղթածներից ոմանք անգամ վերադարձան Հունաստան<sup>3</sup>: Հունահայերը հիմնականում հաստատվում էին Մոնրեալում, ինչպես նաև Տորոնտոյում<sup>4</sup>, Համիլթոնում<sup>5</sup> և Վանկուվերում<sup>6</sup>:

Կանադա եկած հունահայերի մասին շրջանառվում են նաև թվական այլ տվյալներ: Ըստ Հ.Թաքուշյանի՝ միայն 1953-1957թթ. Քերովբե Պտուկյանի օգնությամբ Կանադա է տեղափոխվել 750 հունահայ, հիմնականում՝ երիտասարդներ, որոնք իրենց դրությունը բարելավելուց հետո այստեղ պիտի բերեին նաև իրենց ընտանիքները<sup>7</sup>: Ըստ «Արարատ» օրաթերթի՝ 1962թ. դրությամբ

<sup>1</sup> Chichekian G., նշվ. աշխ., էջ 50:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 49-51:

<sup>3</sup> Գէորգեան Կ., Ամենուն տարեգիրքը 1960, Է. տարի, էջ 289:

<sup>4</sup> Նույնի՝ Ամենուն տարեգիրքը 1962, Թ. տարի, Պեյրուօ, 1961, էջ 343:

<sup>5</sup> «Հայրենիք», Բոստոն, 25.IV.1968, էջ 3:

<sup>6</sup> «Զարթոնք», Բեյրուօ, 28.VI.1978, էջ 3:

<sup>7</sup> Takooshian H., Armenian Immigration to the United States from the Middle East, "Journal of Armenian Studies", Vol. 3, No. 1-2, 1986-1987, p. 144.

Հունաստանից Կանադա եկած հայերի թիվը 1200-2000 էր, գլխավորապես երիտասարդներ<sup>1</sup>: Մինչդեռ, ըստ Կ. Գևորգյանի՝ 1961թ. այդ թիվը մոտ 350 էր<sup>2</sup>: Նշելի է, որ 1945-1971թթ. Կանադա եկավ նաև մոտ 100 հազար հույն ոչ միայն Հունաստանից, այլև Եգիպտոսից, Թուրքիայից, Կիպրոսից<sup>3</sup>:

Հունահայերի մուտքը Կանադա դյուրացնելու ուղղությամբ հատկապես կարևոր աշխատանք կատարեց Մոնրեալի «Արարատ» գորգի վաճառատան սեփականատեր Ք.Պտուկյանը՝ համագործակցելով Կանադական հայկական կոնգրեսի հետ: Կանադա գաղթող հունահայերը ստանում էին ճանապարհածախսերի գումարը՝ հետագայում փոխհատուցելու պայմանով. «Գաղթողները կ'օգտուին նաև ճամբորդութեան դիրություններին: Այսպես, Միացեալ Եկեղեցիներու Ընկերակցութիւնը (United Churches) կը վճարէ գաղթողներու ճանապարհածախսին 2/3ը, փոխատուութեան ձեւով եւ հետագային մաս առ մաս վճարելու պայմանով: Յունահայոց համար մնացեալ 1/3 գումարն ալ կը վճարուի Քերովբէ Պտուկեանի կողմէ, անշուշտ դարձեալ իբրեւ առժամեայ փոխատուութիւն»<sup>4</sup>:

---

<sup>1</sup> «Արարատ», Բեյրութ, 31.V.1962, էջ 2:

<sup>2</sup> *Գէորգեան Կ.*, Ամենուն տարեգիրքը 1962, Թ. տարի, էջ 355: Ըստ «Արարատ» թերթի՝ կանադական կառավարությունը շահագրգռված էր հունահայերի ներգաղթով և Հունաստանում գրասենյակ հիմնեց կազմակերպելու համար հայերի փոխադրումը, տե՛ս «Արարատ», Բեյրութ, 19.II.1957, էջ 2:

<sup>3</sup> *Chimbos P.*, *Greeks in Canada: An Historical and Sociological Perspective*, "The Greek Diaspora in the Twentieth Century", in Clogg R. (ed.), London, 1999, p. 91-92.

<sup>4</sup> *Գէորգեան Կ.*, Ամենուն տարեգիրքը 1962, Թ. տարի, էջ 335: Նորեկներին օգնություն էր ցույց տալիս նաև ՀԲԸՄ-ն, տե՛ս Հայկական բարեգործական ընդհանուր միություն 1957-1982, Մոնթրեալ, 1982, էջ 21: Նաև՝ Հայ բարեգործական ընդհանուր միություն: Ընդհանուր տեղեկագիր 1978 տարեշրջանի, Նիւ Եորք, 1979, էջ 55:

Սկզբում թույլատրվեց Կանադա գալ ամենաաղքատ հունահայերին, որոնց օժանդակեց Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը<sup>1</sup>: Քիչ թե շատ բարվոք վիճակի հասնելուց հետո գաղթած հունահայերն իրենք էին հովանավորում նորեկներին: 1954թ. ներգաղթածներին թույլատրվեց բերել իրենց ընտանիքի անդամներին, ինչից օգտվեցին հունահայերը. ավելի վաղ Կանադա գնացածներին միանում էին նրանց Հունաստանում մնացած ազգականները<sup>2</sup>:

Նույն ժամանակաշրջանում Հունաստանից որոշ թվով հայեր էլ գաղթեցին Ուրուգվայ<sup>3</sup>: Այստեղ գործող Մեքսստիայի և շրջանների հայրենակցական միությունն օգնություն էր ցույց տալիս նրանց<sup>4</sup>: Ըստ Մինաս Թուլյանի՝ 1970-ական թթ. ևս Հունաստանից, Թուրքիայից, Սիրիայից և Լիբանանից Ուրուգվայ են տեղափոխվել որոշ թվով հայեր<sup>5</sup>:

<sup>1</sup> *Kaprielian-Churchill I.*, Armenians in Ontario, Polyphony (Toronto, Ont.) 1982, v. 4, no. 2, p. 118.

<sup>2</sup> «Արարատ», Բեյրութ, 19.II.1957, էջ 2: Կանադա տեղափոխված հունահայերը շարունակում էին Հունաստան արտագաղթել նաև շատ ավելի ուշ շրջանում, տե՛ս *Քուչուկյան Պ.*, Մփռվածները: Ուղևորություն աշխարհի հայկական համայնքներ, Երևան, 2013, էջ 41: Նույնը տեղի էր ունենում նաև Կանադա արտագաղթող հույների պարագայում, տե՛ս *Chimbos P.*, նշվ. աշխ., էջ 91:

<sup>3</sup> «Զարթոնք», Բեյրութ, 11.VI.1955, էջ 2: 1946-1957թթ. Բալկաններից, Ֆրանսիայից և Միջին Արևելքից Ուրուգվայ եկավ 530 հայ, տե՛ս *Մատթեռեսյան Վ.*, Հարաւային կողմն աշխարհի. Հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչև 1950, էջ 273:

<sup>4</sup> «Հայրենիք», Բոստոն, 29.IX.1961, էջ 2:

<sup>5</sup> Նույն տեղում, 13.VI.1981, էջ 3:

Երկրորդ աշխարհամարտից հետո զգալի թվով հունահայեր էլ տեղափոխվեցին Վենեսուելա<sup>1</sup>, ԱՄՆ<sup>2</sup>, Անգլիա<sup>3</sup>, Գերմանիա<sup>4</sup>, Ավստրալիա<sup>5</sup>, Չիլի<sup>6</sup>, Ֆրանսիա<sup>7</sup>, Նիդերլանդներ<sup>8</sup>, Իտալիա<sup>9</sup> և նույնիսկ Բահրեյն<sup>10</sup> ու Հարավաֆրիկյան Հանրապետություն<sup>11</sup>:

---

<sup>1</sup>Նույն տեղում, 2.XII.1972, էջ 3, 24.III.1984, էջ 10: Նաև՝ *Իկիլիկյան Հ.*, Երեք շաբաթ Լատինական Ամերիկայում, Երևան, 1972, էջ 85-86: Վենեսուելա եկած հայերի ամենամեծ խումբը հունահայերն էին, տե՛ս ՀԱԱ, ֆ. 709, ց. 9, գ. 235, թ. 111:

<sup>2</sup>*Avakian A.*, *The Armenians in America*, Lerner Publications Company, Minneapolis, 1977, p. 47: Լոս Անջելեսում հունահայերը հաստատվեցին սկսած 1960-ական թթ.: Ըստ 2010թ. մարդահամարի՝ Հունաստանից Լոս Անջելես եկած հայերի թիվը 1725 էր, սակայն իրականում այդ թիվն ավելի մեծ է, տե՛ս *Գոսազեան Շ.*, Լոս Անձելըսի հայ համայնքի ժողովրդագրական պատկերը, Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, իմֆ. Ռ.Կարապետյան, Երևան, 2014, էջ 125-126: Համայնքի կրթական կյանքում դրական դեր ունեցան նաև ԱՄՆ տեղափոխված հունահայերը, որոնք Մերձավոր Արևելքից ու Իրանից եկած հայրենակիցների հետ նպաստեցին ամենօրյա վարժարանների ստեղծմանը, տե՛ս *Կապուտիկյան Ս.*, Խճանկար հոգու և քարտեզի գույներից, Երևան, 1976, էջ 267: ԱՄՆ-ում հաստատված առանձին հունահայ գործիչների մասին տե՛ս նույն տեղում, էջ 217, 220: Իսկ 1991թ. Լոս Անջելեսում հիմնվեց «Յունահայ միություն»:

<sup>3</sup>ՀԱԱ, ֆ. 709, ց. 5, գ. 16, թ. 2, ֆ. 875, ց. 4, գ. 54, թ. 14:

<sup>4</sup>Նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 548, թ. 1-2: Նաև՝ «Ազդակ», Բեյրութ, 18.IV.1964, էջ 3:

<sup>5</sup>«Զարթոնք», Բեյրութ, 29.V.1952, էջ 2, 28.V.1958, էջ 2: 1970թ. Ավստրալիայում Հունաստանից և Կիպրոսից եկած հայերի թիվը միասին 200 հոգի էր, տե՛ս ՀԱԱ, ֆ. 709, ց. 9, գ. 188, թ. 132:

<sup>6</sup>Նույն տեղում, ֆ. 875, ց. 13, գ. 66, թ. 1: Նաև՝ «Արարատ», Բեյրութ, 25.V.1958, էջ 3:

<sup>7</sup>*The Armenian community of Thessaloniki: History, present situation, and prospects*, in I. K. Hassiotis (ed.), Thessaloniki, 2005, p. 27: Նաև՝ *Կապուտիկյան Ս.*, Գույներ նույն խճանկարից, Երևան, 1989, էջ 13:

<sup>8</sup>«Ազդակ», Բեյրութ, 17.XI.1957, էջ 3: Նաև՝ «Արարատ», Բեյրութ, 10.XII.1957, էջ 3:

<sup>9</sup>Տե՛ս և, օրինակ, *Կապուտիկյան Ս.*, Գույներ նույն խճանկարից, էջ 556:

<sup>10</sup>*Հարությունյան Լ., Փաշայան Ա.*, Օոցի արաբական երկրների հայ համայնքները. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013, էջ 139:

<sup>11</sup>«Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 351:



Ընդհանրապես, Հունաստանից արտագաղթածների թվի վերաբերյալ առկա տեղեկություններն իրարամերժ են: Եթե ըստ Կ.Գևորգյանի՝ 1960թ. արտագաղթած հունահայերի թիվն ընդամենը մոտ հազար էր, ապա, ըստ հունահայ գործիչ Հարություն Սարաճյանի՝ միայն 1949-1950թթ. 9 հազար հունահայ արտագաղթել է «դեպի Հիւս. Ամերիկա, Արժանթին, Գանատա եւ Աւստրալիա»<sup>1</sup>: 1956թ. Հունաստանի Հայ Կաթողիկե եկեղեցու առաջնորդ Հովսեփ ծայրագույն վարդապետ Խանցյանը, իր հերթին, նշում է, որ Հարավային Ամերիկա և Կանադա մեկնածների թիվը մոտ 5000 է<sup>2</sup>: Թերևս, այս թիվն ավելի իրատեսական է:

### ***Արտագաղթի հետևանքները Հունաստանի հայ համայնքում***

Արտագաղթի հետևանքով նվազեց Հունաստանի հայ համայնքի թվաքանակը, ինչը, բնականաբար, բացասական նշանակություն ունեցավ ազգային կյանքի բոլոր ոլորտներում: Զանազան են արտագաղթի ընթացքում և դրա հետևանքով Հունաստանում մնացած հայերի թվաքանակի վերաբերյալ տվյալները: Այսպես, 1951թ. նշվում է 9 հազար թիվը<sup>3</sup>, արդեն 1954թ. դրությամբ Հունահայ ազգային կենտրոնական վարչության անցկացրած մարդահամարի տվյալներով՝ Հունաստանում ապրում էր 9650 հայ (3040 ընտանիք)<sup>4</sup>:

Ըստ Կ.Գևորգյանի՝ 1960թ. Հունաստանում մնացել էր 9635 հայ: Առաքելադավան հայերի թիվը հասնում էր 8685-ի: Հայ կա-

<sup>1</sup> «Հայրենիք», Բոստոն, 26.IX.1984, էջ 6:

<sup>2</sup> Նույն տեղում, 21.VIII.1956, էջ 3:

<sup>3</sup> «Հայրենիք», Բոստոն, 1951, թիվ 6, էջ 111:

<sup>4</sup> Նույն տեղում, 1955, թիվ 3, էջ 112:

թողիկների թիվը Հունաստանում կազմում էր 600, իսկ ավետարանականների թիվը՝ 350 հոգի<sup>1</sup>: Ըստ Ե.Խաթանասյանի՝ Հունաստանի հայերի թիվը 1965թ. ընդամենը 8 հազար էր<sup>2</sup>, արդեն 1972թ., ըստ Բ.Եղիայանի, այն հասել էր 12.250-ի<sup>3</sup>: Սալոնիկում հայրենադարձության և արտագաղթի հետևանքով հայերի թիվը պակասեց 5/6-ով<sup>4</sup>, այսինքն՝ շատ ավելի, քան ամբողջ Հունաստանի կտրվածքով: Եթե 1953թ. Սալոնիկի հայերի թիվը 1157 էր, ապա 1960-ական թթ. սկզբում՝ 1088: Հայերի նվազման հետևանքով 1960թ. փակվեց Սալոնիկի հայկական ամենօրյա դպրոցը<sup>5</sup>:

Հունահայ համայնքի մոտ 2/3-ով նվազելու հետևանքով ազգային կյանքն էապես փոխվեց՝ պակասեց աշակերտության թիվը, իսկ փոքրաթիվ համայնքներ ունեցող բնակավայրերում դպրոցները փակվեցին, դադարեցին գործել նաև մի շարք համայնքային կազմակերպություններ, ինչպես նաև որոշ եկեղեցիներ: Այնուամենայնիվ, բնակչության կտրուկ նվազումից հետո կատարվեց համայնքի կառույցների վերակազմակերպում<sup>6</sup>: 1951թ. «Հայրենիք» ամսագիրը գրում է, որ գաղութը, չնայած արտագաղթին, «կապրի խանդավառ շրջան մը»<sup>7</sup>:

Արտագաղթի հետևանքով գաղութը կորցրեց նաև մեծ

---

<sup>1</sup> *Գեորգեան Կ.*, Ամենուն տարեգիրքը 1960, Է. տարի, էջ 386, 391, 395: Համայնքի թվաքանակի մասին են խոսում նաև 1958թ. թեմական խորհրդի ընտրությունների տվյալները, որոնց մասնակցեց արձանագրված 6300 քվեարկողից 4200-ը, տե՛ս նույնի Ամենուն տարեգիրքը 1959, Զ. տարի, Պեյրութ, 1959, էջ 549:

<sup>2</sup> *Խաթանասեան Ե.*, Հայոց թիվը, Բոստոն, 1965, էջ 28:

<sup>3</sup> *Եղիայեան Բ.*, Ժամանակակից պատմություն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 894:

<sup>4</sup> *Գեորգեան Կ.*, Ամենուն տարեգիրքը 1960, Է. տարի, էջ 291:

<sup>5</sup> The Armenian community of Thessaloniki: History, present situation, and prospects, p. 27, 74.

<sup>6</sup> *Գեորգեան Կ.*, Ամենուն տարեգիրքը 1960, Է. տարի, էջ 291:

<sup>7</sup> «Հայրենիք», Բոստոն, 1951, թիվ 7, էջ 106:

թվով մտավորականների, ինչը, բնականաբար, բացասաբար ազդեց համայնքի հետագա զարգացման վրա<sup>1</sup>: Եթե 1957թ. երեք դպրոց էր գործում Աթենքում և Պիրեայում<sup>2</sup>, ապա 1972թ. Հունաստանում արդեն գործում էր 2 նախակրթարան՝ 270 աշակերտով<sup>3</sup>: Սա, առաջին հերթին, պայմանավորված էր հայերի ներգաղթով Հայաստան և Արևմուտք արտագաղթով, սակայն որոշ դեր ունեցավ նաև հայերի շարունակական ինտեգրացիան հունական հասարակությանը<sup>4</sup>, որին, իր հերթին, նպաստեց հայերի թվի նվազումը: XXդ. երկրորդ կեսին էապես ավելացան խառնամուսնությունները, իսկ հայերի միջև ամուսնության պարագայում հաճախ նրանցից մեկն այլ երկրի համայնքից էր<sup>5</sup>:

Հայրենադարձությունը և արտագաղթն ազդեցին նաև հունահայ ներքաղաքական կյանքի վրա. «Նօսրացաւ գաղութը, ներգաղթի կարաւանները Յունաստանէն հեռացուցին կարելոր համբանքով հակադաշնակցական բազմութիւններ, արտագաղթի խումբերն ալ դաշնակցականներէ բաղկացան, գլխավորաբար»<sup>6</sup>: Հայրենադարձության ժամանակ մեծ թվով հնչակյաններ հեռացան: Դրանից հետո Հունաստանում այդ կուսակցության, ինչպէս նաև ռամկավարների ներկայացուցիչները շատ սակավաթիվ էին<sup>7</sup>: Դա նպաստեց ՀՅԴ-ի կողմից գաղութի ղեկավարությունն իր ձեռքը վերցնելուն<sup>8</sup>:

<sup>1</sup> *Գեորգեան Կ.*, Ամէնուն տարեգիրքը 1960, Է. տարի, էջ 430:

<sup>2</sup> Նույնի՝ Ամէնուն տարեգիրքը 1957, Դ. տարի, Պէյրուս, 1956, էջ 273:

<sup>3</sup> *Եղիայեան Բ.*, նշվ. աշխ., էջ 896:

<sup>4</sup> The Armenian community of Thessaloniki: History, present situation, and prospects, p. 75.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 130, 132:

<sup>6</sup> *Գեորգեան Կ.*, Ամէնուն տարեգիրքը 1960, Է. տարի, էջ 426:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 426, 428:

<sup>8</sup> Նույնի՝ Ամէնուն տարեգիրքը 1957, Դ. տարի, էջ 253:

Հետաքրքիր է Հունաստանի հայ համայնքի համեմատությունը Բուլղարիայի և Ռումինիայի համայնքների հետ: Չնայած երեքի պարագայում էլ տեղի ունեցավ զգալի արտագաղթ, սակայն Հունաստանում, ի տարբերություն մյուս երկուսի, ազգային ակտիվ կյանքը շարունակվեց<sup>1</sup>: 1950-ական թթ. հունահայերը կարողացան աստիճանաբար բարելավել իրենց վիճակը, և արդեն այդ տասնամյակի վերջում հունահայ համայնքն ընդհանուր առմամբ տնտեսական միջին վիճակում էր<sup>2</sup>: 1960-ական թթ. երկրորդ կեսին հայերի արատագաղթի տեմպերը նվազեցին. «Այժմ արտասահման մեկնողներու թիվը չափազանց նվազած է: Եվ հավաքական գաղթեր գոյություն չունին անցյալի նման»<sup>3</sup>:

Ուշագրավ է, որ Հունաստանից հայերի զանգվածային արտագաղթին զուգահեռ՝ նկատվել է որոշ այլ սփյուռքահայ համայնքներից ներհոսք այս երկիր: 1950թ. սկսած՝ Հունաստան, առավելաբար՝ Աթենք, հայեր եկան Ստամբուլից, այնուհետև Եգիպտոսից և այլ երկրներից<sup>4</sup>: 1960-ական թթ. Հոմսից Հունաստան եկան նաև որոշ թվով սիրիահայեր<sup>5</sup>: Լիբանանի քաղաքացիական պատերազմի ժամանակ լիբանանահայերի որոշ մասը տեղափոխվեց Հունաստան<sup>6</sup>:

1980-ական թթ. կեսերին Հունաստան եկավ մոտ 4 հազար հայ՝ Լիբանանից, Իրանից և Իրաքից<sup>7</sup>: Սակայն մի մասն այստե-

---

<sup>1</sup> «Հայրենիք», Բոստոն, 17.1.1985, էջ 8:

<sup>2</sup> *Գեորգեան Կ.*, Ամենուն տարեգիրքը 1960, Է. տարի, էջ 437:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 121, թ. 1:

<sup>4</sup> «Ազդակ», Բեյրութ, 28.1.1972, էջ 6: Նաև՝ *Կապուտիկյան Ս.*, Քարավանները դեռ քայլում են, Երևան, 1964, էջ 467-468:

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 24, թ. 10:

<sup>6</sup> Նույն տեղում, ֆ. 1418, ց. 3, գ. 72, թ. 5:

<sup>7</sup> The Armenian community of Thessaloniki: History, present situation, and prospects, p. 27.

ղից մեկնեց Հյուսիսային Ամերիկա<sup>1</sup>: Բուն Հունաստանի հայ համայնքից արտագաղթ այդ շրջանում չէր նկատվում: 1980-ական թթ. Կիպրոսից, Սիրիայից, Լիբանանից, Իրաքից, Թուրքիայից, Իրանից գաղթած հայերն ակտիվորեն ընդգրկվեցին հունահայ համայնքի կյանքում, կարևոր դիրքեր գրավեցին ազգային հաստատություններում<sup>2</sup>: Ներգաղթի հետևանքով Հունաստանի հայ համայնքի թիվը բավական աճեց, և 1980-ական թթ. կեսին այն մոտ 15 հազար էր<sup>3</sup>:

### ***Հունահայերն Արգենտինայում***

Դեռ 1953թ. կանխատեսվում էր, որ Արգենտինա տեղափոխվող հունահայերը կարևոր դեր կունենան գաղութը թարմացնելու հարցում<sup>4</sup>: Եվ իրոք, 1947-1960թթ. հայերի (ոչ միայն հունահայերի) նոր գաղթն Արգենտինա նպաստեց հայկական կեսօրյա վարժարաններն ամենօրյայի վերածելուն, թաղային փոքր դպրոցները միավորվեցին ավելի մեծ և լավ կազմակերպվածների մեջ<sup>5</sup>: Նորեկներն աշխուժացրին համայնքի «տոհմիկ» դիմագիծը<sup>6</sup>:

Արգենտինայում Հայ Առաքելական եկեղեցու պաշտոնաթերթ «Հայ Կեդրոնը» 1965թ. գրում է. «...Անուրանալի է, վերջերս

<sup>1</sup> «Հայրենիք», Բոստոն, 26.IX.1984, էջ 6:

<sup>2</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 370:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 13, թ. 3: Նույն թիվը տե՛ս *Ոսկանյան Ա.*, Սփյուռքահայության թվական կազմը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, թիվ 9, էջ 48: Նույն ժամանակ հիշվում է նաև 14 հազար թիվը, տե՛ս *Брук С.*, Населения Мира. Этнодемографический сборник, Москва, 1986, с. 216.

<sup>4</sup> «Հայրենիք», Բոստոն, 1954, թիվ 1, էջ 108:

<sup>5</sup> *Մատթեոսեան Վ.*, Հարաւային կողմն աշխարհի. Հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչև 1950, էջ 316:

<sup>6</sup> Նույնի՝ Հայերը Արժանթինի մէջ (մեկնաբանութեան փորձ մը), «Ինքնության հարցեր» տարեգիրք, Երևան, 2002, էջ 128:

Յունաստանէն, Ռումինիայէն եւ Պոլիսէն դէպի Պ. Այրէս գաղթող հայրենակիցներու բերած շատ կարեւոր ազդեցութիւնը: Այդ նոր եկուորները, եթէ օգտուեացան գաղութի հին սերունդին առեստրական ասպարէզի մէջ ձեռք բերած անհուն փորձառութիւններէն եւ ունեցան անոնց աջակցութիւնը (ցուցմունքի տեսակէտով), անոր փոխարէն, սակայն, ներշնչեցին ազգային գետնի վրայ նորանոր նուաճումներ կատարելու խանդը»<sup>1</sup>:

1967թ. Կորդոբայի հայ համայնքի գործիչ Տիգրան Ասատուրյանը հունահայերի՝ արգենտինահայ համայնքային կյանքի վրա թողած դրական ազդեցության մասին գրում է. «Այս տարիներու մէջ Գորտոպա հայ գաղութ սիրով ընդունեց Յունաստանէն եկող հայ գաղթականներ, նոր եկող հայրենակիցներ ունէին բարձր հայկական մշակոյթ մը բաղդատմամբ Գորտոպա հին հայ գաղութի հետ: Անոնց ներկայութիւնը պատճառ էր որ նոր ու նոր խմբեր կազմուին, երգչախումբ, պարախումբ, ճարտարասէրներ, մարզական խումբեր: ...1950է մինչև 1960 տարիներու մէջ Գորտոպա հայ գաղութը ապրեցաւ իր կեանքի ամենափայլուն տարիները, Յունաստանէ նոր եկող հայեր, Գորտոպա հայ գաղութի մէջ նոր հասակ առնող հայկական հավատքով, հայ դպրոց ավարտող, մեծ փափաք ունէին գաղութիս ազգային կեանքը վերածել զուտ հայկական հայ երգերով, հայ պարերով եւ հայկական մշակոյթով, ու կապուիլ մայր հայրենիքի հետ: Այս էր նոր սերունդի երազն ու հավատքը, եւ այս մեծ յոյսերով մեծ գործեր ձեռնարկեցին»<sup>2</sup>:

---

<sup>1</sup>Նոյնի՝ Խրճիթներէն մինչև բազմայարկ շէնքեր. արժանթինահայ վարժարաններուն ծագումն ու զարգացումը, «Հայկազեան հայգիտական հանդէս», հ. ԻԸ, Պէյրուք, 2008, էջ 307-308:

<sup>2</sup>ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 185, թ. 6:

«Ազդակը» հունահայերի և այլ շրջաններից եկածների ունեցած դերի մասին գրում է. «Ճիշտ է, շնորհիվ Յունաստանին և այլ շրջաններէ ժամանող ազգայիններու մասամբ հետաքրքրութիւն արթնցաւ հայ կեանքի մէջ, բայց այդ ալ՝ ժամանակաւոր: Հիմա եկողներն ալ յոգնած կը թուին, տեսնելով իրենց շուրջը տեղ-քայլ ու տժգունած մտայնութիւններ»<sup>1</sup>:

Նորեկները հեշտությամբ գտնում էին աշխատանք, սակայն բնակարանների վարձերը շատ բարձր էին<sup>2</sup>: Նրանցից շատերը կուզենային հետ գնալ, եթէ վստահ լինեին, որ կկարողանան գործ վերսկսել Հունաստանում<sup>3</sup>: Իսկ ոմանք վերադարձան. «Մեկնողներէն շատեր զոջած են արդէն, եւ դժգոհութեան նամակներ կը գրեն: Վերադարձողներ ալ կան եւ պիտի ըլլան տակաւին: Անձնական նամակներ կը հաղորդեն, թէ մեծ է թիւը այն արտագաղթողներուն, որոնք Պուէնոս Այրէսի հելլէնական դեսպանատան սեմերը կը մաշեցնեն, վերադարձի արտօնութիւն ձեռք ձգելու համար»<sup>4</sup>:

Արգենտինայում հունահայերը շարունակում էին հաղորդակցվել հունական միջավայրին. «...արդէն փոքր գաղութ մը, յունահայերէ բաղկացած, աւելցած է Հարաւ. Ամերիկայի հայ «հին» գաղութին վրայ, վերջին քանի մը տարիներուն: Անոնք կը պահեն իրենց յիշատակները, ու գեղեցիկ երեւոյթ մըն է, որ Յունաստանի անկախութեան տարեդարձի օրը (Մարտ 25) յատուկ հանդէս կազմակերպուած է յունահայերու կողմէ՝ Պուէ-

<sup>1</sup> «Ազդակ», Բեյրութ, 12.II.1959, էջ 4:

<sup>2</sup> «The Armenian Review», 1950, No 1, p. 133: Նաև՝ «Հայրենիք», Բոստոն, 1950, թիվ 3, էջ 107:

<sup>3</sup> «Հայրենիք», Բոստոն, 17.I.1957, էջ 1:

<sup>4</sup> «Զարթոնք», Բեյրութ, 2.X.1952, էջ 3:

նոս-Այրէսի մէջ: Այս առթիւ, յունական եկեղեցիին կատարած գոհաբանական հանդէսին ներկայ եղած են նաեւ յունահայեր, եւ հայրապետ. նուիրակ Գեր. Տ. Սիոն եպիսկոպոս: Անոնք հրաւիրուած են նաեւ հելլէն դեսպանատան ընդունելութեան, այդ տօնին առթիւ»<sup>1</sup>:

### *Հունահայերը Կանադայում*

1962թ. հունահայ Գ.Պետրոսյանը Կանադա այցելելուց հետո նշում է. «Մոնթրէալի մեր գաղութը մէկ մանրանկարն է Յունահայ գաղութին, իր ազգային տաք շունչով, ու իր գործունէութեամբ»<sup>2</sup>:

Հունահայերն առավելաբար հաստատվեցին Մոնրեալի միննոյն թաղամասում՝ Outremont-ում և Park Avenue-ում: Դա պայմանավորված էր մի շարք հանգամանքներով. 1) այն բավական մոտ էր իրենց հիմնական հովանավորի՝ Ք.Պտուկյանի աշխատավայրին, որտեղ էլ նորեկներից շատերն աշխատում էին, 2) երբ կարճ ժամանակ առաջ հաստատվածներն իրենք էին դառնում նորեկների հովանավորներ, վերջիններս էլ բնակվում էին նրանց մոտակայքում, 3) այս տեղը շատ մոտ էր գտնվում Սբ Հակոբ եկեղեցուն<sup>3</sup>, որը համայնքային կյանքի կարևոր կենտրոններից էր, 4) այստեղ էին բնակվում նաև բազմաթիվ հույներ, ուստի այս առումով ևս այն նախընտրելի էր, 5) բնակվարձն այստեղ համեմատաբար ցածր էր, իսկ նորեկները, բնականա-

---

<sup>1</sup> «Հայրենիք», Բոստոն, 1953, թիվ 6, էջ 108:

<sup>2</sup> «Հայրենիք», Բոստոն, 1.VIII.1962, էջ 3:

<sup>3</sup> Մոնրեալի Սբ Հակոբ եկեղեցու համայնքը գերազանցապես բաղկացած էր հունահայերից, տե՛ս *Chichikian G.*, նշվ. աշխ., էջ 108-109:



բար, մեծ եկամուտներ չունեին, 6) հայերը և հույներն այստեղ ունեին սպասարկման ձեռնարկություններ, սա ևս նպաստավոր էր նորեկների համար<sup>1</sup>:

Նոր համայնքների ազգային կյանքին հունահայերի հաղորդած թարմության մասին Կ.Գևորգյանը գրում է. «Եթէ սակայն, յունահայ գաղութին համրանքը, նաեւ այս արտագաղթին հետեւանքով, բաւական մը պակսեցաւ եւ մանաւանդ երիտասարդ ուժեր հեռացան Աթէնքէն, Սելանիկէն եւ այլ շրջաններէ, միւս կողմէ, իրենց նոր բնակավայրերուն մէջ հաստատուածները, ազգային տեսակէտով թարմութիւն մը մտցուցին այդ հեռաւոր գաղութներու մէջ: Այժմ Մոնթրէալի հայ համայնքին մեծագոյն մասը կը բաղկանայ Յունահայերէ<sup>2</sup>, որոնք ամէն ճիգ կը թափեն ազգային հաւաքական կեանք ստեղծելու համար իրենց շրջապատին մէջ եւ ստեղծուածովն ալ յիշելու՝ յունահայ գաղութի նախապատերազմեան շրջանին խանդավառ օրերը»<sup>3</sup>:

Արտագաղթը բացասական նշանակություն ունեցավ Հունաստանի համայնքային կառույցների, օրինակ՝ ՀՅԴ կառույցի գործունեության վրա՝ կադրային պակաս առաջացնելու առումով<sup>4</sup>: Սակայն Հունաստանի նախկին գործիչներն ամրապնդեցին նոր երկրների համապատասխան կառույցները: Համաձայն Կանադայում ԽՍՀՄ դեսպան Հ.Հարությունյանի՝ 1961թ. Մոնթրէալի համայնքի ներկայացուցիչների հետ ունեցած զրույցների

<sup>1</sup>Նույն տեղում, էջ 61-62:

<sup>2</sup>ՀՄԸՄ ֆուտբոլի թիմը բաղկացած էր գլխավորապես Հունաստանից գաղթած հայ պատանիներից, տե՛ս նույն տեղում, էջ 119:

<sup>3</sup>Գէորգեան Կ., Ամէնուն տարեգիրքը 1960, Է. տարի, էջ 290:

<sup>4</sup>The Armenian community of Thessaloniki: History, present situation, and prospects, p. 87.

արդյունքում ստացված տվյալների, այստեղի ՀՅԴ գործիչների մեծամասնությունը Հունաստանից էր<sup>1</sup>:

Կանադայում հունահայերը զգալի թիվ էին կազմում ամբողջ հայ համայնքում: Մոնրեալի հայերի մասին խոսելիս Կ.Գևորգյանը ներկայացնում է 1960-1961թթ. վիճակագրությունը, որի համաձայն՝ այստեղի հայերի թիվը 912 էր: Հունահայերը նրանց մեջ ամենամեծաթիվն էին՝ 38,6%: Նրանց հաջորդում են Թուրքիայից (20,1), Եգիպտոսից (18,1), ԱՄՆ-ից (3), Ֆրանսիայից (1) եկածները, իսկ Կանադայում ծնվածները՝ ընդամենը 9,7%: Հունահայերը հիմնականում ընդգրկված էին Անթիլիասական թեմի մեջ<sup>2</sup>: 1959թ. «Հայրենիք» ամսագիրը գրում է, որ Մոնրեալում Հունաստանից և Եգիպտոսից գաղթածները (մոտ 600 հոգի) մեծամասնություն են<sup>3</sup>: Մերձավորարևելյան երկրներից հայերի զանգվածային ներհոսքի հետևանքով արդեն 1981թ. կանադական մարդահամարի տվյալներով Մոնրեալի հայերի միայն 3.2%-ն էր ծնվել Հունաստանում: Նրանք թվով զիջում էին Եգիպտոսում (23.6), Թուրքիայում (19.8), Կանադայում (16,4), Լիբանանում (15.8), Սիրիայում (10) և ԽՍՀՄ-ում (4.8) ծնվածներին<sup>4</sup>:

Կանադայում տարբեր տեղերից եկածները հաճախ սահմանափակվում էին էլքի նույն երկրից եկած հայրենակիցների

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 289, թ. 2: Հունահայ դաշնակցականներով համալրվեց նաև Արգենտինայի տեղի կառույցը, տե՛ս նույն տեղում, ֆ. 709, ց. 1, գ. 80, թ. 15: Ի դեպ, «Հայրենիքը» կարծիք էր հայտնում, որ հունահայերը, ԽՍՀՄ տեղահանված հայ անձանց հետ միասին, Արգենտինայում պիտի տեղի համայնքին ներկայացնեն «համայնավար վարչաձևի բարբարոսությունները», տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1955, թիվ 2, էջ 108:

<sup>2</sup> *Գեորգեան Կ.*, Ամենուն տարեգիրքը 1962, Թ. տարի, էջ 337:

<sup>3</sup> «Հայրենիք», Բոստոն, 1959, թիվ 10, էջ 111:

<sup>4</sup> *Chichekian G.*, նշվ. աշխ., էջ 54:

հետ համագործակցելով. «Եթէ միութիւններու մէջ, գործ մը պիտի ընեն մշակութային՝ եգիպտահայը եգիպտահայուն կը նայի եւ անոր համաձայն կը քուէարկէ... Յունահայը յունահայուն կը նայի եւ անոր համաձայն կը քուէարկէ: Դուրս ելան իրարու միս կուտեն, կը վիճին, կը վիճին... տարիներով..., կարծես թէ հայ չեն... Դադրած են հայ ըլլալէ...»<sup>1</sup>:

Հետաքրքիր է Եգիպտոսից Կանադա եկած հայերի համեմատությունը հունահայերի հետ: Նրանք ունեին ավելի լավ կրթություն, գիտեին անգլերեն կամ ֆրանսերեն (հաճախ երկուսն էլ), շատերը Եգիպտոսում ավելի բարվոք տնտեսական վիճակում էին եղել, քան Հունաստանի հայերը<sup>2</sup>: 1978թ. Կանադայում ԽՍՀՄ դեսպանատան տեղեկանքը ևս վկայում է, որ Եգիպտոսից և Լիբանանից եկող հայերն ավելի բարեկեցիկ կյանքով էին ապրում, քան Հունաստանից և Թուրքիայից եկածները<sup>3</sup>:

Ինչպէս Արգենտինայի պարագայում՝ որոշ հունահայեր գոչում էին Կանադա գալու համար: Այդ մասին նրանցից մեկը գրում է. «Աթէնքէն կուգան մեր հայերը, գիտեմ ո՛չ մէկը կը սիրէ հոս, բայց չեն գրեր ծանօթներուն մի՛ գաք, եթէ գրեն ալ, պիտի չհաւատան: Անգլերէն գիտցողներ ալ կուգան, բայց օֆիսի գործ չեն կրնար ունենալ, հոս ամէն մարդ անգլերէն գիտէ, եկողները ամենէն հասարակ գործերը կ'ընեն, բանուորութիւն, պնակ լսալ, չարաչար աշխատանք: Ըսելս, այս երկիրներուն անունը մեծ է ելած, մէկն ալ ես էի, ա՛խ Ամերիկա երթամ, Քանատա երթամ կ'ըսէի, հիմա տեսայ, կիները տունին մէջ, երիկ մարդիկ ալ

<sup>1</sup> Սփիւռքահայութեան հոգեբանական հոլովոյթը եւ հայ դատը, Գահիրէ, 1980, էջ 38:

<sup>2</sup> *Chichekian G.*, նշվ. աշխ., էջ 63:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 8, գ. 37, թ. 4:

Ֆեթտըրիները կը մաշին: Երանի ելած չըլլար այս Քանատայի մօտան, աղքատ կամ հարուստ Յունաստան վարժուեր էինք, հիմա տարիքս ալ յառաջացաւ, իւելքերն ալ աւելի իւելօք կը մտածեն: ...Վերջապէս այն մարդը որ Աթէնքի մէջ քիչ մը լաւ գործ ունի և կ'ապրուի, շատ կը գոջայ հոս գալով»<sup>1</sup>:

Այսպիսով, Հունաստանից հայերի արտագաղթը XXդ. երկրորդ կէսին տեղի ուենցած Սփյուռքի ներքին տեղաշարժերի բաղկացուցիչ մասն է կազմում: Հունահայերը կարևոր դեր կատարեցին մի շարք երկրների հայկական համայնքների ազգային կյանքին թարմություն հաղորդելու առումով, իսկ որոշ դեպքերում էլ նպաստեցին նոր ձևավորվող հայկական համայնքների կայացմանը: Չնայած արտագաղթը նկատելիորեն թուլացրեց Հունաստանի հայկական համայնքը, սակայն ազգային կյանքն այստեղ շարունակվեց, ինչին նպաստեց նաև այլ երկրներից հայերի ներհոսքը, հատկապէս սկսած 1980-ական թվականներից:

---

<sup>1</sup> «Ազդակ», Բեյրութ, 17.II.1959, էջ 4:

## ԱՐՏԱԳԱՂԹԸ ՌՌԻՄԻՆԻԱՅԻՑ

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Ռուսինիայում տեղի ունեցած քաղաքական ու տնտեսական վճռորոշ զարգացումներն ուղղակիորեն ազդեցին նաև տեղի հայ համայնքի վրա: Կոմունիստական վարչակարգի հաստատման հետևանքով համայնքային կյանքի կազմակերպման պայմանները խստորեն բարդացան, գրեթե վերացան: Ստեղծված դժվարին դրության հետևանքով արդեն 1945թ. ծայր առած արտագաղթը չդադարեց հաջորդ տարիներին և նոր թափով շարունակվեց 1950-ական թթ. վերջից, երբ գաղթողների հիմնական ուղղությունը դարձավ ԱՄՆ-ը, մինչդեռ գաղթականների առաջին ալիքը մեկնում էր Հարավային Ամերիկա:

Երկրորդ աշխարհամարտի ավարտին Ռուսինիայում ապրող հայերի թվի վերաբերյալ առկա են մի շարք իրարամերժ տվյալներ: 1944-1946թթ. համար տարբեր աղբյուրներում հանդիպում ենք 10 հազար<sup>1</sup>, 20 հազար<sup>2</sup>, 25 հազար<sup>3</sup>, 30 հազար<sup>4</sup>, 40 հազար<sup>5</sup> թվերին: Հայերի թիվն ավելի հստակ և քիչ է ստացվում,

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 10, թ. 1:

<sup>2</sup> Որից 12-13 հազարը Բուխարեստում, տե՛ս նույն տեղում, ֆ. 709, ց. 1, գ. 31, թ. 4:

<sup>3</sup> Ռուսինիայի Հայկական միացյալ կազմակերպությունների նախագահության հաղորդած տվյալները, տե՛ս «Էջմիածին», 1944, թիվ 10-12, էջ 14: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 89, թ. 20, ֆ. 709, ց. 1, գ. 51, թ. 41: Նաև *Գասպարյան Ս.*, Մփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962, էջ 205:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 82, թ. 6:

<sup>5</sup> ՀԽՍՀ արտգործժողկոմատի քաղաքական ինֆորմացիայի բաժնի 1945թ. տեղեկանքում տարանջատվում էր հայերի երկու խումբ. Ռուսինիայի հայերի թիվը 40 հազար էր, որից 15 հազարը՝ հարյուրամյակներ առաջ այստեղ հաստատված հայերի ժառանգներն էին, տե՛ս նույն տեղում, գ. 46, թ. 5:

երբ մոտավոր թվեր ներկայացնելու փոխարեն փորձում ենք սահմանել նրանց տեղաբաշխվածությունն ըստ բնակավայրերի: Այսպես՝ Բուխարեստում ապրում էր 12-14 հազար հայ, Կոնստանցայում՝ 2670, Գալացում՝ 400: Հայության մնացած հատվածը ցրված էր Ռումինիայի բազմաթիվ բնակավայրերում: Հայերի 93%-ը քաղաքացիություն չունեին. ուներ նանսենյան անձնագրեր և զրկված էր աշխատանքի ու սեփականության իրավունքից: Նրանց սոցիալական դրությունը, որպես կանոն, բավական ծանր էր<sup>1</sup>:

ԱՕԿՍ-ի տեղեկանքի համաձայն՝ 1945թ. 25 հազարանոց համայնքն ուներ զբաղվածության հետևյալ պատկերը. 55%-ը՝ արհեստավորներ (հիմնականում կոշկակարներ), 40%-ը՝ առևտրականներ, 5%-ը՝ մտավորականներ (լրագրողներ, բժիշկներ, ուսուցիչներ, ճարտարագետներ)<sup>2</sup>:

Պատերազմից հետո հայերի սոցիալական վիճակը զգալիորեն վատթարացավ, ու համայնքում նկատելի դարձան արտագաղթի միտումներ<sup>3</sup>, ինչին, անշուշտ, նպաստեց ազգային գործիչների (հատկապես դաշնակցականների) հալածանքը: Ռումինահայերի արտագաղթը կարելի է բաժանել երկու փուլի՝ 1) 1945-1950-ական թթ. կեսեր, 2) 1950-ական թթ. վերջ-1970-ական թթ.: Առաջին փուլում գաղթում էին սեփական նախաձեռնությամբ, առավելաբար դեպի Հարավային Ամերիկա<sup>4</sup>: Երկրորդ

---

<sup>1</sup>Նույն տեղում, գ. 83, թ. 12-13:

<sup>2</sup>Նույն տեղում, գ. 89, թ. 20:

<sup>3</sup>Նույն տեղում, թ. 21:

<sup>4</sup>Դեպի Հարավային Ամերիկա Ռումինիայից և Բուլղարիայից հայերի գաղթը դադարեց միայն 1960-ական թթ., տե՛ս *Дятлов В., Мелкоян Э., Армянская диаспора: очерки социокультурной типологии, Ереван, 2009, с. 75.*

փուլում արտագաղթի կազմակերպիչը դարձավ ԱՆՉԱ-ն, որի միջոցով գաղթող ռումինահայերի բացարձակ մեծամասնությունը հաստատվեց ԱՄՆ-ում:

Այսպես, 1945-1948թթ. համեմատաբար բարվոք վիճակում գտնվող 500 ռումինահայ արտագաղթեց տարբեր երկրներ<sup>1</sup>: Ըստ Արգենտինայում ԽՍՀՄ դեսպանության կցորդի տեղեկանքի՝ 1945-1958թթ. Ռումինիայից զգալի թվով հայեր են տեղափոխվել Արգենտինա<sup>2</sup>: Միայն 1952-1953թթ. Ռումինիայից և Բուլղարիայից այստեղ է եկել մոտ հազար հայ<sup>3</sup>: Որոշ թվով ռումինահայեր էլ բնակություն հաստատեցին Վենեսուելայում<sup>4</sup> և Ուրուգվայում<sup>5</sup>: Կա նույնիսկ Հարավաֆրիկյան Միություն 1948թ. տեղափոխվելու դեպք<sup>6</sup>: Միաժամանակ, 1946-1948թթ. Ռումինիայից Խորհրդային Հայաստան եկավ 2784 հոգի<sup>7</sup>:

Ռումինիայից հայերի արտագաղթի հարցում, բացի սոցիալ-տնտեսական դժվարություններից, առանցքային նշանակություն ունեն ռումինական իշխանությունների վարած ազգա-

<sup>1</sup> *Գալփագեան Յ.*, Ռումանահայ գաղութը, Երուսաղեմ, 1979, էջ 314:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 270, թ. 1: Հենց այս ժամանակ է նաև Արգենտինա մեկնել դեռևս 1947թ. Ռումինիայում ձերբակալված ՀՅԴ նշանավոր գործիչ Հովհաննես Դևեջյանը, որն ազատվելով բանտից (ք. Վլադիմիր)՝ 1956թ. տեղափոխվել է Բուենոս Այրես, որտեղ արդեն հաստատվել էր նրա ընտանիքը: Արգենտինայում նա դարձավ ամենանշանավոր համայնքային, ազգային գործիչներից մեկը՝ խմբագրելով «Արմենիա» օրաթերթը և զբաղեցնելով Խրիմյան վարժարանի տնօրենի պաշտոնը:

<sup>3</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 100:

<sup>4</sup> *Դալլաքյան Գ.*, Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004, էջ 282:

<sup>5</sup> «Զարթոնք», Բեյրութ, 11.VI.1955, էջ 2: 1946-1957թթ. Բալկաններից, Ֆրանսիայից ու Միջին Արևելքից Ուրուգվայ տեղափոխվեց ավելի քան 530 հայ, տե՛ս *Մատթեոսեան Վ.*, Հարավային կողմն աշխարհի. Հայերը Լատին Ամերիկայի մեջ սկիզբ են մինչև 1950, էջ 273:

<sup>6</sup> «Զարթոնք», Բեյրութ, 27.VIII.1981, էջ 2:

<sup>7</sup> *Մելիքսեթյան Հ.*, նշվ. աշխ., էջ 241:

յին քաղաքականությունը: Այդ մասին 1990 թվականից Ռումինիայի Հայերի միության նախագահ Վարուժան Ոսկանյանը նշում է. «Պատերազմից հետո բոլոր կուսակցությունները դադարեցին գործել, և ստեղծվեց մի ճակատ, որի անունն էր «Շահումյան»: Բայց 1950 թվականին թե՛ այդ ճակատը և թե՛ հայկական դպրոցը, որը մինչ այդ գործում էր, փակվեցին: 1950-1990 թվականներին Ռումինիայում ոչ մի հայկական կազմակերպություն չի գործել: Մենք հայ ենք մնացել և պահպանել մեր ազգային ինքնությունը միայն Հայ Առաքելական եկեղեցու շնորհիվ»<sup>1</sup>:

1949թ. «Սովետական Հայաստան» ամսագիրը ավետում էր, որ «...բոլոր քաղաքացիները օգտվում են ազատության այն բարիքներից, որ նվաճել է ռումինական դեմոկրատիան՝ Անտոնեսկուի արյունալի դիկտատուրան տապալելու և միապետությունը վերացնելու հետևանքով: Ժողովրդա-դեմոկրատական Ռումինիայում ազգային փոքրամասնությունների դպրոցներն ու մամուլը շրջապատված են պետության հոգատարությամբ»<sup>2</sup>: Իրականում եղավ ճիշտ հակառակը: Ռումինիայում, ինչպես և Բուլղարիայում, հասարակարգի փոփոխությունից հետո հայերը հանդիպեցին թե՛ ազգային ճնշումների, թե՛ տնտեսական դժվարությունների<sup>3</sup>:

Ըստ Կ.Դալլաքյանի՝ հայերի դեմ այս քաղաքականությունը պայմանավորված էր նաև Ռումինիայի և ԽՍՀՄ-ի միջև հակասություններով, որոնց պատճառով էլ Ռումինիայի պետական պաշտոնյաները հայությանը դիտում էին իբրև անվստահելի

---

<sup>1</sup> *Սաստրյան Հ.*, Ռումինիայի հայերը. պատմություն, ներկա, ապագա, «Օրեր», Պրահա, 30 հոկտեմբերի, 2015, <http://goo.gl/WRqD6z>

<sup>2</sup> «Սովետական Հայաստան», Երևան, 1949, թիվ 9, էջ 22:

<sup>3</sup> «Հայրենիք», Բոստոն, 1951, թիվ 1, էջ 96:



տարր: Ուժացման թիրախում էին ոչ միայն հայերը, այլև, օրինակ, հունգարացիները: Նրանց դեմ Տրանսիլվանիայում<sup>1</sup> իրականացված գործողությունների պատճառով մեծապես տուժեցին նաև հայերը<sup>2</sup>: Էթնիկ փոքրամասնությունների համայնքային գործունեությունը, փաստորեն, կանգ առավ<sup>3</sup>: Կոմունիստական վարչակարգի կառավարման ժամանակաշրջանում Ռումինիան լքում էին ոչ միայն հայերը, այլև մյուս ազգային փոքրամասնությունները՝ հրեաները, գերմանացիները, հունգարացիները<sup>4</sup>:

Ռումինիայում 2010 թվականից ՀՀ դեսպան Համլետ Գասպարյանն այդ ժամանակաշրջանի ռումինական իշխանությունների որդեգրած ազգային քաղաքականության ու այդ երկրից արտագաղթի մասին նշում է. «Կոմունիստական վարչակարգը մեծ վնասներ է պատճառել համայնքին. փակել է միություններն ու համայնքային հաստատությունները, իսկ համայնքային ունեցվածքն ու կալվածքները, ունեզրկել հարուստներին, որոնց մեծ մասը լքել է երկիրը, սահմանափակել է եկեղեցու գործունեությունը: Համայնքը նվազել է, թուլացել ու մեկուսացել»<sup>5</sup>:

Մինչդեռ խորհրդահայ պատմագրությունն այս քաղաքականությունը համարում էր ազգային հարցի լավագույն լուծում: Ս.Գասպարյանն այդ մասին գրում է. «Ռումինահայերի այժմյան վիճակին ծանոթացող յուրաքանչյուր անկողմնակալ մարդ հեշ-

<sup>1</sup> Երկրորդ աշխարհամարտի ժամանակ մոտ 10 հազար հայ Տրանսիլվանիայից տեղափոխվեց Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտ, տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1.IX.1969, էջ 2:

<sup>2</sup> *Դալլարյան Կ.*, նշվ. աշխ., էջ 250:

<sup>3</sup> *Дятлов В., Мелконян Э.*, նշվ. աշխ., էջ 61:

<sup>4</sup> *Horvath I.*, Romania. Country Profile No. 9, Focus-Migration, 2007, <http://focus-migration.hwwi.de/Romania.2515.0.html?&L=1>

<sup>5</sup> *Սասարյան Հ.*, նշվ. աշխ.:

տությամբ կարող է տեսնել ժողովրդա-դեմոկրատական կարգի մեծագույն նվաճումներից մեկը՝ ազգային հարցի լուծումը: Դա մի անգամ ևս գալիս է հաստատելու այն մեծ ճշմարտությունը, որ միայն սոցիալիզմը կարող է վերջ տալ ազգային փոքրամասնությունների իրավագուրկ ու արհամարհված վիճակին, տրամադրել նրանց նոր, սոցիալիստական դեմոկրատիայի բոլոր առավելությունները և ապահովել նրանց ֆիզիկական ու մտավոր կարողությունների անսահմանափակ զարգացումը»<sup>1</sup>: Իսկ ՌԱԿ կուսակցության նշանավոր գործիչներից Անդրանիկ Անդրեասյանը Ռուսինիայի և Բուլղարիայի հայ համայնքների վերաբերյալ գրում է. «...ամբողջ արտասահմանի մեջ ամենէն նպաստաւոր պայմաններու բացառիկ շնորհը կը վայելէն անոնք: Որովհետեւ, ինչպէս Ս.Միութեան երկիրներուն, նոյնպէս համայնավար Ռուսինիոյ եւ Պուլկարիոյ սահմանադրութիւնը կ'երաշխաւորէ ազգային որեւէ փոքրամասնութեան անկապտելի իրաւունքը, բանալու եւ վարելու սեփական դպրոցները, իր նորահաս սերունդներուն տոհմային դաստիարակութիւն ջամբելու համար»<sup>2</sup>: Դրան հակառակ՝ Լիբանանում ԽՍՀՄ դեսպանատան կցորդ Ն.Ավետյանի հետ 1966թ. հունիսին կայացած զրույցում «Նոր կյանք» ամսագրի խմբագիր Մանուել Ղազանջանը Բուլղարիայի և Ռուսինիայի հայերի գաղթի պատճառը համարում էր հայկական համայնքային կառույցների փակումը<sup>3</sup>:

Ռուսինահայերի իրական տրամադրությունների մասին խորհրդային իշխանություններին տեղեկացնում էին համայնքի

<sup>1</sup> *Գասպարյան Ս.*, նշվ. աշխ., 1962, էջ 206:

<sup>2</sup> *Անդրեասեան Ս.*, Սփիւռքը եւ հայրենիքը (Տպաւորութիւններ եւ դատումներ), Պէյրութ, 1962, էջ 44-47-48:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 388, թ. 1-2:

այն անդամները, ովքեր դեմ էին արտագաղթին: 1961թ. ռումինահայ Օ.Փոլատյանը ԱՕԿՄ-ի նախագահության նախագահ Բ.Գրիգորյանին գրում է ռումինահայ համայնքի ծանր դրության մասին՝ ընդգծելով, թե հայ համայնքի համար ինչ բացասական նշանակություն ունեցավ Ռումինիայում սոցիալիստական կարգերի հաստատումը. «Շաղոնց ծայր տված արտագաղթը դեպի արևմուտք, վրդովիչ կերպով շեշտված ժամանակե մը ի վեր այնքան զգալիորեն դատարկած է քաղաքը, որ հասարակական կարիքներու համար, վերև հիշատակված ճոխ և գեղեցիկ հիմնարկները, ցանցառ կերպով հաճախող ազգայիններու համար «չափազանց շատ նկատվելով», պետական ոտնձգության սկսած են զոհ երթալ»<sup>1</sup>:

Ռումինիայի նման քաղաքականությունը հայության արտագաղթի հիմնական պատճառը դարձավ, որի հետևանքով 1950-ական թթ. վերջին Ռումինիայում մնացել էր ընդամենը 12 հազար հայ<sup>2</sup> (5 հազարը՝ Բուխարեստում և շրջակայքում, 3 հազարը՝ Կոնստանցայում, 800-ը՝ Գալացում, 500-ը՝ Բոտոշայում, 450-ը՝ Ֆոկշանում, 400-ը՝ Յասսիում, 400-ը՝ Ռումանում, 300-ը՝ Տուլչայում, մոտ 1000-ը՝ այլ բնակավայրերում)<sup>3</sup>:

<sup>1</sup>Նույն տեղում, ֆ. 709, ց. 3, գ. 133, թ. 42:

<sup>2</sup>Նույն թիվը 1960-ական թթ. սկզբում տե՛ս *Խորշուղյան Լ.*, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից Էտապում, Երևան, 1964, էջ 21: Ըստ Ռումինիայում ԽՍՀՄ դեսպանության առաջին քարտուղարի 1960թ. «Ռումինիայում ապրող հայերի մասին» տեղեկանքի՝ Ռումինիայի հայերի թիվը 11 հազար էր, տե՛ս *ՀԱՄ*, ֆ. 326, ց. 1, գ. 285, թ. 2: Ըստ Ստ. Շահումյանի անվան տան դեկավար Տեր-Գրիգորյանի՝ 1958թ. Ռումինիայի հայերի թիվը 8 հազար էր, տե՛ս նույն տեղում, գ. 252, թ. 2:

<sup>3</sup>«Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 442: 1962թ. Ս.Գասպարյանը նշում է տեղաբաշխման գրեթե նույն թվերը, տե՛ս *Գասպարյան Ս.*, նշվ. աշխ., էջ 205: 1957թ. Բոտոշանում ապրում էր 40, Մուլավայում՝ 25-30 հայ ընտանիք, տե՛ս «Արարատ», Բեյրութ, 4.VII.1957, էջ 3:

Ռումինահայերի արտագաղթի երկրորդ փուլի առանձնահատկությունը պայմանավորված էր պետական քաղաքականության փոփոխությամբ: 1948-1956թթ. ռումինական իշխանությունները դժվարացրին երկրից դուրս գալու հնարավորությունները՝ նույնիսկ արտասահմանյան քաղաքացիների և նանսենյան անձնագիր ունեցողների համար: Չնայած ռումինական իշխանությունների հարուցած դժվարություններին՝ 1956թ. սկսած բազում հայեր դիմեցին մեկնելու թույլտվության համար՝ հաճախ ընտանիքների վերամիավորման պատրվակով, և աստիճանաբար շատերին իրավունք տրվեց լքել երկիրը<sup>1</sup>: Մինչև հեռանալը գաղթողները պարտավոր էին իրենց տները հանձնել պետությանը, իսկ իրենց հետ կարող էին վերցնել մինչև 75 կիլոգրամ ապրանք՝ իրավունք չունենալով տանել փող, ոսկեդեղն և արժեքավոր առարկաներ: Ելքի վիզա ձեռք բերելուց հետո մեկնողները ստանում էին Լիբանան մուտք գործելու թույլտվություն արդեն Լիբանանում հաստատված միգրանտների կամ լիբանանահայերի միջնորդությամբ<sup>2</sup>:

1958թ. ԱՆՉԱ-ի նախագահ Ջորջ Մարտիկյանն ու փոխնախագահ Սուրեն Սարոյանն այցելեցին Լիբանան, որտեղ վերջինս հանդիպեց Ռումինիայից, Բուլղարիայից և Պաղեստինից եկած հայերի հետ՝ միջոցներ ձեռնարկելով նրանց ԱՄՆ տեղափոխելու ուղղությամբ<sup>3</sup>: 1959թ. սկզբին Ջ.Մարտիկյանը կրկին

---

<sup>1</sup> Zadoian H., Our Brothers' Keepers: The American National Committee to Aid Homeless Armenians (ANCHA), New York, 2012, p. 62.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 63: Մինչև 1965թ., երբ հնարավոր դարձավ Բուխարեստից օդանավով թռչել Բեյրութ, հայերը Ռումինիայից Լիբանան մեկնում էին նավերով:

<sup>3</sup> «Հայրենիք», Բոստոն, 1958, թիվ 9, էջ 109:

այցելեց Լիբանան՝ զբաղվելու տեղում հաստատված ռումինահայերին և բուլղարահայերին ԱՄՆ տեղափոխելու խնդրով<sup>1</sup>:

Ռումինահայերի արտագաղթելու ցանկության մասին այդ օրերին «Հայրենիք» թերթում կարդում ենք. «... Ռումանիոյ մեջ մնացողներն ալ կերագեն ազատ աշխարհը:

Մարդիկ պատրաստ են մէկ շապիկով դուրս գալու կարմիր «դրախտ»էն: Կը բաւէ միայն որ ունենան ազատութիւն»<sup>2</sup>: Ոմանք գաղթում էին քաղաքական պատճառներով, իսկ ոմանք էլ՝ ձգտելով ավելի մեծ տնտեսական հնարավորություններին<sup>3</sup>:

1961թ. խոսելով հայերի արտագաղթի մասին՝ Օ.Փոլատյանը Բ.Գրիգորյանին ուղղված նամակում նշում է. «Հին ու նոր, այր թե կին, դաշնակներու համար օրվան ամենամեծ զբաղումն է, ի ձայն փողոց և թմբուկի հանձնարարել շվարուն ազգայնոց շտապել դեպի Բեյրութ... Ունևորներ, որոնք լքելով տարիներու քրտնաջան աշխատանքով կուտակված իրենց կայքն ու կալվածքը տեղուն վերամերկացված վիճակին մեջ միմիայն 75 կիլո ինչքով և զգեստեղենով ինքզինքն կնետեն երկրին սահմաններէն դուրս, ոչ այնքան փրկվելու համար, որը տարակուսելի է, որքան ազատ շունչ քաշելու համար»<sup>4</sup>: Մինչդեռ 1965թ. ՀԽՍՀ Արտաքին գործերի մինիստրությունը ռումինահայերի հայրենադարձության կազմակերպումը համարում էր աննպատակահարմար<sup>5</sup>՝ փաստորեն ոչ մի իրական քայլ չկատարելով

<sup>1</sup>Նույն տեղում, 1959, թիվ 4, էջ 112:

<sup>2</sup>«Հայրենիք», Բոստոն, 17.IV.1960, էջ 2:

<sup>3</sup>Zadoian H., նշվ. աշխ., էջ 64:

<sup>4</sup>ՀԱԱ, ֆ. 709, ց. 3, գ. 133, թ. 43-45:

<sup>5</sup>Նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 101, թ. 1: 1962-1982թթ. Ռումինիայից հայրենադարձվեց ընդամենը երկու հոգի, տե՛ս Մելիքսեթյան Հ., նշվ. աշխ., էջ 301:

«Արևմուտքում ռումինահայերին սպասող անխուսափելի ձուլումը» կանխելու համար:

Մ.Ղազանյանը նշում է, որ երկիրը լքել ցանկացող ռումինահայերը և բուլղարահայերը դիմում էին խորհրդային կառավարությանը հայրենադարձության խնդրանքով, սակայն մերժվելուց հետո՝ որոշում տեղափոխվել հայկական համայնքներ ունեցող երկրներ: ԱՄՆ և Կանադա մեկնելու համար Լիբանան եկած ռումինահայերի և բուլղարահայերի մեծամասնությունը բավական դժվար սոցիալական դրության մեջ էր, քանի որ ԱՆՉԱ-ն չէր կարողանում լուծել բոլորի կեցության, սննդի ու աշխատանքի տեղավորման հարցերը: Նրանք կցանկանային հայրենադարձվել, սակայն Լիբանանից նախատեսված չէր, իսկ անհատական կարգով Հայաստան տեղափոխվելու համար չափազանց երկար պիտի սպասեին, ուստի չէին էլ փորձում դիմել ԽՍՀՄ դեսպանությանը<sup>1</sup>: Բեյրութ եկող ռումինահայերը հիմնականում հաստատվում էին Բուրջ Համուդում, որոշ մասն էլ ցրվում էր քաղաքով մեկ: Ռումինահայերը միմյանց օգնում էին հաղթահարելու առկա դժվարությունները<sup>2</sup>, ԱՄՆ էին տեղափոխվում ոչ միայն Բեյրութից, այլև Իտալիայից<sup>3</sup> և Հունաստանից<sup>4</sup>:

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 388, թ. 1-2:

<sup>2</sup> *Zadoian H.*, նշվ. աշխ., էջ 69:

<sup>3</sup> «Հայրենիք», Բոստոն, 29.VII.1956, էջ 2:

<sup>4</sup> 1960թ. հունական կառավարությունը հաստատեց Ռումինիայից Հունաստան եկած հայ և հույն գաղթականների համար բնակարանների կառուցման ՄԱԿ ծրագիրը, որի ծախսը հասնում է 87 մլն դրախմայի (1.210.000 դրախման վճարելու էր ԱՄՆ-ը, իսկ 1.139.000-ը՝ Գալուստ Կյուլպենկյան հաստատությունը): Բնակարանները պիտի կառուցվեին Սալոնիկում, Պիրեայում և Գավալայում, տե՛ս նույն տեղում, 17.VI.1960, էջ 3:

1960թ. մայիսի 20-ին ԱՆՉԱ-ի ներկայացուցիչ Ս.Սարոյանը ռումինահայ և բուլղարահայ տարագիրների խնդիրներով զբաղվելու համար այցելեց Բեյրութ, ինչպես նաև Փարիզ, Աթենք, Կահիրե և այլ քաղաքներ<sup>1</sup>: 1961թ. Ռումինիայից և Բուլղարիայից ԱՄՆ տեղափոխվեց 350 հայ<sup>2</sup>: Ջ.Մարտիկյանի ջանքերով 1962թ. մոտ մեկ տարով երկարաձգված օրենքով հնարավոր դարձավ Լիբանանում հաստատված հայ գաղթականների մուտքը ԱՄՆ<sup>3</sup>, ինչի հետևանքով, ըստ նրա, 1963թ. ապրիլի դրությամբ «երկաթե վարագոյրի երկիրներեն» Լիբանանով ԱՄՆ էր տեղափոխվել մոտ 900 գաղթական, որոնք «սքանչելի դիրք մը սկսած են գրաւել, իրենց կենցաղով, աշխատասիրութեամբ և պարտաճանաչութեամբ»<sup>4</sup>:

Լիբանանում ԽՍՀՄ դեսպանության 1967թ. տեղեկանքի համաձայն՝ 1964-1966թթ. Ռումինիայից և Բուլղարիայից Լիբանան եկած հայերը, որոնք ԱՆՉԱ-ի միջոցով պիտի ԱՄՆ մեկնեին, դեռևս չէին լքել երկիրը: Կառավարությունն արգելել էր այդ երկրներից հայերի նոր խմբերի մուտքը՝ մինչև Լիբանանում գտնվողները չհեռանան<sup>5</sup>: Ռումինիայից և Բուլղարիայից հայերի հեռանալը հանդիպադրվում էր Լիբանանից արտագաղթին. «Այսպես, ինչ որ ներելի է Ռումանիայեն, Պուկարիայեն դեպի Հարաւային Ամերիկա գաղթել փորձողներուն, ներելի պիտի չըլլար Լիբանանէն հեռանալ ուզող ազգայիններուն համար: ...Ռումանիա, Պուկարիա կը հաշուին Երկաթե վարագոյրին

<sup>1</sup> *Գեորգեան Կ.*, Ամէնուն տարեգիրքը 1961, Ը. տարի, Պէյրութ, 1960, էջ 561:

<sup>2</sup> Նույնի՝ Ամէնուն տարեգիրքը 1962, Թ. տարի, էջ 428:

<sup>3</sup> «Ազդակ», Բեյրութ, 3.IV.1962, էջ 3:

<sup>4</sup> Նույն տեղում, 4.IV.1963, էջ 2:

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 398, թ. 8:

ետին գտնուող երկիրներ, ուր կան քաղաքական կաշկանդումներու զուգահեռ տնտեսական սեղմումներ եւս, բայց նման ոչինչ կայ Լիբանանի մէջ»<sup>1</sup>: «Հայրենիք» թերթն էլ հակադրում էր հայրենադարձությունը և գաղթը Արևմուտք. «Հայրենադարձի առիթով շատերու մեկնումը ոչ միայն կորուստ մը չէ, այլեւ շահ մըն է ազգային առումով, սակայն անոնք որ նկատելի համբանքով դէպի արեւմուտք (մասնաւորաբար Միաց. Նահանգներ) փոխադրուեցան՝ ոչ միայն թուական կորուստի մատնեցին իրենց նախկին գաղութները, այլեւ չունին այն ապահովութիւնը որ իրենց զաւակներն ու թոռները պիտի ուզեն եւ կարենան մայրերու կամ հայրերու ճամբէն քալել, մօտաւոր ապագային...»<sup>2</sup>:

1960-1970-ական թթ. ռումինահայերն արտագաղթի երկրորդ փուլի ընթացքում տեղափոխվում էին ոչ միայն ԱՄՆ, այլև Կանադա<sup>3</sup>, Ավստրալիա<sup>4</sup>, Նոր Զելանդիա<sup>5</sup>, Հարավային Ամերիկա, Լիբանան, Ավստրիա<sup>6</sup> և այլ երկրներ<sup>7</sup>:

1965թ. Ռումինիայի իշխանությունները որոշում ընդունեցին՝ դժվարացնելու հայերի գաղթը կապիտալիստական երկրներ (այդ պարագայում գանձվող տուրքը հինգ անգամ գերազանցում էր սոցիալիստական ճամբար մեկնողներինը): Շատ

---

<sup>1</sup> «Ազդակ», Բեյրութ, 11.X.1965, էջ 2:

<sup>2</sup> «Հայրենիք», Բոստոն, 17.I.1985, էջ 2:

<sup>3</sup> *Սաստրյան Հ.*, նշվ. աշխ.: Տէ՛ս նաև *Կապուտիկյան Ս.*, Խճանկար հոգու և քարտեզի գույներից, էջ 33: Նաև՝ «Զարթօնք», Բեյրութ, 28.VI.1978, էջ 3:

<sup>4</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 87:

<sup>5</sup> *Աբրահամյան Ս.*, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Բ, Երևան, 1967, էջ 325:

<sup>6</sup> «Հայերն աշխարհում» հանրագիտական համառոտ բառարան, Երևան, 1995, էջ 26:

<sup>7</sup> *Գալփագեան Յ.*, նշվ. աշխ., էջ 314:



հաճախ պետության կողմից մերժվում էին արտագաղթելու դիմումները, թույլտվության պարագայում էլ գաղթողները բավական մեծ գումարներ պետք է վճարեին պետությանը<sup>1</sup>: Շարունակվելով 1970-ական թվականներին՝ արտագաղթի գործընթացն աստիճանաբար մարեց, ինչը պայմանավորված էր նաև համայնքի արտագաղթի ներուժի սպառմամբ:

### ***Արտագաղթի հետևանքները Ռումինիայի հայ համայնքում***

Արդեն 1960թ. «Ազդակ» թերթը Ռումինիայի հայ համայնքի մասին գրում էր. «Ռումանահայությունը մեր ամենէն բարգաւաճ և կենսունակ գաղութներէն մէկը կը նկատուէր մինչեւ այն օրը, երբ Ռումանիա եւս «բախտն» ունեցաւ մաս կազմելու կարմիր «դրախտին»:

Այսօր, այդ բարգաւաճ գաղութէն մնացած են միայն աւերակներ: Հայերու թիւը զգալապէս նուազած է, իսկ հայկական հարստութիւնները մոխիրի վերածուած: Կարմիր յորձանքը սրբած ու տարած է ամէն բան»<sup>2</sup>: Ռումինահայ կյանքի անկման մասին 1961թ. կարդում ենք. «Ռումանահայությունը հետզհետէ կը նուազի եւ ուշ չէ այն օրը երբ հազիւ վերակերտուած, հայկականացած այդ պատուական գաղութը վերածուի նախկին մոլտովական հայ գաղութներու... ուր մատի վրայ կը համրուին դեռ Լուսաւորչականներ, բայց ոչ հայեր եւ որոնք գտած են ինքզինքնին բնորոշող բանաձելը, Լուսաւորչական Ռումէններ»<sup>3</sup>: Ռումի-

<sup>1</sup> «Ազդակ», Բեյրութ, 11.II.1966, էջ 3:

<sup>2</sup> Լույն տեղում, 5.V.1960, էջ 3:

<sup>3</sup> «Հայրենիք», Բոստոն, 25.I.1961, էջ 1:

նահայերի շրջանում էապես նվազել էր հայոց լեզվի իմացությունը. 1961թ. մինչև երեսուն տարեկան հայերը ոչ միայն գրելու կարողալ չգիտեին, այլև դժվարանում էին խոսել հայերեն<sup>1</sup>: Արտագաղթի և պետական ուժացման քաղաքականության պատճառով համայնքային կյանքը գրեթե վերացավ. «Թւի պակասումով կանգ առին հայկական մշակութային աշխատանքներ, դպրոցը փակեց իր դռները, աշակերտներու թիւը բաւարար չըլլալուն պատճառաւ: Խառն ամուսնութիւնները կատարեալ փորձանք դարձած են եւ արագաքայլ դէպի ձուլում կը տանին»<sup>2</sup>:

1979թ. Ռումինիայում մնացած հայերին Հովհաննես Գալփազյանը ըստ բնակավայրերի հաշվում էր հետևյալ կերպ. Կոնստանցայում հայերի թիվը չէր անցնում 500-ը, իսկ Բուխարեստում՝ 1500-ը: Նույն ժամանակ Տուլչա քաղաքում կար 8-10 հայ ընտանիք, Բաբադալ քաղաքում՝ 4-5, Բրաիլայում՝ 15-20, Գալացում՝ 10, Պիտեշտում՝ 15-20, Ռոմանում՝ 2-3, Ֆոկշանում՝ 10-15 ընտանիք, Բոտոշանում՝ 30-40 հոգի<sup>3</sup>:

Ռումինիայի հայերի թվաքանակի վերաբերյալ ձեռքի տակ ունենք բազմաթիվ ու միաժամանակ իրարամերժ տվյալներ.

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 3:

<sup>2</sup> Նույն տեղում, 4.XII.1982, էջ 8: Հայերի թվաքանակի խիստ նվազման պատճառով 1960թ. Կոնստանցայում, իսկ 1962թ. Բուխարեստում փակվեցին հայկական դպրոցները, տե՛ս *Գալփազեան Յ.*, նշվ. աշխ., էջ 149:

<sup>3</sup> *Գալփազեան Յ.*, նշվ. աշխ., էջ 20, 33-35, 37-38, 42, 46, 51, 314:

1965թ.	15 հազար <sup>1</sup>	1980թ.	2500 <sup>2</sup>	1990թ.	7 հազար <sup>3</sup>
1966թ.	8 հազար <sup>4</sup>	1982թ.	3 հազար <sup>5</sup>	1992թ.	1957 <sup>6</sup> , ըստ այլ աղբյուրի՝ 8-10 հազար <sup>7</sup>
1968թ.	6 հազար <sup>8</sup>	1984թ.	6 հազար <sup>9</sup>	1994թ.	6 հազար <sup>10</sup>
1972թ.	12 հազար <sup>11</sup> , ըստ այլ աղբյուրի 2342 <sup>12</sup>	1985թ.	6 հազար <sup>13</sup>	2003թ.	2,5 հազ. հայ <sup>14</sup>
1975թ.	8 հազար <sup>15</sup>	1986թ.	6 հազար <sup>16</sup>	2015թ.	2 հազար <sup>17</sup>
1976թ.	6500-7000 <sup>18</sup>				

<sup>1</sup> *Խայթանասեան Ե.*, նշվ. աշխ., էջ 28:

<sup>2</sup> *Համագաղայան Վ.*, Սովետական Հայաստանը և Սփյուռքը, Երևան, 1980, էջ 19:

<sup>3</sup> *Ավագյան Գ.*, Հայաստանը և հայերս աշխարհում, Երևան, 1993, էջ 144:

<sup>4</sup> *Տէվիրճեան Վ.*, Գաւազանագիրք Լիբանանի եւ Սուրիոյ հայոց թեմերու առաջնորդութեանց, Անթիլիաս, 1980, էջ 502:

<sup>5</sup> «Հայրենիք», Բոստոն, 4.XII.1982, էջ 8:

<sup>6</sup> *Siekierski K.*, The Armenian Diaspora in Romania: Roots, Routes, Recreations, New Europe College Yearbook 2010-2011, in Vainovski-Mihai I. (ed.), p. 386.

<sup>7</sup> Armenian International Magazine, Glendale, Vol. 3, No 1, 1992, January, p. 31.

<sup>8</sup> «Հայրենիք», Բոստոն, 29.III.1968, էջ 3: Նաև՝ «Մասիս», Բեյրութ, 16.VI.1968, էջ 5:

<sup>9</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 13, թ. 2-3:

<sup>10</sup> «Հայերն աշխարհում» հանրագիտական համառոտ բառարան, էջ 84:

<sup>11</sup> *Եղիայեան Բ.*, նշվ. աշխ., էջ 890:

<sup>12</sup> *Siekierski K.*, նշվ. աշխ., էջ 386:

<sup>13</sup> *Ոսկանյան Ա.*, Սփյուռքահայության թվական կազմը, էջ 48:

<sup>14</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 442:

<sup>15</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 573, թ. 1:

<sup>16</sup> *Брык С.*, նշվ. աշխ., էջ 250:

<sup>17</sup> *Սաստրյան Հ.*, նշվ. աշխ.:

<sup>18</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 124, թ. 9:

### *Ռումինահայերն ԱՄՆ-ում*

1959թ. ռումինահայերը սկսեցին գաղթել ԱՄՆ: Արդեն 1969թ. այստեղ նրանց թիվը հասնում էր 5 հազարի<sup>1</sup>: 1968թ. Նյու Յորքի և շրջակայքի ռումինահայերի թիվը 600 էր: Նրանք բնակվում էին Բոստոնում, Հարթֆորդում, Ֆիլադելֆիայում, Նյու Ջերսիում, Չիկագոյում, Դետրոյթում և այլուր: Նյու Յորքի ռումինահայերը կենտրոնացած էին Սանի Սայթ թաղամասում, որտեղ 1966թ. հիմնեցին իրենց ակումբը: Նրանց մեծամասնությունը, սակայն, բնակվում էր Կալիֆորնիայում՝ Ֆրեզնոյում, Սան Ֆրանցիսկոյում և Լոս Անջելեսում<sup>2</sup>: Հովիվուդում պատկերը հետևյալն էր. տեղի հայ բնակչության շրջանում գերակշռում էին պարսկահայերը, բուլղարահայերն ու ռումինահայերը<sup>3</sup>: 1975թ. Լոս Անջելեսում բնակվում էր 340 ռումինահայ ընտանիք (հայ ընտանիքների ընդհանուր թիվը 13.334 էր)<sup>4</sup>: Չնայած դրան՝ հետագայում Լիբանանից, Իրանից, Հայաստանից և այլ վայրերից եկած հայերն այնքան մեծ թիվ կազմեցին, որ 2007թ. թե՛ Ռումինիայից, թե՛ Բուլղարիայից ԱՄՆ եկած հայերն այստեղի հայ համայնքի 1%-ից պակաս էին<sup>5</sup>:

---

<sup>1</sup> «Սփիւռք», Բեյրութ, 16.II.1969, էջ 10:

<sup>2</sup> «Մասիս», Բեյրութ, 27.X.1968, էջ 5:

<sup>3</sup> «Հայրենիք», Բոստոն, 7.VIII.1964, էջ 3: Նաև՝ «Մասիս», Բեյրութ, 15.XI.1970, էջ 5:

<sup>4</sup> «Հայրենիք», Բոստոն, 14.V.1975, էջ 3: Նույն ժամանակ Լոս Անջելեսի Կիլիկյան թեմի հավատացյալների 4 տոկոսը ռումինահայեր էին:

<sup>5</sup> Tourism Market Research on the Armenian-American Diaspora Community, February 2007, p. 8. [http://www.armeniapedia.org/images/c/c1/Armenian\\_American\\_Diaspora\\_Survey\\_Report.pdf](http://www.armeniapedia.org/images/c/c1/Armenian_American_Diaspora_Survey_Report.pdf): Ըստ 2010թ. մարդահամարի՝ Լոս Անջելեսի հայերից միայն 619-ը այստեղ է եկել Ռումինիայից, տե՛ս *Գոսազեան Շ.*, նշվ. աշխ., էջ 126:

Նորեկները, ժամանելով Նյու Յորք, արժանանում էին ընդունելության ԱՆՉԱ-ի պաշտոնյաների<sup>1</sup> կողմից: Ռումինահայերի ԱՄՆ տեղափոխվելու մասին այդ օրերի մամուլում կարդում ենք. «Առաջիկայ երկուշաբթի օր, Անչայի կարգադրութեամբ եւ օդային ճամբով Միացեալ Նահանգներ կը մեկնին 40 ռումանահայ գաղթականներ եւս:

Անչայի ներկայացուցիչները, ինչպէս նաեւ Հայ Օգնութեան Միութեան անդամները Նիւ-Եորքի օդակայանին մէջ պիտի ընդունին զանոնք: Այս նոր գաղթողները ընդհանրապէս պիտի հաստատուին Նիւ-Եորքի շրջանին մէջ»<sup>2</sup>: ԱՆՉԱ-ն ամեն կերպ նպաստում էր նրանց խնդիրների լուծմանը<sup>3</sup>: 1964թ. ԱՄՆ եկած ռումինահայերի մասին կարդում ենք. «Վերջերս ստացուած լուրերու համաձայն բոլոր գաղթականներն ալ գործ ապահոված են եւ ներկայիս կը գտնուին բարեկեցիկ վիճակին մէջ: Անոնք արդէն իսկ սկսած են ազգային կեանքի եւ հիմը դրած Ռումանահայ Միութեան, որուն նպատակն է հաւաքոյթներու, հանդէսներու եւ հանդիպումներու գծով նպաստել ազգապահպանումի սրբազան գործին»<sup>4</sup>:

<sup>1</sup> Հաճախ նրանց դիմավորում էր անձամբ Ջ.Մարտիկյանը, տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 8.IX.1961, էջ 1, 13.I.1965, էջ 1: Նաև «Մասիս», Բեյրութ, 14.IX.1961, էջ 5:

<sup>2</sup> «Ազդակ», Բեյրութ, 12.I.1963, էջ 3:

<sup>3</sup> Ավելի ուշ՝ 1976թ. Նյու Յորքում ՀԲԸՄ-ն սկսեց հարյուրավոր նորեկների (Միջին Արևելքից, Ռումինիայից, Բուլղարիայից և Խորհրդային Հայաստանից) համար իրականացնել օգնության ծրագիր, որի մեջ էր մտնում նաև անգլերենի ուսուցումը, տե՛ս *Bakalian A.*, *Armenian-Americans: from being to feeling Armenian*, New Brunswick, 1993, p. 82.

<sup>4</sup> «Միևիտք», Բեյրութ, 21.III.1964, էջ 10: ԱՆՉԱ-ի առանցքային անդամներից Արփի Փափազյանը հետաքրքիր համեմատություն է իրականացնում տարբեր երկրներից ԱՄՆ եկած հայերի միջև. ռումինահայերը, որոնք առաջինը եկան, գալիս էին «փոքր Փարիզից», հարուստ, լավ հագնված, բարեկիրթ, երբեմն օտարացած: Ի տարբերություն նրանց՝ բուլղարահայերն ավելի հասարակ և աղքատ էին: Իսկ եգիպտահայերն այս երկուսի նման քաղաքականապես ճնշված չէին, տե՛ս *Takooshian H.*, նշվ. աշխ., էջ 153:

Արդեն 1963թ. ռումինահայերն այնքան էին շատացել Լոս Անջելեսում, որ կարծես առանձին համայնք էին կազմում. «Համայնք մը նկատուելու չափ թուահամար ունին ռումանահայերը Լոս-Անճելէսի մէջ: Գիտակից իրենց տեղական պարտականութեանց, անոնք, իրենց այս հիւրընկալ եւ բարեբեր երկիրը հաստատուելուն առաջին իսկ օրէն, կարելոր թիւով մտան տեղոյս Շ. Յ. Դաշնակցութեան շարքերը, ՀՕՄ-ի տեղական մասնաճիւղին մաս կազմեցին եւ եկեղեցական ու հանրային բնոյթով բոլոր ձեռնարկներուն բերին իրենց կարելոր մասնակցութիւնը»<sup>1</sup>: Նշելի է, որ այս «առանձին համայնքի» հետ 1968թ. մայիսի 7-ին Նյու Յորքի նորակերտ Մայր Տաճարի Գավուքճյանների սրահում<sup>2</sup>, իսկ 1976թ. Լոս Անջելեսում, հանդիպումներ ունեցավ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն<sup>3</sup>: Արդեն 1987թ. ԱՄՆ և Կանադա հովվապետական այցի շրջանակներում, Նյու Յորքում՝ «Հայկ և Ալիս Գավուքճյան» սրահում Վազգեն Ա-ն հանդիպեց հազար ռումինահայերի և բուլղարահայերի հետ<sup>4</sup>:

Հատկանշական է սոցիոլոգ Ա.Բակալյանի դիտարկումը, որ 1960-ական թթ. սկսած՝ ԱՄՆ եկած ռումինահայերը պետք է հարմարվեին գոյություն ունեցող հայկական համայնքին, որը նրանց ընդունել էր՝ չտարանջատելով ամերիկահայերից: Միաժամանակ, նրանք պետք է ինտեգրվեին ավելի մեծ ամերիկյան հասարակությանը և սովորեին արդյունավետ գործել նրա տնտեսական, քաղաքական և հասարակական համակարգերում<sup>5</sup>:

<sup>1</sup> «Հայրենիք», Բոստոն, 30.X.1963, էջ 3:

<sup>2</sup> Նույն տեղում, 18.V.1968, էջ 3:

<sup>3</sup> Պատմական ակնարկ, RAFFI - Romanian Armenian Cultural Organization, <http://www.rafficulturalassociation.org/about.html>

<sup>4</sup> «Էջմիածին», 1988, թիվ 1-3, էջ 54:

<sup>5</sup> Bakalian A., նշվ. աշխ., էջ 320:

Ազգային կյանքի զարգացման խնդրում ԱՄՆ ռումինահայերը բավական լավատես էին. «Կը կարծեն թէ նոր սերունդը աւելի դիւրաւ պիտի կարենայ պահել իր ազգային դիմագիծը եւ աւելի երկար ժամանակ, մանաւանդ եթէ իրագործուին ծրագիրները եւ բացուին ամէնօրեայ հայկական դպրոցներ»<sup>1</sup>: Չնայած դրան, մանավանդ փոքր հասակում ԱՄՆ գալու պարագայում հաճախ բավական արագ էր ընթանում ձուլումը<sup>2</sup>: Բնականաբար, ոմանք էլ զոջում էին ԱՄՆ գալու համար<sup>3</sup>:

Նորեկ ռումինահայերի թվաքանակը հնարավորություն ընձեռեց հայկական համայնքային կառույցների աշխատանքներին մասնակցելուց զատ ստեղծել սեփական միություններ: 1963թ. հոկտեմբերի 19-ին Լոս Անջելեսի «Հայ Կեդրոն»-ում կայացավ ժողով, որի ընթացքում նախաձեռնվեց ռումինահայերի հայրենակցական միության ստեղծումը<sup>4</sup>: Կարևորելով այդպիսի կազմակերպության ստեղծումը՝ Սարգիս Սարունին<sup>5</sup> բացման խոսքում նշեց. «Այս ապրումներն են որ մեզ հաւաքե-

<sup>1</sup> «Մասիս», Բեյրութ, 27.X.1968, էջ 5:

<sup>2</sup> Այսպես մի ռումինահայ, որը 12 տարեկանում էր տեղափոխվել ԱՄՆ, նշում էր, որ ինքը, երբեք չժխտելով իր հայկական ծագումը, հպարտ էր լինել ամերիկացի: Նա նշում էր, որ հարգում է այս երկիրը և համարում այն իրենը, տե՛ս *Bakalian A.*, նշվ. աշխ., էջ 334:

<sup>3</sup> Տե՛ս, օրինակ, *Կապուտիկյան Ս.*, նշվ. աշխ., էջ 243:

<sup>4</sup> «Հայրենիք», Բոստոն, 30.X.1963, էջ 3:

<sup>5</sup> Սարգիս Սարունին ԱՄՆ եկած ռումինահայերի ազգային-համայնքային կյանքում կարևոր դերակատարում ստանձնած գործիչներից էր: Նա ձերբակալվել և ուղարկվել էր խորհրդային տաժանակրության, միայն 1954թ. է վերադարձել Բոսնիայից, որտեղից 1958թ. տեղափոխվել էր Բեյրութ: Այստեղ եղել էր ՀՅԴ Լիբանանի կենտրոնի անդամ (աջակցել է ռումինահայերի տեղափոխմանը ԱՄՆ), 1961թ. հունիսին եկել է ԱՄՆ, հաստատվել Ֆրեզնոյում և ստանձնել «Ասպարեզ» թերթի խմբագրությունը, տե՛ս *Գեորգևան Գ.*, Ամէնուն տարեգիրքը 1963, Ժ. տարի, Պեյրութ, 1962, էջ 577-578:

ցին այս երեկոյ այս սրահին մէջ, որպէսզի հիմը դնենք «Ռուսմանահայ Միութեան» մը, հաւաքական ճիգերով ի կատար ածելու համար այն պարտականութիւնները, զորս ունինք հանդէպ մեր զաւակներուն հայապահպանման առաջնահերթ գործին, մարդասէր եւ հիւրընկալ մեր նոր հայրենիքին՝ Ամերիկայի, գաղութին որուն մաս կը կազմենք մենք բոլորս եւ նոյնքան կարեւոր ու առաջնահերթ պարտականութիւնը հանդէպ անոնց, որոնք, մեզի պէս, կրած են համայնքավար ռեժիմին անմարդկային արհաւիրքները»<sup>1</sup>:

Լուս Անջելեսի ռումինահայերը 1963թ. դեկտեմբերին Ս.Սարունիի գլխավորությամբ հիմնեցին «Բաֆֆի» հայրենակցական և մշակութային միությունը: Փաստորեն, Լուս Անջելեսում ստեղծված միությունը դարձավ Բուխարեստի «Բաֆֆի» միության ժառանգորդը<sup>2</sup>: Արդեն 1964թ. հիմնելով իր մարզական բաժինը՝ այն սկսեց անցկացնել մրցումներ<sup>3</sup>: 1966թ. հիմնվեց «Բաֆֆի» ֆուտբոլային խումբը, իսկ 1968թ. հենց ռումինահայերի նախաձեռնությամբ բացվեց ՀՄԸՄ Լուս Անջելեսի մասնաճյուղը: 1960-1966թթ. Ռումինիայի հայկական «Կոմիտաս» երգչախմբի շուրջ 70 երգիչ-երգչուհիներ հաստատվեցին Լուս Անջելեսում, ինչի արդյունքում այստեղ հիմնվեց «Բաֆֆի» նոր երգչախումբը, որը միացավ Հայ երիտասարդաց միության երգչախմբին, ապա ստանալով «Գուսան» անունը՝ անցավ ՀՄԸՄ հովանավորության տակ: «Բաֆֆի» միությունը նպաստեց ամե-

---

<sup>1</sup> «Հայրենիք», Բոստոն, 30.X.1963, էջ 3:

<sup>2</sup> Պատմական ակնարկ, <http://www.rafficulturalassociation.org/about.html>

<sup>3</sup> Մասնավորապէս, կազմակերպվում էր պինգ-պոնգի մրցաշար «Մարտիկյանի» (ի պատիվ Ջ.Մարտիկյանի) բաժակին տիրանալու համար, տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 7.VIII.1964, էջ 3:



րիկահայ ամենօրյա դպրոցական համակարգի ձևավորմանը՝ Ֆերահյան դպրոցի, «Ռոզ և Ալեքս Փիլիպոս» վարժարանի և Սբ Կարապետ եկեղեցու կառուցմանը<sup>1</sup>:

1966թ. սեպտեմբերի 11-ին հիմնվեց Նյու Յորքի Ռումինահայ հայրենակցական միությունը, որի նպատակն էր «համախմբել Նիւ Եորքի ռումանահայերը, առանց սեռի խտրութեան, նւիրուելով հայապահպանման սրբազան գործին, կազմակերպելով դասախօսութիւններ, ծանօթացնելու համար մեր անցեալի եւ ներկայի հայ գրական դէմքերը, եւ հայ ազատութեան համար մարտնչող քաջարի հայ հերոսները»<sup>2</sup>: Միության պատվավոր նախագահ հռչակվեց Ջ.Մարտիկյանը: Նյու Յորքի ռումինահայերը մոտ 120 ընտանիք էին<sup>3</sup>: 1966-1967թթ. այստեղի ռումինահայերը բացեցին շաբաթօրյա դպրոց (երկու դասարաններով), որը 1968թ. 50 ռումինահայ աշակերտներով միացավ Նյու Յորքի մայր վարժարանին<sup>4</sup>:

Նորաստեղծ հայրենակցական միությունների մասին «Զարթոնք» թերթը գրում է. «Ամերիկայի մեջ առանձին խմբաւորումներով նկատառելի գործունէութիւն մը կը տանին պուսահայ, ռումանահայ եւ պարսկահայ միութիւնները»<sup>5</sup>: Դեռ «Րաֆֆի» միության գործունէության առաջին տասնամյակի ամփոփման ժամանակ տեսակետ կար, որ պետք է ավարտել հայրե-

<sup>1</sup> Պատմական ակնարկ, <http://www.rafficulturalassociation.org/about.html>: Միությունն ակտիվ պայքար էր մղում թուրքախոսության դեմ, տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 10.V.1975, էջ 3:

<sup>2</sup> Նույն տեղում, 28.IX.1966, էջ 2: Միության ակումբում կազմակերպվում էին մարզական միջոցառումներ, տե՛ս «Մասիս», Բեյրութ, 27.X.1968, էջ 5:

<sup>3</sup> «Հայրենիք», Բոստոն, 28.IX.1966, էջ 3:

<sup>4</sup> «Մասիս», Բեյրութ, 27.X.1968, էջ 5:

<sup>5</sup> «Զարթոնք», Բեյրութ, 20.XI.1969, էջ 4:

նակցական շրջանակներում աշխատանքները և լծվել համահայկական կառույցների գորացմանը: Դրա պատճառներից էր նաև այն, որ ռումինահայերից շատերը նույնիսկ չէին ծնվել Ռումինիայում<sup>1</sup>: «Սփիւոք» շաբաթաթերթի վարչական տնօրեն Օննիկ Ինճեյանը, ներկայացնելով ռումինահայերի կազմակերպությունները, ակումբները, ֆուտբոլի թիմը, կազմակերպած միջոցառումները, գրում է. «Այս բոլորը շատ լաւ, սակայն զարմանալի է թէ ինչո՞ւ Ռումանահայերը ամէն բան առանձին ընել կը փափաքին եւ ձեռք-ձեռքի միւս հայրենակիցներու հետ աւելի դրական արդիւնքներու հասնելու կարելիութենէն կը զրկուին»<sup>2</sup>: Չնայած այդ տեսակետին՝ «Րաֆֆի» միությունը շարունակեց իր գործունեությունը, 1992թ. սկսեց գործել նրա սեփականությունը հանդիսացող կենտրոնը, իսկ 2000թ.՝ Հռիփլուդի կենտրոնում գտնվող միության նոր շէնքը<sup>3</sup>:

Ռումինահայերը կարևոր դեր խաղացին ԱՄՆ հայ համայնքի հզորացման գործում: Արևելքի երկրներից, Կ.Պոլսից և Բալկաններից հայերի գաղթը ոչ միայն ստվարացրեց Լոս Անջելեսի հայության թվաքանակը, այլև նպաստեց ազգային կյանքի աշխուժացմանն ու զարգացմանը<sup>4</sup>:

Այդպիսով, 1945-1970-ական թթ. Ռումինիայից հայերի արտագաղթի հետևանքով տեղի համայնքն էապես թուլացավ, նրա թվաքանակը մի քանի անգամ նվազեց: Եթե սկզբնական շրջանում համեմատաբար փոքր խմբերով ռու-

---

<sup>1</sup> «Հայրենիք», Բոստոն, 14.V.1975, էջ 3:

<sup>2</sup> «Սփիւոք», Բեյրութ, 16.II.1969, էջ 10:

<sup>3</sup> Պատմական ակնարկ, <http://www.rafficulturalassociation.org/about.html>

<sup>4</sup> «Մասիս», Բեյրութ, 29.XI.1970, էջ 5:

մինահայեր տեղափոխվում էին Հարավային Ամերիկա (առանձնապես Արգենտինա), ապա 1950-ական թթ. վերջից արտագաղթողների նոր ալիքը սկսեց հաստատվել ԱՄՆ-ում: Այստեղ, հատկապես սկզբնական շրջանում, ռումինահայերը մեծապես նպաստեցին ԱՄՆ-ի ու, մասնավորապես, Լոս Անջելեսի համայնքի զարգացմանը:

## ԱՐՏԱԳԱՂԹԸ ԲՈՒՂԱՐԻԱՅԻՑ

Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո Բուլղարիայում տեղի ունեցան քաղաքական ու տնտեսական արմատական փոփոխություններ, որոնք անմիջականորեն ազդեցին նաև այստեղ բնակվող հայության վրա: Կոմունիստական համակարգի հաստատումը բացասական նշանակություն ունեցավ հայ համայնքի կենսագործունեության վրա, որի հետևանքով նրա մի շարք կառույցներ դադարեցին լիարժեքորեն կամ առհասարակ գործել: Դա հանգեցրեց հազարավոր հայերի արտագաղթին, սկզբնական շրջանում՝ առավելաբար դեպի Հարավային Ամերիկա, իսկ 1950-ական թթ. վերջից՝ ԱՄՆ, ուր էլ փոխադրվեց Բուլղարիան լքող հայության հիմնական մասը:

1944-1946թթ. Բուլղարիայի հայերի թվաքանակի վերաբերյալ կան իրարամերժ տվյալներ՝ 20 հազարից<sup>1</sup> մինչև 35 հազար<sup>2</sup>: Ընդ որում՝ 35 հազար թիվը հավաստող աղբյուրները մոտավոր են նույնիսկ տեղաբաշխման տվյալներում<sup>3</sup>: Այսպես՝ ըստ

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 10, թ. 1:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 82, թ. 6, գ. 89, թ. 22, ֆ. 709, ց. 1, գ. 20, թ. 5, գ. 51, թ. 26: 1946թ. Բուլղարիայից հայրենադարձվեց 4383 հոգի, տե՛ս *Մելիքսեթյան Հ.*, նշվ. աշխ., էջ 241:

<sup>3</sup> Ըստ որոշ տվյալների՝ Երկրորդ աշխարհամարտի նախօրյակին Բուլղարիայի հայ համայնքը բաղկացած էր 25-27 հազար հոգուց, սակայն պատերազմի ժամանակ Ռուսիայի առանձին տարածքներ միացվեցին Բուլղարիային, Հունաստանի հայերի մի մասը եկավ Բուլղարիա, որի արդյունքում համայնքը կրկին ստվարացավ՝ հասնելով 32-35 հազարի, տե՛ս «Հայերն աշխարհում» հանրագիտական համառոտ բառարան, էջ 35: 1940թ. Պագարջիկը, ինչպես նաև Սիլիստրան, անցան Բուլղարիայի իշխանության տակ, որից հետո տեղի հայերի մի մասը տեղափոխվեց Ռուսիա: Պագարջիկի հայերի մի մասը 1946թ. հայրենադարձվեց, իսկ մնացածների զգալի մասը տեղափոխվեց Սոֆիա և Վառնա: 1979թ. Պագարջիկում ապրում էր 40-50 հայ ընտանիք: Եթե 1954թ. այստեղի դպրոցում կար ընդամենը 17 աշակերտ, ապա վեց տարի անց արդեն այն դադարել էր գործել, տե՛ս *Գալիսագեան Յ.*, նշվ. աշխ., էջ 30-31, 153:

ՀԽՄՀ արտգործժողկոմատի քաղաքական ինֆորմացիայի բաժնի 1945թ. տեղեկանքի, Բուլղարիայի հայերի թիվը հասնում էր 35 հազարի, որից 9 հազարը՝ Պլովդիվում, 5 հազարը՝ Վառնայում, 4 հազարը՝ Սոֆիայում, 4 հազարը՝ Բուրգասում, 4 հազարը՝ Ռուսեում, 2 հազարը՝ Շումենում, 2 հազարը՝ Սլիվենում, 2 հազարը՝ Հասկովոյում, 2 հազարը՝ Յամբոլում, 500-ը՝ Հարմանլիում, 500-ը՝ Կիրջալիում և մոտ 1000-ն էլ՝ գյուղական բնակավայրերում<sup>1</sup>:

Մինչդեռ, ըստ 1945թ. Բուլղարիայի հայկական ազգային փոքրամասնության ժամանակավոր կոմիտեի անցկացրած մարդահամարի՝ այստեղ կար 25-26 հազար հայ, որոնցից շուրջ 4 հազարը՝ Սոֆիայում, 6825-ը՝ Պլովդիվում, 3477-ը՝ Վառնայում, 1627-ը՝ Բուրգասում, 972-ը՝ Հասկովոյում, 784-ը՝ Շումենում, 783-ը՝ Սլիվենում և այլն: Զբաղվածության առումով, ըստ նույն աղբյուրի, 4373-ը հայ արհեստավոր էր, 2847-ը՝ բանվոր (հիմնականում մանածագործական արդյունաբերության, նաև շինարարության ու այլ ոլորտներում), 1042-ը՝ առևտրական, 280-ը՝ գյուղատնտեսության ոլորտի աշխատող, 315-ը՝ բժիշկ, փաստաբան և այլն<sup>2</sup>: 20 հազար հայից (չհաշված Սոֆիան) մոտ 14 հազարը բուլղարահայատակ էր, իսկ 6 հազարը նանսենյան անձնագիր ուներ<sup>3</sup>:

Հայերի դրությունը Բուլղարիայում էապես փոխվեց 1946թ., երբ երկրում հաստատվեց ամբողջատիրական վարչակարգ: Չնայած սկզբում Սո. Շահումյանի անվան հայկական միջնակարգ դպրոցի ստեղծմանը՝ աստիճանաբար ազգային ճնշումները սաստկացան: Կասեցվեց հայկական կառույցների գործունեությունը, ստեղծվեց միակ թույլատրված «Երևան»

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 55, թ. 3:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 83, թ. 3-4:

<sup>3</sup> Նույն տեղում, թ. 6:

միությունը, որին 1953թ. ի վեր իշխանություններն արգելեցին զբաղվել համայնքի վարչատնտեսական և կրթական հարցերով՝ դրանք դարձնելով պետության մենաշնորհը: Դպրոցներն անցան պետության ենթակայության տակ և սկսեցին ղեկավարվել միասնական պետական ծրագրով, իսկ «Երևան» կազմակերպությունը վերափոխվեց «Երևան-մշակութային միության»: Պահպանվեցին եկեղեցական թեմը և թեմական վարչությունը, որը, սակայն, կարող էր զբաղվել միայն հոգևոր գործերով<sup>1</sup>:

Կոմունիստական վարչակարգի հաստատումը ոչ միայն կանխորոշեց տեղի հայերի զգալի մասի գաղթը, այլև անհնարին դարձրեց էթնիկ փոքրամասնությունների բնականոն ազգամշակութային գործունեությունը<sup>2</sup>: Սկսեց իրականացվել ոչ միայն հայերի, այլև թուրքերի, հրեաների և ուրիշ ազգային փոքրամասնությունների ձուլման քաղաքականություն<sup>3</sup>: Արդյունքում՝ վերջիններս ևս դիմեցին արտագաղթի: Միայն 1949-1951թթ. շուրջ 150 հազար թուրք տեղափոխվեց Թուրքիա, դա շարունակվեց նաև 1960-1970-ական թթ.: 1940-ական թթ. վերջին և 1950-ական թթ. սկզբին շուրջ 32 հազար հրեա փոխադրվեց Իսրայել, մոտ 4 հազար չեխ և սլովակ և 5 հազար ռուս ևս լքեցին Բուլղարիան<sup>4</sup>: Ընդհանուր առմամբ, 1946-1955թթ. Բուլղարիան լքեց ավելի քան 200 հազար հոգի: Գաղթողների թիվն էապես

---

<sup>1</sup> *Դալլաթյան Կ.*, նշվ. աշխ., էջ 248:

<sup>2</sup> *Մելքոնյան Է.*, Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005, էջ 495:

<sup>3</sup> «Հայերն աշխարհում» հանրագիտական համառոտ բառարան, էջ 35:

<sup>4</sup> *Mintchev V.*, External Migration and External Migration Policies in Bulgaria, "South-East Europe Review for Labour and Social Affairs", 1999, N 3, p. 126.

նվազեց 1956-1965թթ. (հատկապես 1961-1965թթ.) և կրկին աճեց 1966-1980թթ.<sup>1</sup>:

Հետաքրքրական է 1985-1991թթ. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Կարլեն Դալլաքյանի նկատառումը. Բուլղարիայի օրինակով դիտելի է մի օրինաչափություն, որն, առանց բացառության, գործել է սոցիալիստական վարչակարգ հռչակած բոլոր երկրներում՝ ԽՍՀՄ-ում, Արևելյան Եվրոպայի պետություններում, նույնիսկ Սիրիայում, Եթովպիայում և այլուր: Իր ազգային պետության տարածքից դուրս գտնվող ազգաբնակչությունն ուրիշ «սոցիալիստական» համակարգում, կազմելով ազգային փոքրամասնություն, ենթակա էր արագ ուժացման: Հարկադիր ձուլումը պետական քաղաքականության մակարդակի էր բարձրացված, և առաջին հարվածն ուղղվում էր փոքրամասնության կրթական համակարգին<sup>2</sup>:

Բուլղարահայության գաղթը բացատրվում էր վերոնշյալ քաղաքական հանգամանքով, որին գումարվում էր տնտեսական ծանր դրությունը<sup>3</sup>: Արտագաղթի պատճառներից կարելի է առանձնացնել դաշնակցականների նկատմամբ բռնաճնշումները: Դրանք ՀՅԴ համակիրներից և անկուսակցականներից շատերին մղում էին գաղթել դեպի «ազատ աշխարհ»: Կարևոր էր նաև հեռանկարի և ապագայի խնդիրը, որը շատերը ցանկանում էին տեսնել ժողովրդավարական երկրներում<sup>4</sup>:

<sup>1</sup> *Markova E.*, Optimising migration effects: A perspective from Bulgaria, "A Continent Moving West? EU Enlargement and Labour Migration from Central and Eastern Europe", edited by R. Black, G. Engbersen, M. Okólski, C. Pantîru, Amsterdam, 2010, p. 211.

<sup>2</sup> *Դալլաքյան Կ.*, նշվ. աշխ., էջ 249:

<sup>3</sup> «Հայրենիք», Բոստոն, 1951, թիվ 1, էջ 96: Նաև՝ «Հայրենիք», Բոստոն, 6.X.1971, էջ 3:

<sup>4</sup> Նույն տեղում, 17.I.1985, էջ 2:

Խորհրդահայ հեղինակները, սակայն, անտեսելով Բուլղարիայում կոմունիստական կարգերի հաստատման բացասական հետևանքները հայկական համայնքի համար, ընդհակառակը, համարում էին, որ այդ իրադարձությունը նպաստել է վերջինիս զարգացմանը: Ջ.Ղասարյանը գրում է. «Բուլղարահայ գաղութի համար ստեղծվեցին բոլոր հնարավորություններն աննախընթաց զարգացման համար»<sup>1</sup>: ՌԱԿ առաջնորդներից Անդրանիկ Անդրեասյանը համերաշխում է այս տեսակետին՝ Բուլղարիայի և Ռուսիայի հայ համայնքների մասին գրելով. «...ամենէն բարեբախտ պայմաններով նպաստուած համայնքներն են բովանդակ սփիւռքի մէջ: Որովհետեւ անոնք ամբողջապէս ապահով են հիւրընկալ իշխանութեանց կողմէ ճնշումի եւ հալածանքի որեւէ վտանգէ, իբրեւ «համայնավար գործակալ» կամ «ծպտուած ուղեկից» զրպարտութեան դէմ»<sup>2</sup>: Եվ անհայտ է մնում, թե ինչու չօգտվելով այս աննախադեպ հնարավորություններից՝ բազմաթիվ բուլղարահայեր ընտրեցին գաղթի ճանապարհը:

Արդէն 1950-ական թթ. սկզբից բուլղարահայերը սկսեցին արտագաղթել, սկզբնական շրջանում՝ առավելաբար Հարավային Ամերիկա: Միայն 1952-1953թթ. Բուլղարիայից և Ռուսիայից Արգենտինա տեղափոխվեց շուրջ հազար հայ<sup>3</sup>: 1950-ական թթ. որոշ թվով բուլղարահայեր փոխադրվեցին Վենեսուելա<sup>4</sup>:

---

<sup>1</sup> *Ղասարյան Ջ.*, Հայ-բուլղարական բարեկամության պատմությունից, Երևան, 1978, էջ 81:

<sup>2</sup> *Անդրեասեան Ա.*, նշվ. աշխ., էջ 44-46:

<sup>3</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 100:

<sup>4</sup> *Դալլարյան Կ.*, նշվ. աշխ., էջ 282:



Ծանր կացության մեջ հայտնված բուլղարահայերի՝ դեպի այլ, ավելի բարենպաստ երկրներ տեղափոխման խնդիրը 1950-ական թթ. կեսերից ստանձնեց ԱՆՉԱ-ն, որին այս խնդրում ամեն կերպ սատարում էր ՀՅԴ-ն<sup>1</sup>:

1956թ. վերջից, ելքի վիզա ստանալով, բուլղարահայերը սկսեցին մեկնել Լիբանան: Ինչպես և Ռուսինիայում, իշխանությունների կողմից դրա արտոնման համար ընդունելի հիմնավորումն ընտանիքի հետ միավորումն էր<sup>2</sup>: Որոշ դեպքերում էլ բուլղարահայերն ու ռուսինահայերը Լիբանան էին գալիս զբոսաշրջիկի կարգավիճակով<sup>3</sup>: Հաճախ մեկնելու ցանկություն ունեցողները մերժվում էին, բուլղարահայերը չունեին ազատ տեղաշարժի հնարավորություն, հակառակ պարագայում արտագաղթն էապես ավելի մեծ ծավալներ կստանար:

Նորեկները ժամանում էին Բեյրութ՝ իրենց հետ չունենալով գրեթե ոչինչ, ուստի ապավինում էին հարազատների, իսկ նրանց բացակայության պարագայում՝ տեղի հայ համայնքի օգնությանը, որն աջակցում էր նրանց աշխատանք գտնելու հարցում: Բեյրութը գաղթողների համար տարանցիկ կետ էր դեպի նոր մշտական բնակության վայր ճանապարհին, որի նախընտրելի տարբերակը ԱՄՆ-ն էր<sup>4</sup>: Այնուամենայնիվ, բուլղարահայերի և ռուսինահայերի մի մասը մնում էր Լիբանանում, ինչը (այլ մերձակա գաղութներից ներհոսքի հետ միասին) նպաստում էր այստեղից արտագաղթին հակակշռելուն<sup>5</sup>:

<sup>1</sup> «Ազդակ», Բեյրութ, 23.VIII.1969, էջ 3:

<sup>2</sup> *Zadoian H.*, նշվ. աշխ., էջ 67:

<sup>3</sup> «Արարատ», Բեյրութ, 23.VIII.1969, էջ 2:

<sup>4</sup> *Zadoian H.*, նշվ. աշխ., էջ 68:

<sup>5</sup> «Արարատ», Բեյրութ, 20.III.1971, էջ 3:

1957թ., գալով Բեյրութ, ԱՆՉԱ-ի փոխնախագահ Սուրեն Սարոյանը հանդիպեց փախստականների հետ և մշակեց մի ընթացակարգ, որը հետագայում նպաստավոր ծառայություն մատուցեց տասնյակ հազարավոր գաղթողների: Փախստականի կարգավիճակ ունեցող բուլղարահայերի և ռումինահայերի՝ Լիբանանից ԱՄՆ ճանապարհածախսը հաճախ օգնում էին հոգալ միջազգային մի շարք կազմակերպություններ, ինչպիսիք էին՝ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, Համաշխարհային եկեղեցական ծառայությունը, Եվրոպական միգրացիայի միջկառավարական կոմիտեն և այլն: Նրանց հետ բոլոր պայմանավորվածություններն իրականացնում էր ԱՆՉԱ-ն: Նորեկներին անհրաժեշտ էր ԱՄՆ-ում ունենալ երաշխավորներ, մինչդեռ քչերն այնտեղ ազգականներ կամ ընկերներ ունեին, ուստի այդ գործն էլ բաժին էր հասնում ԱՆՉԱ-ին և նրա կամավորներին: Սկսած 1973թ.՝ հայերը Բուլղարիայից և Ռումինիայից ԱՄՆ սկսեցին տեղափոխվել ոչ միայն Բեյրութով, այլև Իտալիայով: Այդ դեպքում նրանց օժանդակում էր նաև «Տոլստոյ» հիմնադրամը<sup>1</sup>:

Ըստ «Զարթոնք» թերթի՝ Բուլղարիայից և Ռումինիայից արտագաղթն օրինակ էր ծառայում Մերձավոր Արևելքի գաղութների համար. «Շարժումը, որ սկսած էր Պուլկարիայեն եւ Ռումանիայեն, վարակեց վերջին տարիներուն արաբական կարգ մը երկիրներ եւս, ինչպէս Եգիպտոս, Սուրիա, ապա Լիբանան»<sup>2</sup>: Իսկ «Ազդակ» թերթը մեղադրում էր ՀԽՍՀ-ին անգործության մեջ. «Պէլրութի Անչան կարելիութեան սահմաններուն մէջ օգնեց՝ Ռումանիայեն ու Պուլկարիայեն ձերբազատելու համար անհուն

---

<sup>1</sup> Zadoian H., նշվ. աշխ., էջ 69-71, 74:

<sup>2</sup> «Զարթոնք», Բեյրութ, 31.VIII.1969, էջ 2:

գոհողութիւններ ստանձնող հայրենակիցներու տեղափոխութեան և ազատ երկիրներ հաստատուելուն: Համայնավար վարչաձևի ենթակայ այդ երկիրներու հայերը ինչո՞ւ կուզէին դուրս գալ այնքան տարիներու իրենց երկրորդ հայրենիքէն: Ինչո՞ւ Հայաստանի կառավարութիւնը տէր չդարձաւ անոնց»<sup>1</sup>:

Ելնելով ստեղծված վիճակից՝ 1965թ. բուլղարահայ Հովհաննես Աճեմյանը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասայանին առաջարկում էր առաջին հերթին Բուլղարիայից և Ռումինիայից կազմակերպել հայրենադարձություն. «Անբնական է մանաւանդ, որ ներգաղթի համար փակին դռները մեր առջեւ, երբ մենք հոս ազգային տեսակէտէ դիմանալու այլեւս կոռուաններ չունենք, մինչ ամեն օժանդակութիւն կ'ընձեռնուի ձուլման վտանգի անմիջական ենթակայ չեղող գաղութներու հայրենադարձութիւնը ապահովելու: Ինչո՞ւ զարմանալ ուրեմն որ այս պայմաններուն տակ Պուլկարիա և Ռումանիա բնակող մեր ազգակիցները կը հարկադրուին զանգուածօրէն լքել այդ երկիրները և կրկին գաղթականի ցուպը ձեռքներին առած կուղղուին դէպի օտար հորիզոններ (Լիբանան, Ա.Մ.Ն., Քանադա), որպէսզի իրենց ազգային գոյութիւնը, որ հազիւ փրկած էին թրքական բռնակալութեան ճիրաններէն, քիչ եւս քարշ տան...»<sup>2</sup>: Մինչդէռ ՀԽՍՀ արտաքին գործերի մինիստրության նույն թվականի տեղեկանքում բուլղարահայերի հայրենադարձությունը համարվում էր աննպատակահարմար<sup>3</sup>: Սա բացատրվում էր խորհրդահայ ղեկավարության պաշտոնա-

<sup>1</sup> «Ազդակ», Բեյրութ, 19.IX.1972, էջ 4:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 265, թ. 5-6:

<sup>3</sup> Նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 101, թ. 1:

կան մոտեցմամբ բուլղարահայ համայնքի հանդեպ, որը համարվում էր Սփյուռքի ամենաբարենպաստներից մեկը: 1962-1982թթ. Բուլղարիայից հայրենադարձվեց ընդամենը 10 հոգի<sup>1</sup>: Իրականում, փաստորեն, Սառը պատերազմի պայմաններում հազարավոր բուլղարահայեր լքեցին սոցիալիստական ճամբարը՝ նախընտրելով հաստատվել հակառակ բևեռում:

Այդպիսով՝ 1950-1970-ական թթ. բուլղարահայերը գաղթեցին Արգենտինա, Վենեսուելա, Կանադա, Ավստրալիա<sup>2</sup>, Արևմտյան Եվրոպայի երկրներ, բայց ամենամեծ թվով՝ ԱՄՆ: Սակավաթիվ բուլղարահայեր էլ տեղափոխվեցին Ավստրիա<sup>3</sup>, Մարոկո<sup>4</sup>, Նոր Զելանդիա<sup>5</sup>, Շվեդիա, Դանիա և Նորվեգիա<sup>6</sup>: Դժվար է նշել Բուլղարիայից արտագաղթած հայերի ստույգ թվաքանակը: Ըստ Զ.Ղասաբյանի՝ այն հասնում էր 2 հազարի<sup>7</sup>, բայց հավանաբար այդ թիվն իրականում ավելի շատ է եղել:

---

<sup>1</sup> *Մեյիքսթեթյան Հ.*, նշվ. աշխ., էջ 301:

<sup>2</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 87: Նաև՝ *Tchilingirian H.*, *The Forgotten Diaspora: Bulgarian-Armenians after the end of Communism*, *Armenian International Magazine (AIM)*, Vol. 12, Issue 3, April 2001, p. 35.

<sup>3</sup> *Գեորգեան Կ.*, Ամենուն տարեգիրքը 1966, ԺԳ. տարի, Պէյրուք, 1966, էջ 393:

<sup>4</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 391:

<sup>5</sup> *Աբրահամյան Ա.*, նշվ. աշխ., էջ 325:

<sup>6</sup> *Բախչինյան Ա.*, Հայությունը սկանդինավյան երկրներում. հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչությունները (սկզբից մինչև մեր օրերը), Երևան, 2010, էջ 208, 215, 220:

<sup>7</sup> *Ղասաբյան Զ.*, Ակնարկներ բուլղարահայ համայնքների պատմության (1896-1970), Երևան, 1986, էջ 235:

***Արտագաղթի հետևանքները  
Բուլղարիայի հայ համայնքում***

1960-ական թթ. կեսերին, ըստ Բուլղարիայում գործող «Երևան» կազմակերպության՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին տրամադրած տեղեկությունների, Բուլղարիայում բնակվում էր 24 հազար հայ՝ հետևյալ տեղաբաշխմամբ. Սոֆիա՝ 4500 հոգի, Պլովդիվ՝ 6000, Վառնա՝ 3500, Ռուսե՝ 1900, Բուրգաս՝ 1300, Հասկովո՝ 617, Սլիվեն՝ 428, Շումեն՝ 550, Տոլբուխին՝ 390, Յամբոլ՝ 296, Ստարա Ջագորա՝ 250, Պագարջիկ՝ 250, Սիլիստրա՝ 220, Այաոս՝ 106<sup>1</sup>, Պլենեն՝ 100: Բացի այդ, «Փոքրաթիվ հայ գաղութներ կան ցրված մյուս քաղաքներու մեջ, ինչպես Կազանլըք, Լոմ, Սվիշտով, Հարմանլը, Նովա Ջագորա և այլն և շատ փոքր թիվ մը ցրված գյուղերը»<sup>2</sup>: Բուլղարիայի դպրոցներում հայոց լեզու սովորող հայ աշակերտների թիվն, ըստ նույն աղբյուրի, 1138 էր<sup>3</sup>: Ըստ Բուլղարիայում ԽՍՀՄ դեսպանի 1962թ. տեղեկանքի՝ հայերի մեծամասնությունը Բուլղարիայի, շուրջ 100-ը՝ ԽՍՀՄ, մի քանիսն էլ Թուրքիայի և Իրանի քաղաքացիներ էին<sup>4</sup>:

Բուլղարիայի մի շարք քաղաքներում գործում էին հայկական դպրոցներ. 1960-1961 ուսումնական տարում Բուլղարիայում հայկական ութամյա վարժարաններ էին գործում հետևյալ քաղաքներում՝ Պլովդիվ (582 աշակերտ), Սոֆիա (190 աշակերտ), Ռուսե (300 աշակերտ): Քառամյա վարժարաններ կային

<sup>1</sup> Ըստ Բուլղարիայից ստացված տեղեկությունների՝ 1966թ. այս քաղաքում բնակվում էր 30 հայ ընտանիք, տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 308, թ. 33:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 266, թ. 25:

<sup>3</sup> Նույն տեղում, թ. 30:

<sup>4</sup> Նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 320, թ. 1:

Բուրգասում (110 աշակերտ), Սլիվենում (48 աշակերտ), Հասկովոյում (23 աշակերտ), Կոլարովգրադում (22 աշակերտ)<sup>1</sup>: Սակայն 1961թ. բոլոր դպրոցները, բացի Պլովդիվից, փակվեցին. «...1961 թուին հակառակ գաղութիս բուռն բողոքներուն հաշուի-յարդարի ենթարկեցին հայ դպրոցները, բացի Փլովտիվի վար-ժարանէն, որը սակայն լոկ անուանապէս հայկական է, քանի որ հոն բոլոր առարկաները պուլկարերէն լեզուով կը դասաւան-դուին: Այս կերպով գաղութիս գոյութիւնը վտանգող ահաւոր հարուած մը ստացանք, որ ամլութեան կը դատապարտէ նոր սերունդը հայ մեծացնելու համար թափուած ջանքերը»<sup>2</sup>:

Մոցիալիստական կարգերի հաստատումից հետո փոխվեց համայնքի զբաղվածությունը: Բուլղարահայ համայնքը գլխավորաբար բաղկացած էր բանվորներից և մտավորականներից (արտադրության տարբեր ճյուղերի մասնագետներ, ծառայողներ, բժիշկներ, արվեստագետներ և այլն), միայն աննշան մասն էր զբաղվում հողագործությամբ<sup>3</sup>: Եթե նախկինում գերակշիռ մասը զբաղվում էր առևտրով ու արհեստներով, ապա 1980-ական թթ. արդեն 20 հազար հայից շուրջ 1500-ը ուներ բարձրագույն կրթություն և զիտության ու արդյունաբերության ասպարեզում գրավում էր ակնառու դիրքեր: 8 հազար հայ պետական հաստատությունների, գործարանների, արհեստանոցների աշխատող էր, 1100-ը՝ բուլղարական կոմունիստական կուսակցության անդամ<sup>4</sup>:

<sup>1</sup> 1959-1960թթ. հայկական դպրոցներ ունեին նաև Ստարա-Չագորա, Պագարջիկ, Տոլբուխին և Յամբոլ քաղաքները: Աշակերտների թիվը 20-ից նվազելու պատճառով այդ դպրոցները միացվեցին տեղի բուլղարական դպրոցներին պահպանելով մայրենի լեզվի, Հայաստանի պատմության և աշխարհագրության դասավանդումը (շաբաթական 2-ից 6 ժամ) հայ աշակերտների համար, տե՛ս *Գասպարյան Մ.*, նշվ. աշխ., էջ 189:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 265, թ. 3 շրջ.:

<sup>3</sup> «Հայերն աշխարհում» հանրագիտական համառոտ բառարան, էջ 35:

<sup>4</sup> *Գասպարյան Մ.*, Գոյներ նույն խճանկարից, էջ 109:

Բուլղարիայի հայերի թիվը, համաձայն տարբեր աղբյուրների, 1950-1990թթ. հիմնականում հաշվվում էր 25 հազար՝ երբեմն տատանվելով 15-24 հազարի միջև.

1950թ.	25 հազ. <sup>1</sup>	1965թ.	25 հազ. <sup>2</sup>	1980թ.	27 հազ. <sup>3</sup>
1955թ.	21 հազ. <sup>4</sup>	1966թ.	25 հազ. <sup>5</sup>	1984թ.	25 հազ. <sup>6</sup>
1956թ.	24 հազ. <sup>7</sup>	1967թ.	23 հազ. <sup>8</sup>	1985թ.	25 հազ. <sup>9</sup>
1960-ական թթ. սկիզբ	25 հազ. <sup>10</sup>	1968թ.	25 հազ. <sup>11</sup>	1980-ական թթ. կեսեր	20 հազ. <sup>12</sup>
1964թ.	24 հազ. <sup>13</sup>	1972թ.	25 հազ. <sup>14</sup>	1990թ.	15 հազ. <sup>15</sup>

<sup>1</sup> «Հայրենիք», Բոստոն, 1950, թիվ 6, էջ 109:

<sup>2</sup> *Խաթանասեան Ե.*, նշվ. աշխ., էջ 28: Իսկ այլ աղբյուրի համաձայն՝ 24 հազար, տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 27.I.1965, էջ 3:

<sup>3</sup> *Համազասպյան Վ.*, նշվ. աշխ., էջ 19:

<sup>4</sup> «Զարթոնք», Բեյրութ, 30.VI.1955, էջ 2:

<sup>5</sup> «Մասիս», Բեյրութ, 18.XII.1966, էջ 5: Նան՝ *Տեմիրճեան Վ.*, նշվ. աշխ., էջ 502:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 13, թ. 2-3:

<sup>7</sup> «Զարթոնք», Բեյրութ, 9.XII.1956, էջ 2: Նույնը տե՛ս «Արարատ», Բեյրութ, 13.XII.1956, էջ 2: Ըստ այլ աղբյուրի՝ 25 հազար, տե՛ս «Սովետական Հայաստան», Երևան, 1956, թիվ 12, էջ 27:

<sup>8</sup> «Արարատ», Բեյրութ, 24.I.1967, էջ 2:

<sup>9</sup> *Ոսկանյան Ա.*, Մփյուռքահայության թվական կազմը, էջ 48:

<sup>10</sup> *Խուրշուդյան Լ.*, նշվ. աշխ., էջ 21:

<sup>11</sup> «Արարատ», Բեյրութ, 10.IX.1968, էջ 3:

<sup>12</sup> *Ղասաբյան Զ.*, Ակնարկներ բուլղարահայ համայնքների պատմության (1896-1970), էջ 251:

<sup>13</sup> «Զարթոնք», Բեյրութ, 5.XII.1964, էջ 2: Նան՝ «Սովետական Հայաստան», Երևան, 1964, թիվ 7, էջ 30:

<sup>14</sup> *Եղիայեան Բ.*, նշվ. աշխ., էջ 890: Ըստ ՀԽՍՀ արտգործմինիստրության քաղաքական ինֆորմացիայի բաժնի վարիչի 1975թ. տեղեկանքի՝ Բուլղարիայում ապրում էր 24 հազար հայ, տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 573, թ. 1:

<sup>15</sup> *Սվազյան Գ.*, նշվ. աշխ., էջ 144: Ըստ այլ աղբյուրի՝ 20-22 հազար, տե՛ս «Մփիուք», Բեյրութ, 1990, թիվ 11, էջ 11: 2001թ. դրությամբ Բուլղարիայում մնացել էր 12 հազար հայ, բայց ընդհանուր հայերի թիվը 40-50 հազար էր, մեծամասնությունը 1990-ական թթ. Հայաստանից գաղթածներն էին, տե՛ս *Tchilingirian H.*, նշվ. աշխ., էջ 32:

Հ.Աճեմյանը Վ.Համազասպյանին է ներկայացնում բուլղարահայության ծանրագույն վիճակը, որը բուլղարական պետական քաղաքականության հետևանք էր. «...հայ եկեղեցին մասամբ մը հոս չէզոքացուած է եւ ալ դադրած է ձգողական ոյժ մը ներկայացնել: ...Հայ հանրային հասարակական կազմակերպութիւնները այլեւս իրենց գոյութիւնը կորսընցուցած են: Կը մնայ միմիայն «Երեւան» մշակութային միութիւնը, որուն գործունէութիւնը սակայն սահմանափակուած է, քանի որ անոր կողքին չէ կարելի ստեղծել նախապէս գոյութիւն ունեցող մարգական եւ այլ կազմակերպութիւններ, որոնք պիտի կարենային մեր մատաղ սերունդը ներգրաւել ու ազգային-հայրենասիրական զգացումներ զարգացնել իր մէջ»<sup>1</sup>:

Եթէ ամբողջ Բուլղարիայի հայության թիվը հաճախ ներկայացվում էր մոտավորապէս, ապա 1966-1976թթ. ըստ բնակավայրերի թվաքանակի փոփոխությունը հնարավորություն է տալիս ավելի հստակ տեսնել արտագաղթը, ինչին, սակայն, խանգարում են ներքոշարադրյալ որոշ բնակավայրերի պարագայում կիրառված հնացած տվյալները և մոտավոր գնահատականները.

	1966 <sup>2</sup>	1971 <sup>3</sup>	1976 <sup>4</sup>
Պլովդիվ	6000	5000	5500
Սոֆիա	4000	4000	4000
Վառնա	3500	3800	3200

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 265, թ. 3 շրջ.:

<sup>2</sup> «Մասիս», Բեյրութ, 18.XII.1966, էջ 5:

<sup>3</sup> Մոտ 7 հազար հայ էլ բնակվում էր Հասկովո, Յամբոլ, Սլիվեն, Պազարջիկ, Տոլբուխին և այլ քաղաքներում, տե՛ս *Ղասաբյան Ջ.*, Ակնարկներ բուլղարահայ համայնքների պատմության (1896-1970), էջ 235:

<sup>4</sup> Մյուս բնակավայրերում հայերի թիվը հետևյալն էր. Տոլբուխին՝ 200, Ստարա Ջագորա՝ 350, Պազարջիկ՝ 200, Սիլիստրա՝ 180, Այաոս՝ 100, Քրճալի՝ 70, տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 8, գ. 197, թ. 10:



	1966	1971	1976
Ռուսե	1880	1800	1700
Բուրգաս	1450	1300	1100
Հասկովո	800	-	680
Սլիվեն	700	-	465
Շումեն	600	-	490

Մինչդեռ «Երևան» կազմակերպության կենտրոնական վարչության նախագահ, Բուլղարիայի խորհրդարանի անդամ Տիրան Բարիկյանը շատ ավելի լավատես էր համայնքի ապագայի հարցում: Դատելով 1988թ. նրա հնչեցրած հայտարարությունից՝ համայնքն ամենևին էլ անկում չէր ապրում. «Եվ ես չեմ կրնար համաձայն ըլլալ որոշ շրջանակներու մեջ գոյություն ունեցող այն մտայնությանը, թե բուլղարահայ գաղութը հոգեվարք կապրի, ընդհակառակը, կրնամ վստահաբար ըսել, թե երթալով ան առավել կծաղկի, կլեցվի հայկականությամբ, ազգային որակներով ու հոգեբանությամբ»<sup>1</sup>: Այսինքն՝ համայնքի ղեկավարությունը ևս, ինչպես խորհրդահայ իշխող շրջանակները, չէր ընդունում բուլղարահայ համայնքում առկա բացասական իրողությունները (ազգային կյանքի կազմակերպման դժվարություններ, արտագաղթ և այլն):

### *Բուլղարահայերն ԱՄՆ-ում*

1962թ. փորձելով որոշել ԱՄՆ եկած ռումինահայերի և բուլղարահայերի հստակ թվաքանակը՝ Կ.Գևորգյանն այն հասցնում էր 700-ի՝ դրա մեջ ներառելով նաև այդ տարի Բուլղարիայից ԱՄՆ

<sup>1</sup> «Հայրենիքի ձայն», Երևան, 27.1.1988, էջ 7:

գաղթողների հավանական թիվը<sup>1</sup>: Բուլղարահայերը մեծ թիվ էին կազմում հատկապես Լոս Անջելեսում: Եթե 1964թ. Հոլիվուդի հայերի մեծամասնությունը պարսկահայեր և ռումինահայեր էին<sup>2</sup>, ապա 1970թ.՝ իրանահայեր, ռումինահայեր և բուլղարահայեր<sup>3</sup>: Չնայած դրան՝ 1981թ. Կալիֆորնիայում անցկացված հարցման արդյունքում պարզվեց, որ ԱՄՆ գաղթած հայերի շրջանում Արևելյան Եվրոպայից գաղթած հայերը կազմում են ընդամենը 2%, մինչդեռ 31%-ը՝ Լիբանանից, 20%-ը՝ Իրանից և այլն<sup>4</sup>: Արդեն 2007թ. կատարված հետազոտության տվյալներով թե՛ Ռումինիայից, թե՛ Բուլղարիայից ԱՄՆ եկած հայերը ԱՄՆ հայ համայնքի 1%-ից էլ պակաս էին կազմում<sup>5</sup>: Իսկ ըստ 2010թ. մարդահամարի՝ Լոս Անջելեսի հայերից 490-ն էին այստեղ եկել Բուլղարիայից<sup>6</sup>:

Բուլղարահայերի և ռումինահայերի փոխադրման գործում, բացի ԱՆՉԱ-ից և ՀՕՄ-ից, կարևոր դեր ուներ նաև ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը, որը հոգաց տեղափոխման ծախսերը՝ ԱՆՉԱ-ի կողմից ապագայում մաս առ մաս վճարելու պայմանով<sup>7</sup>: Հատկապես Լոս Անջելեսում 1960-ական թթ. ԱՆՉԱ-ի միջոցով ժամանած գաղթականները սկզբնական շրջանում բնակվում էին այդ կազմակերպության անդամների և աջակիցների բնակարաններում<sup>8</sup>: 1965թ. ԱՄՆ ժամանածների ընդունելության մա-

<sup>1</sup> *Գեորգեան Կ.*, Ամենուն տարեգիրքը 1963, Ժ. տարի, էջ 586:

<sup>2</sup> «Հայրենիք», Բոստոն, 7.VIII.1964, էջ 3:

<sup>3</sup> «Մասիս», Բեյրութ, 15.XI.1970, էջ 5:

<sup>4</sup> *Takooshian H.*, նշվ. աշխ., էջ 153:

<sup>5</sup> Tourism Market Research on the Armenian-American Diaspora Community, p. 8.

<sup>6</sup> *Գոսազեան Ժ.*, նշվ. աշխ., էջ 126:

<sup>7</sup> *Գեորգեան Կ.*, Ամենուն տարեգիրքը 1963, Ժ. տարի, էջ 586:

<sup>8</sup> «Հայրենիք», Բոստոն, 3.VIII.1961, էջ 3:

սին կարդում ենք. «Բազմաթիւ հայրենակիցներ, որոնք Նիւ Եորքը հաստատուած են վերջին մէկ-երկու տարիներու ընթացքին, եկած էին հանդիպելու իրենց բարեկամներուն, զանոնք հիւրասիրելու համար իրենց համեստ բնակարաններուն մէջ, խնայելով պանդոկի յաւելեալ ծախքերը»<sup>1</sup>:

Նորեկներն ինտեգրվում էին բավական արագ և սկսում աջակցել իրենցից հետո եկածներին. «Անչա»յի ներկայացուցիչները, ու նախապէս եկած ընտանիքներ, իրենց կարելին կընեն նորեկները հիւրասիրելու եւ անոնց բնակարան ու գործ հայթայթելու համար: Ու քանի մը ամիսներ յետոյ, մեծագոյն մասը այդ երէկուան գաղթականներուն, կը դառնան ինքնաբաւ եւ գոհունակ՝ կուգան դիմաւորելու իրենց նորեկ հայրենակիցներն ու բարեկամները»<sup>2</sup>:

ԱՄՆ եկած բուլղարահայերը և ռումինահայերը կազմակերպում էին զանազան միջոցառումներ<sup>3</sup>: Ընդհանրապէս հատկանշական է բուլղարահայերի համագործակցությունը ռումինահայերի հետ<sup>4</sup>:

Բուլղարահայերի գործունեությունը ստացավ նաև համակարգված ձևաչափ՝ Լոս Անջելէսում ստեղծվեց բուլղարահայ հայրենակցական միություն: Դա ընդգծում է այն, որ այստեղից նշանակալի թվով հայեր են եկել, որոնք պահպանել են ենթատեղ-

<sup>1</sup> Նույն տեղում, 25.VIII.1965, էջ 1:

<sup>2</sup> Նույն տեղում, 7.XI.1963, էջ 2:

<sup>3</sup> Օրինակ, ամենամյա պարահանդեսներ, տե՛ս «Ազդակ», Բեյրութ, 23.V.1963, էջ 3:

<sup>4</sup> 1987թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա-ի՝ ԱՄՆ և Կանադա հովվապետական այցի շրջանակներում, Նյու Յորքում՝ «Հայկ և Ալիս Գավուքճյան» սրահում հանդիպմանը մասնակցում էին ոչ միայն ռումինահայերը, այլև բուլղարահայերը (մոտ հազար հոգի), տե՛ս «Էջմիածին», 1988, թիվ 1-3, էջ 54:

նիկ ինքնության տարրեր, քանի որ, բացի նրանցից, Լոս Անջելեսում գործում են միայն իրանահայ, իրաքահայ, պոլսահայ, ռումինահայ և հունահայ հայրենակցական միություններ (նկատի ունենք Սփյուռքի ելքի այլ երկրները, քանի որ կան նաև Հայաստանի տարբեր բնակավայրերի հայերին միավորող դասական հայրենակցական միություններ)<sup>1</sup>:

Այսպիսով՝ 1950-ական թթ. սկսած՝ հազարավոր բուլղարահայեր արտագաղթեցին Արևմուտքի մի շարք երկրներ: Նրանց գաղթն ուներ բազում զուգահեռներ ռումինահայերի գաղթի հետ, քանի որ կազմակերպվում էր միաժամանակ և նույն կառույցի միջոցով: Չնայած բուլղարահայերի մի մասը տեղափոխվեց Հարավային Ամերիկա, եվրոպական տարբեր պետություններ, Կանադա, Ավստրալիա, սակայն նրանց մեծամասնությունը հաստատվեց ԱՄՆ-ում: Այստեղ, ռումինահայերի, Մերձավոր Արևելքից և այլ տարածաշրջաններից եկած հայերի հետ, նրանք մասնակից դարձան հայ համայնքի բնականոն կենսագործունեությանը:

---

<sup>1</sup> *Գոսագեան Շ.*, նշվ. աշխ., էջ 145:

## ԱՐՏԱԳԱՂԹԸ ԿԻՊՐՈՍԻՑ

1950-ական թթ. Կիպրոսում քաղաքական դրությունը լարվեց՝ վերաճելով զինված բախումների: Ի վերջո, բրիտանական գաղութատիրության դեմ պայքարը 1960թ. հանգեցրեց Կիպրոսի անկախացմանը: Սակայն ժողովրդի զգալի շրջանակներում տիրապետող էր մնում էնոզիսի՝ Հունաստանի հետ վերամիավորման գաղափարը, ինչը բնակչության ավելի քան 18%-ը կազմող թուրքերի համար անընդունելի էր: Այս իրողություններն առավել սրվեցին 1963-1964թթ., իսկ 1974թ. հարկադրեցին տասնյակ հազարավորներին գաղթել երկրից:

Կիպրոսից արտագաղթը կարելի է բաժանել մի քանի փուլերի՝ 1955-1959թթ. (գաղթեց 29 հազար հոգի), 1960-ական թթ. (շուրջ 50 հազար), 1970-1973թթ. (32 հազար): 1953-1973թթ. արտագաղթի 75%-ն ուղղված էր Մեծ Բրիտանիա, 8-10%-ը՝ Ավստրալիա, 5%-ը՝ Հյուսիսային Ամերիկա: 1974-1979թթ. գաղթեց 51.500 հոգի, 15 հազար հոգի մեկնեց արտագնա աշխատանքի: Այս անգամ ամենամեծ թիվը (35%) տեղափոխվեց Ավստրալիա, որին հաջորդող ուղղություններն էին Հյուսիսային Ամերիկան, Հունաստանը և Մեծ Բրիտանիան: 1980-1986թթ. տնտեսական կացության բարելավման արդյունքում արտագաղթողների թիվը կազմեց ընդամենը 2 հազար հոգի, միաժամանակ 2850 հոգի վերադարձավ<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Cyprus: A Country Study, ed. by Solsten E., Washington, D.C.: Federal Research Division, Library of Congress, 1993, p. 59-61.

Արտագաղթի միտումը չըրջանցեց նաև հայ համայնքը: 1945թ. Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության տվյալներով՝ Կիպրոսում կար 5 հազար հայ (մեծամասնությունը՝ զբաղված արհեստագործությամբ, նաև առևտրով)<sup>1</sup>: Ըստ նույն ընկերության 1946թ. տեղեկանքի՝ Կիպրոսում կար 4 հազար հայ<sup>2</sup>: Այս թիվը հաստատվում է ինչպես նույն թվականին այլ աղբյուրի կողմից<sup>3</sup>, այնպես էլ հետագայում<sup>4</sup>:

1955-1959թթ. հակազաղութատիրական պայքարի ժամանակ երկրում ստեղծված վիճակի պատճառով մոտ 900 հայ Կիպրոսից տեղափոխվեց Մեծ Բրիտանիա<sup>5</sup>: Արդյունքում՝ 4549 հոգու հասած համայնքից 1960թ. մնաց 3628-ը<sup>6</sup>:

Ըստ Կիպրոսի 1960թ. պաշտոնական մարդահամարի՝ հայերի թիվը 3627 էր<sup>7</sup>: Նույն թվականին հայերի մոտավոր տեղաբաշխումը հետևյալն էր. Նիկոսիայում՝ 2500, Լառնակայում՝ 800, Լիմասոլում՝ 250, Ֆամագուստայում՝ 150<sup>8</sup>: Հայ ավետարանա-

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 89, թ. 53:

<sup>2</sup> Նույն տեղում, ֆ. 709, ց. 1, գ. 51, թ. 37:

<sup>3</sup> «Էջմիածին», 1946, թիվ 1, էջ 62: Նաև՝ *Խրչրքեան Տ.*, «Ոսկեմատեան հայ ավետարանականութեան», հ. Բ, Պէյրոս, 1951, էջ 211: Նույն ժամանակ Նիկոսիայում հայ ավետարանականների թիվը 135 էր, իսկ Լառնակայում՝ 95, տե՛ս նույն տեղում, էջ 212:

<sup>4</sup> «Հայրենիք», Բոստոն, 1951, թիվ 10, էջ 111: 1944 թ., ըստ ՀԽՍՀ արտգործող կոմ Ս. Կարապետյանի տեղեկանքի՝ Կիպրոսի հայերի թիվը 25 հազար էր, որը, անշուշտ, խիստ հեռու էր իրականությունից, տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 10, թ. 1: Այս նույն թիվն է նշված ԽՍՀՄ արտգործող կոմ Մոլոտովին 1945թ. Ս. Կարապետյանի հաղորդած տեղեկատվության մեջ, տե՛ս նույն տեղում, գ. 82, թ. 6:

<sup>5</sup> *Hadjilyra A.*, *The Armenians of Cyprus*, Nicosia, 2012, p. 14. Օրինակ, Լառնակայից արտագաղթը սկսվեց 1956թ., տե՛ս «Ազդակ», Բեյրոս, 21.VIII.1974, էջ 3:

<sup>6</sup> *Hadjilyra A.*, *The Armenians of Cyprus*, Larnaca, 2009, p. 21.

<sup>7</sup> *Cyprus: A country study*, p. 58.

<sup>8</sup> 1950թ. Ֆամագուստայում ապրում էր 112 հայ, դպրոցն ուներ 24 աշակերտ, տե՛ս «Արարատ», Բեյրոս, 21.V.1950, էջ 6:

կանների թիվը 200 էր, որոնց մեծ մասը բնակվում էր Նիկոսիայում, մնացածն էլ՝ Լառնակայում: Իսկ հայ կաթոլիկ ընտանիքների թիվն ընդամենը մեկ տասնյակ էր<sup>1</sup>:

Հայերը հիմնականում զբաղված էին արհեստներով և առևտրով: Մերձավոր և Միջին Արևելքի այլ երկրների հայկական համայնքների համեմատ՝ հայերի կենսամակարդակն ավելի բարձր էր<sup>2</sup>: Չնայած հայ առևտրականների և մանր բուրժուազիայի դերը բավական նշանակալի էր, տարվում էր նրանց դուրսմղման քաղաքականություն: Կային նաև գործազուրկներ, այստեղ հեռանկար չտեսնողներ, ինչի արդյունքում անգլիական հպատակություն ունեցող հայերի մի մասը սկսել էր արտագաղթել Արևմուտք, առավելաբար Անգլիա<sup>3</sup>:

Ըստ Կիպրոսում ԽՍՀՄ դեսպանության 1961թ. տեղեկանքի՝ նախորդ երկու տարիների ընթացքում մոտ 800 հայ լքել էր երկիրը և փոխադրվել Անգլիա, Հարավային Ամերիկա, Կանադա և այլուր՝ գործազրկության տնտեսական դժվարությունների, թուրքերի և հույների միջև թշնամանքի արդյունքում ֆիզիկական ոչնչացման վախի պատճառով: Այդպիսով 1961թ. հոկտեմբերին Կիպրոսի հայերի թիվը հաշվվում էր 3200-3300 հոգի (2200-ը՝ Նիկոսիայում, 600-ը՝ Լառնակայում, 120-ը՝ Ֆամագուստայում և այլուր)<sup>4</sup>: Կիպրոսում ԽՍՀՄ դեսպանատանը 1961թ. կայացած զրույցների ընթացքում, սակայն, հայկական համայնքի ներկայացուցիչները նշում էին, որ այստեղ մնացել է լոկ 2-2,5

<sup>1</sup> *Գեորգեան Կ.*, Ամենուն տարեգիրքը 1961, Ը. տարի, էջ 405:

<sup>2</sup> Նույնը վկայում է նաև Կ.Գևորգյանը, տե՛ս *Գեորգեան Կ.*, Ամենուն տարեգիրքը 1961, Ը. տարի, էջ 419:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 301, թ. 1-2:

<sup>4</sup> Նույն տեղում, թ. 1:

հազար հայ, քանզի նախորդող վերջին շրջանում մոտ հազար հայ տեղափոխվել էր Անգլիա, ԱՄՆ և այլ երկրներ<sup>1</sup>:

ԽՍՀՄ դեսպանության 1961թ. տեղեկանքը հաղորդում է, որ ՀԽՍՀ հայրենադարձություն սկսելու մասին լուրը ստանալուն պես հայերի արտագաղթը նկատելիորեն նվազել էր<sup>2</sup>: Ստեղծված կացությունում Կիպրոսի հայերի զգալի մասը ցանկանում էր հայրենադարձվել և դրա համար դիմում էր ԽՍՀՄ դիվանագիտական ներկայացուցչությանը՝ նշելով, որ հակառակ պարագայում անխուսափելի է գաղթն Արևմուտքի երկրներ, որտեղ հայերը ենթակա են ուժացման<sup>3</sup>:

1961թ. հոկտեմբերի դրությամբ 1962թ. հայրենադարձվելու համար գրանցվել էր 746 հոգի, որոնցից 270-ը՝ Մեծ Բրիտանիայի, 230-ը՝ Կիպրոսի քաղաքացիներ, իսկ 232-ը՝ առանց քաղաքացիության անձինք, նաև Ֆրանսիայի 2, Լիբանանի 6, Արաբական Միացյալ Հանրապետության 4 և Իրանի 2 քաղաքացիներ<sup>4</sup>:

Մակայն հայերի հայրենադարձությունը չէր խրախուսվում ինչպես Կիպրոսի իշխանությունների, այնպես էլ որոշ այլ պետությունների կողմից, որոնք ձգտում էին հայերին տեղափոխել իրենց երկրներ: Լիմասոլի հայ համայնքի հայրենադարձության կազմակերպման ներկայացուցիչները վկայում էին, որ 1962թ. Կիպրոսի ներքին գործերի նախարարը, ընդունելով իրենց, հրաժարվել էր որևէ աջակցություն ցուցաբերել հայրենադարձության խնդրում: Դրա փոխարեն նախարարն առաջարկել էր

---

<sup>1</sup>Նույն տեղում, ց. 2, գ. 37, թ. 1:

<sup>2</sup>Նույն տեղում, ց. 1, գ. 301, թ. 2:

<sup>3</sup>Նույն տեղում, ց. 2, գ. 37, թ. 3:

<sup>4</sup>Նույն տեղում, ց. 1, գ. 301, թ. 8:



մեկնել Անգլիա, Ավստրալիա կամ որևէ այլ երկիր, բայց ոչ ԽՍՀՄ<sup>1</sup>: Մեծ Բրիտանիան ևս փորձում էր հայրենադարձության փոխարեն հայերին ուղղորդել դեպի իր երկիր<sup>2</sup>:

Ըստ Կիպրոսում ԽՍՀՄ դեսպանության հաղորդած տեղեկությունների՝ 1963թ. ընթացքում հայրենադարձության կազմակերպմանը խոչընդոտել էին ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչները՝ հայերի շրջանում գովազդելով կենսապայմանների առավելություններն ԱՄՆ-ում, Անգլիայում, Կանադայում, Ավստրալիայում և կապիտալիստական այլ երկրներում<sup>3</sup>:

«Հայրենիք» ամսագիրը 1962թ. նշում էր, որ հայրենադարձության կազմակերպմամբ շահագրգռված չէին նաև համայնքի որոշ շրջանակներ. «Ու ահա ներգաղթի հարցը կը դառնայ... կտակի խնդիր մը, Բարեգործականի «հայրենասեր»ներուն համար, որոնք կը տեսնեն, թէ իրենց հաւատարիմ բազմութեան մեկնումով, պիտի չկրնան դաշտ գտնել՝ խաղերու եւ շահագործման համար, յանուն կտակներու գործադրութեան պարտականութեան...»

Այս «հայրենասեր»ները կրնան տարինէ՛ր շարունակ սփիւռքի մէջ դրախտի առասպելներ հիւսել սովետ հայրենիքին շուրջ, անոր վերելքն ու նոյնիսկ անկախութի՛ն պանծացնել, սակայն չեն ուզեր նաեւ կորսնցնել իրենց յաճախորդները, բարեսիրակա՛ն գործունէութեան համար...»<sup>4</sup>:

Այնուամենայնիվ, կիպրահայերի հայրենադարձությունը նպատակահարմար համարվեց<sup>5</sup> և մասամբ կենսագործվեց: 1962-

<sup>1</sup> Նոյն տեղում, ց. 2, գ. 50, թ. 1-2:

<sup>2</sup> «Հայրենիք», Բոստոն, 30.X.1962, էջ 2:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 330, թ. 4:

<sup>4</sup> «Հայրենիք», Բոստոն, 1962, թիվ 5, էջ 79:

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 101, թ. 1:

1964թթ. Կիպրոսից հայրենադարձվեց 505 հոգի<sup>1</sup>: Ամբողջ 1962-1982թթ. հայրենադարձության ցուցանիշով Կիպրոսը զիջում էր միայն Իրանին, Սիրիային, Եգիպտոսին և Թուրքիային<sup>2</sup>: Այս առումով կիպրահայ համայնքը (նաև թվական սակավության շնորհիվ) հայտնվեց բավական բարենպաստ իրավիճակում, եթե այն համեմատենք ավելի խոշոր համայնքների (օրինակ՝ Բուլղարիա, Ռումինիա) հետ, որտեղից ծավալվող շարունակական արտագաղթը չէր արժանանում Խորհրդային Հայաստանի ղեկավարության բավարար ուշադրությանը:

Կիպրոսի հույների և թուրքերի միջև հակամարտությունը հասկապես սրվեց 1963թ. դեկտեմբերին և 1964թ. սկզբին, երբ բախումների արդյունքում երկու կողմերից էլ զոհվեցին հարյուրավոր մարդիկ: Դրա հետևանքով առաջացան զգալի թվով փախստականներ: Կիպրոսի կառավարության հայտնած տվյալների համաձայն՝ 1964թ. հունվարի 20-ի դրությամբ Նիկոսիայի 241 հայ ընտանիք թողել էր բնակարանները, 54 տուն բռանգրավվել էր թուրքերի կողմից, կողոպտվել էր հայկական երեք խանութ, թուրքական կողմի վերահսկած տարածքում մնացել էր տասը հայ ընտանիք, 700-900 հայ անցել էր հունական թաղամասեր<sup>3</sup>: Փախստականների մեծամասնությունը հաստատվել էր ազգականների մոտ, ոմանք տներ էին վարձել, մի մասն էլ ապաստանել էր Մելգոնյան կրթական հաստատությունում: Հայկական բարեգործական կառույցները և անհատ մեծահարուստներն օգնություն էին ցուցաբերում նրանց<sup>4</sup>:

<sup>1</sup> Հաճախ հանդիպում է 600 թիվը, տե՛ս *Hadjilyra A., The Armenians of Cyprus, Nicosia, 2012, p. 14.*

<sup>2</sup> *Մելիքսեթյան Հ.*, նշվ. աշխ., էջ 299:

<sup>3</sup> «Հայրենիք», Բոստոն, 1.II.1964, էջ 2:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 346, թ. 3:

1964թ. «Ազդակ» թերթը Կիպրոսում հայերի կրած նյութական վնասների մասին գրում էր. «Անձնական տուներու կահկարասիները, և շատ մը խանութներու ապրանքները իսկոյն ենթարկուեցան թրքական կողոպուտի, այսպիսով շատ մը հայերուն քառասուն տարուան հալալ վաստակը մէկ օրէն միւսը մոխիրի վերածուեցաւ: Բարեբախտաբար, Ազգային Իշխանութեան արթուն հսկողութեան տակ կարելի եղաւ կարգ մը խանութներուն ապրանքները փրկել լման կողոպուտէ եւ անոնք յաջողեցան իրենց կեանքը վտանգելով իսկ յաջողցնել պարպումի ծրագիրը. այս բաները պատահեցան տարւան սկիզբի այն վտանգաւոր օրերուն՝ երբ ինքնակոչ «հայ ներկայացուցիչներ եւ առաջնորդներ» Լոնտոն փախչելով կը սպասէին որ կացութիւնը շտկուի եւ գան իրենք զիրենք «ներկայացուցիչ»ի հանգամանք տան յաչս օտարին»<sup>1</sup>:

Հայրենադարձության կոմիտեի անդամների 1964թ. փետրվարին հաղորդած տեղեկություններով՝ հայերին հասցված նյութական վնասը (նաև մնացած անշարժ գույքը՝ 750 հազար ֆունտ ստերլինգ) կազմում էր 1 մլն ֆունտ ստերլինգ: Նախորդ 2-3 տարիների ընթացքում մոտ հազար հայ հեռացել էր Կիպրոսից, որոնցից շուրջ 500-ը՝ ՀԽՍՀ, 500-ը՝ Կանադա<sup>2</sup>, Անգլիա, Լիբանան: 1964թ. սկզբին Կիպրոսում մնացել էր 2600 հայ, ընդ որում՝ մեծամասնությունը՝ Նիկոսիայում, 3 ընտանիք՝ Ֆամագուստայում, 35 ընտանիք՝ Լառնակայում և 10 ընտանիք՝ Լիմասոլում: Ենթադրվում էր, որ Կիպրոսում կմնա մոտ 500 հայ՝ առավել բարեկեցիկները: Կիպրոսի հայերի մեծամասնությունը ցանկա-

<sup>1</sup> «Ազդակ», Բեյրութ, 19.X.1964, էջ 3:

<sup>2</sup> Օրինակ, տե՛ս *Կապուտիկյան Մ.*, Խճանկար հոգու և քարտեզի գույներից, էջ 76:

նում էր տեղափոխվել այլ երկրներ: Հայրենադարձության կազմակերպման կոմիտե էր դիմել 35 ընտանիք՝ ՀԽՍՀ տեղափոխվելու համար<sup>1</sup>:

1964թ. ընթացքում զգալի թվով հայեր ժամանակավորապես մեկնել էին արտասահմանյան տարբեր երկրներ՝ իրենց ազգականների մոտ, ինչի արդյունքում այստեղ մնացել էր շուրջ 2 հազար հայ<sup>2</sup>, «եւ այս թիւն ալ արագաբար նուազելու վրայ է: Ամէն ոք կաշխատի ձեւով մը դուրս գալ Կիպրոսէն եւ հաստատուիլ աւելի ապահով եւ խաղաղ վայրեր»<sup>3</sup>: Մնացած հայերի տնտեսական դրությունը հետզհետե ծանրանում էր, ուստի ակնկալվում էր սփյուռքահայ այլ համայնքների աջակցությունը<sup>4</sup>: Կիպրահայ աղետյալներին օգնություն էին տրամադրում ամերիկահայ բարերարները, Շվեյցարիայի հայասերների միությունը<sup>5</sup>:

Եթե մինչև 1963-1964թթ. արտագաղթը հայերի թիվը շուրջ 3500<sup>6</sup> էր, ապա դրանից հետո իջավ մոտ 2 հազարի: Չնայած դրան, արդեն 1965թ.<sup>7</sup> և 1967թ.<sup>8</sup>, Կիպրոսում ԽՍՀՄ դեսպանության սվյալների համաձայն, այն հասնում էր 3 հազարի: 1965-1966թթ. գրականության մեջ հանդիպում ենք 4 հազար<sup>9</sup> և 3,5<sup>10</sup>

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 346, թ. 4:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 376, թ. 2:

<sup>3</sup> «Սփիւռք», Բեյրութ, 10.IX.1964, էջ 10:

<sup>4</sup> «Հայրենիք», Բոստոն, 28.X.1964, էջ 2:

<sup>5</sup> Նույն տեղում, 17.III.1965, էջ 2:

<sup>6</sup> *Խուրշուդյան Լ.*, նշվ. աշխ., էջ 21: Նաև՝ *Hadjilyra A.*, *The Armenians of Cyprus*, Larnaca, 2009, p. 16.

<sup>7</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 101, թ. 1:

<sup>8</sup> Նույն տեղում, ց. 1, գ. 395, թ. 1, 7: 1969թ. Գ.Մելիտինեցին ևս նշում է նույն թիվը, տե՛ս *Մելիտինեցի Գ.*, Մպրումներ: Հայ կեանքի մութ ու լուսաւոր իրականություններում հետ, հ. Բ, Պէյրութ, 1969, էջ 554:

<sup>9</sup> *Խաթանասեան Ե.*, նշվ. աշխ., էջ 28:

<sup>10</sup> *Տէմիրճեան Վ.*, նշվ. աշխ., էջ 502:

հազար թվերին: Սա, կարծում ենք, գաղթի ամբողջ ծավալը չնե-  
րառելու հետևանք է, քանզի, եթե նույնիսկ հաշվի առնենք Արև-  
մուտք մեկնած որոշ թվով հայերի վերադարձը, համայնքի թիվը  
չէր կարող հասնել 3,5, առավել ևս՝ 4 հազարի:

Արտագաղթը վտանգում էր նաև Կիպրոսում մնացող հայ  
համայնքի քաղաքական կարգավիճակը: Համայնքի ներկայա-  
ցուցիչները կողմնակից էին թե՛ հույներին, թե՛ թուրքերին, թե՛  
հայերին մշակութային ինքնավարություն տրամադրելուն և դեմ  
թուրքական առանձին վարչական միավորի ձևավորմանը: Դա  
իրականացնելու համար կիպրահայերը փորձում էին 1963-  
1964թթ. Կանադա, Անգլիա, Մերձավոր և Միջին Արևելքի երկր-  
ներ ու Ավստրալիա գաղթած հայերին վերադարձնել Կիպրոս,  
քանզի համայնքի թվաքանակի մեծացումը կնպաստեր այդ  
ծրագրի կենսագործմանը: Հայերը հանդես էին գալիս Կիպրոսի  
ամբողջականության օգտին, դեմ էին արտաքին միջամտությա-  
նը, միացմանը Հունաստանին<sup>1</sup> կամ Թուրքիայի ու Հունաստանի  
միջև բաժանմանը: Համայնքի գործիչներն աշխատում էին նաև  
թուրքերի կողմից 1963-1964թթ. հասցված վնասի փոխհատու-  
ցում ստանալու ուղղությամբ<sup>2</sup>:

Չնայած, ըստ Բ. Եղիայանի, 1972թ. Կիպրոսում կար 3.250  
հայ<sup>3</sup>, սակայն ավելի արժանահավատ են թվում Կիպրոսում

<sup>1</sup> Այս պարագայում տեղի ունենալիք մաքսային փոփոխություններն էապես կվնասեին կիպրահայերի տնտեսական գործունեությանը, տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 376, թ. 3: Անկախ դրանից էլ Կիպրոսի հույները փորձում էին հայերին դուրս մղել տնտեսությունից, տե՛ս նույն տեղում, գ. 443, թ. 2:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 395, թ. 4-5:

<sup>3</sup> Եղիայան Բ., նշվ. աշխ., էջ 894: 1972թ. հանդիպում ենք նաև 4 հազար թվին, որն, անշուշտ, չի համապատասխանում իրականությանը, տե՛ս «Զարթոնք», Բեյրութ, 26.III.1972, էջ 2:

ԽՍՀՄ դեսպանության 1971թ. տեղեկանքի տվյալները, համաձայն որոնց՝ այստեղ ապրում էր 2500 հայ<sup>1</sup>:

1974թ. հուլիսին տեղի ունեցավ Կիպրոսի պատմության ամենաճակատագրական իրադարձություններից մեկը՝ Թուրքիան գրավեց կղզու հյուսիսային հատվածը: Արդյունքում՝ կիպրահայ համայնքը կրեց նոր վնասներ՝ 75-80 ընտանիք (Կիրենիայում՝ 4-5 ընտանիք, Ֆամագուստա քաղաքի Վարոշա թաղամասի 40-50 ընտանիք և Նիկոսիայի արևմտյան հատվածում ապրող շուրջ 30 ընտանիք) դարձավ փախստական<sup>2</sup>: Այս ներխուժումից հետո ևս բազմաթիվ հայեր լքեցին Կիպրոսը՝ գլխավորապես գաղթելով Մեծ Բրիտանիա<sup>3</sup>, ինչպես նաև ԱՄՆ<sup>4</sup>:

1974թ. օգոստոսի կեսերին «Ազդակ» թերթի տեղեկությամբ Կիպրոսի հայերը տեղաբաշխված էին հետևյալ քաղաքներում. Նիկոսիա՝ 1500 հոգի, Լառնակա՝ 400, Ֆամագուստա՝ 130, Լիմասոլ՝ 400, Կիրենիա՝ 20: Հայ ավետարանականների թիվը 50 էր, որոնց մեծամասնությունը բնակվում էր Լառնակայում: Հայ կաթոլիկներից մնացել էին ընդամենը մի քանի ընտանիքներ<sup>5</sup>:

Ըստ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի 1975թ. Կիպրոսի հայ համայնքի մասին տեղեկանքի՝ այստեղ բնակվում էր մոտ 2500 հայ<sup>6</sup>, որոնցից 1500-ը՝ Նիկոսիայում,

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 60, թ. 2: Ըստ նույն տեղեկանքի՝ համայնքի ամենակազմակերպված ուժը, չնայած ՌԱԿ և ՀԲԸՄ բավական ակտիվ գործունեությանը, ՀՅԴ-ն էր, որն այստեղ ուներ 300 անդամ, տե՛ս նույն տեղում, թ. 4-5:

<sup>2</sup> Թուրքերը բարբարոսություններ գործեցին իրենց անցած տարածքների հայկական պատմամշակութային արժեքների նկատմամբ, տե՛ս *Քուչուկյան Պ.*, նշվ. աշխ., էջ 90:

<sup>3</sup> *Hadjilyra A.*, *The Armenians of Cyprus*, Nicosia, 2012, p. 14, 17.

<sup>4</sup> *Գոսազեան Շ.*, նշվ. աշխ., էջ 124:

<sup>5</sup> «Ազդակ», Բեյրութ, 20.VIII.1974, էջ 3:

<sup>6</sup> Ըստ ՀԽՍՀ արտգործմինիստրության քաղաքական ինֆորմացիայի բաժնի վարիչի 1975թ. տեղեկանքի՝ Կիպրոսում ապրում էր 3 հազար հայ, տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 573, թ. 1:

400-ը՝ Լառնակայում, 400-ը՝ Լիմասոլում, 130-ը՝ Ֆամագուստայում, 20-ը՝ Կիրենիայում<sup>1</sup>: Համաձայն տեղեկանքի՝ Կիպրոսից գաղթը դադարել էր, և արտագաղթած հայերի ընդհանուր թիվը հասնում էր մոտ 2 հազարի<sup>2</sup>: 1974թ. «Ազդակ» թերթը ևս այդ թիվը հաշվում էր 2 հազար<sup>3</sup>:

Չնայած Կիպրոսից տեղի ունեցող արտագաղթին, միաժամանակ նկատվել է նաև զգալի թվով հայերի ներհոսք արդեն 1940-ական թթ. երկրորդ կեսից: Առաջին հերթին 1948թ. Պաղեստինից արտագաղթող որոշ հայեր տեղափոխվեցին այստեղ, որոնց 1950-ական թթ. երկրորդ կեսին միացան եգիպտահայերը: 1970-1980-ական թթ. Կիպրոս տեղափոխվեցին որոշ թվով սիրիահայեր, 1975-1990թթ. քաղաքացիական պատերազմի ժամանակ՝ լիբանանահայեր, իսկ 1970-ական թթ. վերջից՝ իրանահայեր<sup>4</sup>:

Այսպիսով՝ 1955-1970-ական թթ. շուրջ 2 հազար կիպրահայ արտագաղթեց զանազան երկրներ, շուրջ 500-ն էլ հայրենադարձվեց: Գաղթողների հիմնական ուղղությունն Անգլիան էր (գերագանցապես Լոնդոնը), որը պայմանավորված էր այն հանգամանքով, որ կիպրահայերի մեծամասնությունը Կիպրոսի անկախացումից անմիջապես առաջ ստացավ բրիտանական

<sup>1</sup> Ըստ տեղեկանքի՝ Կիպրոսում կար 50 հայ լուսանկարիչ, որոնց մեծամասնությունն ապրում էր Լառնակայում:

<sup>2</sup> Նույն տեղում, ֆ. 875, ց. 13, գ. 209, թ. 6-7:

<sup>3</sup> «Ազդակ», Բեյրութ, 20.VIII.1974, էջ 3:

<sup>4</sup> Լուսարձակ հանրային մեր ներկայ կեանքին վրայ, խմբ.՝ Թ. Վեհապետեան, հ. Բ, Պեյրութ, 1982, էջ 14: Նաև՝ *Hadjilyra A., The Armenians of Cyprus, Larnaca, 2009, p. 15-17*: Նաև՝ ՀԱԱ, ֆ. 1418, ց. 3, գ. 72, թ. 5: Լիբանանից Կիպրոս եկող հայերին օգնում էր նաև ՀԲԸՄ-ն. «Լիբանանի քաղաքացիական կռիւներուն հետեւանքով Կիպրոս ժամանող ազգայիններէն ոմանք պատասպարուեցան Հ. Բ. Ը. Միութեան Լառնաքայի հաւաքավայրը», Հայ բարեգործական ընդհանուր միութիւն: Ընդհանուր տեղեկագիր 1978 տարեշրջանի, էջ 35:

անձնագրեր: Հետագայում արդեն շատերը մեկնում էին Մեծ Բրիտանիա՝ վերամիավորվելու իրենց ընտանիքի անդամների հետ: Եվ 1980-ական թթ. բավական դժվար էր գտնել մի կիպրահայի, որը չունենար Կիպրոսից գաղթած բարեկամ կամ ընկեր Լոնդոնում<sup>1</sup>: Բացի Մեծ Բրիտանիայից, զգալի թվով կիպրահայեր տեղափոխվեցին Ավստրալիա<sup>2</sup>, ԱՄՆ<sup>3</sup>, Կանադա, Լիբանան, նաև Հունաստան ու Վենեսուելա<sup>4</sup> և այլուր:

1970-ական թթ. վերջին և 1980-ական թթ. առկա են Կիպրոսի հայության թվաքանակին վերաբերող իրարամերժ մի շարք տվյալներ: Եթե 1978թ. Կիպրոսի հայերի թիվը շուրջ 2 հազար էր<sup>5</sup>, ապա 1980թ. նշվում է 3 հազար<sup>6</sup>, իսկ 1984թ. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ.Համազասպյանի՝ ՀԿԿ կենտկոմին ներկայացրած տեղեկանքում՝ 4 հազար թիվը<sup>7</sup>: Սակայն, տեղաբաշխման թվաքանակը ներկայացնելու պարագայում, այն ավելի ցածր էր: 1986թ. Կիպրոսի հայերի թիվը հաշվվում էր մոտ 2 հազար, որից 1200-ը՝ Նիկոսիայում, 350-ը՝ Լաոնակայում, 350-ը՝ Լիմասոլում, ինչպես նաև որոշ այլ բնակավայրերում<sup>8</sup>: Արդեն 1990թ. Կիպրոսի հայերի թի-

<sup>1</sup> *Talai V.A., Armenians in London: The Management of Social Boundaries*, Manchester University Press, 1989, p. 65.

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 426, թ. 1: 1970թ. Ավստրալիայում Հունաստանից և Կիպրոսից եկած հայերի թիվը միասին 200 հոգի էր, տե՛ս նույն տեղում, ֆ. 709, ց. 9, գ. 188, թ. 132:

<sup>3</sup> ԱՄՆ տեղափոխվող կիպրահայերի փոխադրման հարցերով զբաղվեց ԱՆՉԱ-ն, տե՛ս *Zadoian H.*, նշվ. աշխ., էջ 77: Սակայն, ի տարբերություն որոշ այլ երկրներից հայերի արտագաղթի, կիպրահայերի պարագայում ԱՆՉԱ-ն չստանձնեց միակ կազմակերպչի և համակարգողի դերը՝ չնայած դրա վերաբերյալ որոշ կանխատեսումներին, տե՛ս «Ձարթօսնք», Բեյրութ, 1.IX.1964, էջ 3:

<sup>4</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 370, 539:

<sup>5</sup> «Հայրենիք», Բոստոն, 23.V.1978, էջ 3:

<sup>6</sup> *Համազասպյան Վ.*, նշվ. աշխ., էջ 19:

<sup>7</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 13, թ. 2: Նույն թիվը տե՛ս նաև *Ոսկանյան Ա.*, Սփյուռքահայության թվական կազմը, էջ 49:

<sup>8</sup> «Ազդակ», Բեյրութ, 29.VII.1986, էջ 4:



վր 2,5 հազար էր<sup>1</sup>: 1998թ. Կ.Դալլաքյանը Կիպրոսի հայերի թիվը հաշվում էր 2-2,5 հազար<sup>2</sup>: Այս տարբերությունները, իհարկե, պայմանավորված են անճշտություններով, որոշ դեպքերում՝ ավելի հին տեղեկությունների կիրառմամբ, սակայն նաև միգրացիոն տեղաշարժերով, որոնք տվյալ ժամանակաշրջանում դրական էին՝ պայմանավորված առավելաբար Լիբանանից ներհոսքով:

Քաղաքական ծանր դրությունը վտանգեց նաև կիպրահայ մշակութային և կրթական կյանքը: 1974թ. թուրքական ներխուժումից հետո նույնիսկ հարցականի տակ դրվեց Մելգոնյան կրթական հաստատության գոյության նպատակահարմարությունը: Իսկ այն սփյուռքահայ մտավորականության և համայնքային գործիչների կարևոր դարբնոց էր ոչ միայն Կիպրոսի, այլև Հունաստանի, Լիբանանի, Սիրիայի, Պաղեստինի, Հորդանանի, Ֆրանսիայի և այլ երկրների հայության համար<sup>3</sup>: Չնայած ստեղծված դժվարություններին՝ հաստատությունը շարունակեց իր գործունեությունը (մինչև 2005թ.) և 1980-ական թթ. ուներ ավելի քան 320 աշակերտ աշխարհի 20 երկրներից<sup>4</sup>:

Արտագաղթը երևում էր Կիպրոսի հայկական դպրոցների աշակերտների թիվը դիտարկելիս: Եթե 1959-1960թթ. ուսումնական տարում Նիկոսիայի Մելիքյան-Ուզունյան վարժարանի աշակերտների թիվը 264 էր, իսկ մանկապարտեզի սաները՝ 55, Լառնակայի ազգային վարժարանի աշակերտների թիվը (ներ-

<sup>1</sup> *Ավագյան Գ.*, նշվ. աշխ., էջ 144:

<sup>2</sup> *Դալլաքյան Կ.*, Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 1998, էջ 229:

<sup>3</sup> *Մելքոնյան Է.*, նշվ. աշխ., էջ 419-420:

<sup>4</sup> *Дятлов В., Мелкоян Э.*, նշվ. աշխ., էջ 56:

առյալ մանկապարտեզը և նախակրթարանը)<sup>1</sup> 70, Լիմասոլի ազգային վարժարանի աշակերտների թիվը՝ 40, իսկ Ֆամագուստայինը՝ 24<sup>1</sup>, ապա 1972թ. Կիպրոսի 4 նախակրթարանները միասին ունեին ընդամենը 250 աշակերտ<sup>2</sup>:

### ***Կիպրահայերը Մեծ Բրիտանիայում***

Ինչպես արդեն նշվեց, արտագաղթած կիպրահայերի հիմնական մասը տեղափոխվեց Մեծ Բրիտանիա: 1955-1959թթ. գաղթող կիպրահայերը գրեթե ամբողջությամբ տեղափոխվեցին այստեղ<sup>3</sup>, սա առավելապես շարունակվեց նաև 1960-1970-ական թթ: Նրանք հիմնականում հաստատվում էին Լոնդոնում: Կ.Գևորգյանը, 1965թ. խոսելով վերջին շրջանում Անգլիա եկած հայերի մասին (որի արդյունքում հայերի թիվը հասնում է 4 հազարի), նրանց մեջ որպես հիմնական խումբ առանձնացնում է կիպրահայերին<sup>4</sup>: Եվ իսկապես, Կիպրոսի հայերը հանդիսացան Անգլիայի համայնքի կորիզը, որոնց հետագայում միացան Լիբանանի, Սիրիայի, Իրաքի և Իրանի հայերը<sup>5</sup>:

Լոնդոնի հայ համայնքի ժողովրդագրական պատկերի վրա Կիպրոսի հայերի թողած ազդեցության մասին սփյուռքահայ գործիչ Ստեփան Շահապազը գրում է. «Իր թիւը շատ զգալիորէն աւելցաւ՝ բաղդատաբար հինին հետ, մանաւանդ երբ

---

<sup>1</sup> *Գեորգեան Կ.*, Ամէնուն տարեգիրքը 1961, Ը. տարի, էջ 403-404:

<sup>2</sup> *Եղիայեան Բ.*, նշվ. աշխ., էջ 896:

<sup>3</sup> Տե՛ս նաև «Արարատ», Բեյրութ, 5.VII.1958, էջ 3:

<sup>4</sup> *Գեորգեան Կ.*, Ամէնուն տարեգիրքը 1965, ԺԲ. տարի, Պեյրութ, 1965, էջ 390:

<sup>5</sup> «Հայրենիք», Բոստոն, 21.XII.1984, էջ 3: Այս ժամանակ Մեծ Բրիտանիա եկան նաև որոշ թվով հայեր Հնդկաստանից և Հեռավոր Արևելքից, տե՛ս Ovena: A directory of the Armenian diaspora: Personalities & organisations: Ով-է-Նա: Սփիւռքահայ հասցեարան, Beirut, 1980, p. 25.

վերջին տարիներուն Կիպրահայեր հոն գաղթեցին: Նորեկներն են, ուրեմն, որ բացարձակ մեծամասնություն կը կազմեն, հիմա, Լոնտոնահայ գաղութին մէջ»<sup>1</sup>: Իսկ 1972թ. «Մասիս» թերթը վկայում է, որ Լոնդոնի գաղութի մեծամասնությունը Կիպրոսից եկած հայերն են<sup>2</sup>: Չնայած սկզբնական շրջանի դժվարություններին և ոմանց վերադարձին<sup>3</sup>՝ կիպրահայերը կարողացան ինտեգրվել և հարմարվել իրենց նոր կյանքին:

Կիպրահայերի ներհոսքը կարևոր փոփոխությունների հանգեցրեց հատկապես Լոնդոնի համայնքում: Նրանց, ինչպես նաև լիբանանահայերի ու իրանահայերի գալուստը, օրինակ, հարկադրեց համայնքին ունենալ Լոնդոնի երկրորդ՝ Սբ Պետրոս հայկական եկեղեցին: Այս առիթով պետք է նշել, որ չնայած Կիպրոսի հայկական գաղութը գտնվում էր Անթիլիասի կաթողիկոսության ենթակայության տակ, իսկ Լոնդոնի համայնքը, ուր գալիս էին կիպրահայերը, Էջմիածնի, դա խնդիրներ չէր առաջացնում նրանց կամ Մերձավոր Արևելքի այլ երկրներից եկած հայերի համար<sup>4</sup>:

Կիպրոսից եկած հայերը լծվեցին նաև տեղի կրթական կյանքի զարգացման գործին: Լառնակայի հայկական վարժարանի նախկին ուսուցչուհի Անի Պատագճյանն այդ մասին նշում էր. «Որոշած եմ շարունակել, որովհետև Կիպրոսի հայ վարժարանին ջերմ մթնոլորտեն զրկվելէս ի վեր ինձի հոգեկան քավարարություն տվող միակ աշխատանքը ազգիս զավակնե-

<sup>1</sup> «Սփիւռք», Բեյրութ, 8.XII.1968, էջ 2:

<sup>2</sup> «Մասիս», Բեյրութ, 29.X.1972, էջ 5:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 301, թ. 2:

<sup>4</sup> *Talai V.A.*, նշվ. աշխ., էջ 14, 26:

րուն հայերեն սորվեցնելն է: Խորապես կգիտակցեմ, որ նվիրական պարտականություն մը ունիմ կատարելիք, որ ինձի երջանկություն կպարզեմ»<sup>1</sup>:

Ուշագրավ են Լոնդոնում հայերի ենթաէթնիկ տարբեր խմբերի փոխհարաբերությունները: Կիպրահայերը որոշ չափով հակադրվում էին իրանահայերին, որոնք ևս բավական խոշոր խումբ էին կազմում: Այս երկուսի միջև եղած տարբերությունները, միմյանցից առավել լինելու մտածումները որոշ լարվածություն էին մտցնում հայկական համայքնի ներսում: Մասնավորապես, իրանահայերը համարում էին, որ կիպրահայերը և լիբանանահայերն ավելի շատ «արևմտյան» մշակույթի կրողներ են, ինչի հետևանքով տուժում է նրանց «հայկականությունը»: Տարբեր երկրներից Լոնդոն եկած արևմտահայերը, այդ թվում՝ կիպրահայերը, սերտ կապեր ունեին միմյանց հետ, որոնք պայմանավորված էին ցեղասպանության հետևանքով բաժանված ընտանիքների բարեկամական կապերով, կրթության և աշխատանքի բերումով Մերձավոր Արևելքի զանազան երկրներ այցելելով, նույն կառույցների տարբեր մասնաճյուղերի միջոցով միմյանց ճանաչելով և այլն: Իրանի այլևայլ քաղաքներից Լոնդոն եկած հայերը, ի տարբերություն կիպրահայերի, նման սերտ կապեր չունեին, ինչն այդ քաղաքների միմյանցից բավական հեռու լինելու հետևանք էր, մինչդեռ Կիպրոսի հայկական համայնքների իրար մոտիկ գտնվելը և փոքրաթիվ լինելը հանգեցնում էին միմյանց լավ ճանաչելուն<sup>2</sup>:

---

<sup>1</sup> «Հայրենիքի ձայն», Երևան, 13.1.1971, էջ 7:

<sup>2</sup> *Talai V.A.*, նշվ. աշխ., էջ 45, 62-65:

---

Այսպիսով՝ ռազմաքաղաքական իրարահաջորդ իրադարձությունների պատճառով 1955-1970-ական թթ. հազարավոր կիպրահայեր արտագաղթեցին զանազան երկրներ, գերազանցապես Մեծ Բրիտանիա, ինչը, բնականաբար, թուլացրեց Կիպրոսի հայ համայնքը: Դրա փոխարեն նոր բնակավայրերում, հատկապես Լոնդոնում, կիպրահայերը կարևոր դեր կատարեցին տեղի հայ համայնքի զարգացման գործում:

## ԱՐՏԱԳԱՂԹԸ ԼԻԲԱՆԱՆԻՑ

1920-ական թթ. վերջին Լիբանանից դանդաղած արտագաղթը նոր թափով վերսկսվեց 1945թ. հետո: Եթե 1945-1960թթ. տարեկան արտագաղթում էր շուրջ 3 հազար հոգի, ապա 1960-1970թթ. այդ թիվը հասավ 8 հազարի, իսկ 1970-1975թթ.՝ 10 հազարի: Հիմնական ուղղություններից մեկն Ավստրալիան էր, որտեղ 1976թ. արդեն հաստատվել էր 33 հազարից ավելի լիբանանցի: 1975-1990թթ. քաղաքացիական պատերազմի ժամանակ Լիբանանը լքածների թիվը հաշվվում էր 990 հազար: Մեծ թվով լիբանանցիներ տեղափոխվեցին Ավստրալիա և Կանադա, ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Պարսից ծոցի երկրներ<sup>1</sup>:

Ամբողջ երկրին բնորոշ այս շարժընթացը չէր շրջանցում հայ համայնքը: Արդեն 1944թ. Լիբանանում Մեծ Բրիտանիայի ներկայացուցչի՝ լիբանանահայերի մասին արտաքին գործերի նախարարություն ուղարկած տեղեկագրում նշվում էր, որ հայերը կցանկանային գաղթել ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, աշխատանքի խնդրի լուծման պարագայում՝ նաև Խորհրդային Հայաստան<sup>2</sup>:

---

<sup>1</sup> *Tabar P.*, Lebanon: A Country of Emigration and Immigration, Paper submitted to Forced Migration and Refugee Studies (FMRS) at the American University in Cairo, 2010, p. 4-5.

<http://schools.aucegypt.edu/GAPP/cmrs/reports/Documents/Tabar080711.pdf>

<sup>2</sup> *Մարրյան Ջ.*, Սկրտիչ Մարրյանի ազգային-քաղաքական գործունեությունը, Պեյրութ, 1981, էջ 245:

Ըստ ՀԽՍՀ արտաքին գործերի մինիստրության տեղեկանքի՝ 1946թ. Լիբանանում կար 85 հազար հայ<sup>1</sup>: 1952թ. Լիբանանի ներքին գործերի նախարարության վիճակագրության համաձայն՝ այդ թիվը 93.998 էր, որից առաքելական՝ 67.139-ը, կաթոլիկ՝ 14.218-ը<sup>2</sup> և բողոքական՝ 12.641-ը<sup>3</sup>: 1959թ. այստեղ կար 110 հազար հայ, որից 85 հազարն առաքելական, 20 հազարը՝ կաթոլիկ, 5 հազարը՝ բողոքական<sup>4</sup>: Նրանցից մոտ 100 հազարը բնակվում էր Բեյրութում<sup>5</sup>: Արդեն 1972թ. Լիբանանում կար 175 հազար հայ<sup>6</sup>, իսկ 1974թ. այդ թիվը հասել էր 180 հազարի, որից 150 հազարն առաքելական, 22.500-ը՝ կաթոլիկ, 7500-ը՝ ավետարանական<sup>7</sup>:

Լիբանանն ուներ նաև հայկական սփյուռքի ամենագորեղ կրթական համակարգերից մեկը, որն այս շրջանում շարունակաբար զարգանում էր: Եթե 1958-1959թթ. ուստարում այստեղի

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 147, թ. 2: Այլ տվյալներով՝ այդ թիվը 75 հազար էր, տե՛ս *Migliorino N.*, (Re)constructing Armenia in Lebanon and Syria, New York, 2008, p. 89.

<sup>2</sup> 1954թ. Լիբանանի հայ կաթոլիկների թիվը մոտ 15 հազար էր, տե՛ս *Գեորգեան Կ.*, Ամենուն տարեգիրքը 1955, Բ. տարի, Պեյրութ, 1955, էջ 349:

<sup>3</sup> «Հայրենիք», Բոստոն, 1952, թիվ 5, էջ 109:

<sup>4</sup> «Մասիս», Բեյրութ, 24.XII.1959, էջ 2: Նույն թվերն ու հարաբերակցությունը 1963թ. համար տե՛ս *Վարժապետեան Ս.*, Հայերը Լիբանանի մէջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, Կ. Բ, Պեյրութ, 1981, էջ 24: Ըստ Լ. Տեր-Մկրտչյանի՝ 1965թ. Լիբանանի հայերի թիվը շուրջ 100 հազար էր, որից 20 հազարը՝ կաթոլիկ, 10 հազարը՝ ավետարանական, տե՛ս *Տեր-Մկրտչյան Լ.*, Армяне в странах Арабского Востока на современном этапе, Москва, 1965, с. 17, 22.

<sup>5</sup> *Վարժապետեան Ս.*, նշվ. աշխ., էջ 25:

<sup>6</sup> *Եղիայեան Բ.*, նշվ. աշխ., էջ 894:

<sup>7</sup> *Hamalian A.*, The Shirkets: Visiting Pattern of Armenians in Lebanon, Anthropological Quarterly, Vol. 47 (Jan., 1974), No. 1, p. 72. Քաղաքացիական պատերազմի նախօրյակին Լիբանանի հայերի թիվը 250 հազար էր, տե՛ս *Վարդանյան Գ.*, Հայ համայնքը Լիբանանում երկրորդ քաղաքացիական պատերազմի տարիներին (1975-1990թթ.) և հայության արտագաղթը, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2009, էջ 359:

հայ աշակերտների ընդհանուր թիվը կազմում էր 13.449, ապա 1962-1963թթ.<sup>1</sup> 15.500<sup>1</sup>: 1962-1963թթ. օտար երկրորդական դպրոցներում, ինչպես նաև չորս համալսարաններում ուսանող հայերի թիվը 2500 էր<sup>2</sup>: Արդեն 1967թ. Լիբանանի 70 հայկական վարժարաններում սովորում էր 18 հազար հոգի, իսկ անգլիական և ֆրանսիական դպրոցներում՝ 7 հազար հայ<sup>3</sup>: Շնորհիվ նաև ազգային կրթական համակարգի՝ հայերի ուժացումն անհամեմատ ավելի փոքր ծավալներ ուներ, քան Եվրոպայում և Ամերիկայում: Այն հատկապես սպառնում էր ոչ հայկական վարժարաններ հաճախողներին<sup>4</sup>:

Լիբանանի հայերի մեծագույն մասն ընդգրկող Բեյրութը Երկրորդ աշխարհամարտից կարճ ժամանակ անց դարձավ հայ սփյուռքի «մայրաքաղաքը»: Կ.Դալլաքյանն այդ մասին գրում էր. «Իրերի պատմական բերումով հայկական սփյուռքի անպաշտոն կենտրոնի դերը այսօր խաղում է Լիբանանի մայրաքաղաք Բեյրութը»<sup>5</sup>: Այս հանգամանքն անվիճելի դարձավ 1952թ. Եգիպտոսի հեղափոխությունից հետո<sup>6</sup>: Շ.Աշըգյանն այդ խնդրի մասին գրում է. «Արդարեւ, Լիբանանի հայ գաղութը Սփիւռքի մտաւորականութեան, քաղաքական ղեկավարութեան, կրօնական իշ-

<sup>1</sup> *Վարժապետեան Ս.*, նշվ. աշխ., էջ 412, 416:

<sup>2</sup> *Նազարեկնց Յ.*, Սփիւռքահայ ալպով, Վենետիկ, 1964, էջ 69:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 398, թ. 3: 1972թ. Լիբանանի թեմի 19 նախակրթարաններում և 5 միջնակարգ դպրոցներում կային 6872 աշակերտ և 354 ուսուցիչ, տե՛ս *Եղիայեան Բ.*, նշվ. աշխ., էջ 896:

<sup>4</sup> *Բզմիրյեան Կ.*, Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցեալին եւ ներկայիս (քննական տեսութիւն), Պէրոյթ, 1964, էջ 294-295:

<sup>5</sup> *Դալլաքյան Կ.*, Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում, Երևան, 1962, էջ 6:

<sup>6</sup> *Санджян А.*, Армянские общины в условиях гражданской войны (сравнение Ливана и Сирии), «Диаспоры» независимый научный журнал, 2015, N 1-2, с. 62.



խանութեանց կեդրոնն էր: Հոն կը գտնուին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, Հայ Կաթոլիկ Եկեղեցւոյ, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի Հայ Աւետարանական եկեղեցիներու կեդրոնները: 1960ականներու առաջին տարիներէն Պէյրութը դարձաւ հայ քաղաքական կուսակցութիւններուն վերին մարմիններու նստավայրը՝ փոխարինելով Փարիզն ու Եգիպտոսը: Առաջին անգամ Սփիւռքի պատմութեան մէջ քաղաքական ղեկավարութիւնն ու կրօնական իշխանութիւնը կեդրոնացան նոյն գաղութին մէջ»<sup>1</sup>:

Հենց լիբանանահայ համայնքն էր, որ հատկապէս Երկրորդ աշխարհամարտից հետո դարձավ սփյուռքահայ զանազան համայնքները կուսակցական, կրթական, մշակութային գործիչներով ապահովողը<sup>2</sup>: Լիբանանի կենտրոնական դերը պայմանավորված էր նաև նրանով, որ ի տարբերություն տարածաշրջանի այլ համայնքների՝ Երկրորդ աշխարհամարտին հաջորդած տասնամյակների ընթացքում այստեղ, դանդաղ արտագաղթին զուգահեռ, կար հայերի խիստ զգալի ներհոսք: Եթե 1965թ. Լիբանանում կար 150 հազար հայ, ապա նրանցից 25 հազարն այլ գաղթավայրերից եկածներն էին<sup>3</sup>: Արդեն 1969թ. վերջին շրջանում արաբական այլ երկրներից եկած հայերի թիվը հասնում էր 30-40 հազարի<sup>4</sup>: Քաղաքացիական պատերազմի նախօրյակին, ըստ որոշ տվյալների, որոնք լիբանանահայության ընդհանուր թիվը հաշվում էին 240-280 հազար, նրանցից 60 հազարը Լիբանանի

<sup>1</sup> *Սշրգեան Շ.*, Լիբանանահայ գաղութը եւ Հայկական Ցեղասպանութեան հարցը (1965-1975), “Armenians of Lebanon: From Past Princesses and Refugees to Present-Day Community”, ed. by Boudjikianian A., Haigazian University/The Armenian Heritage Press, Beirut, 2009, p. 335.

<sup>2</sup> *Անդրէասեան Ա.*, նշվ. աշխ., էջ 71:

<sup>3</sup> «Սովետական Հայաստան», Երևան, 1965, թիվ 10, էջ 6:

<sup>4</sup> «Արարատ», Բէյրութ, 30.VII.1968, էջ 2:

քաղաքացիություն չունե՛ր<sup>1</sup>: Ընդ որում՝ 1960-ական թթ. Լիբանան եկած հայերի 50%-ը սիրիահայեր էին, 20%-ը՝ իրաքահայեր, 20%-ը՝ հորդանանահայեր, 10%-ը՝ եգիպտահայեր<sup>2</sup>:

1970թ. «Ազդակ» թերթը Լիբանանում հաստատված սիրիահայերի մասին գրում էր. «Լիբանանի մեջ, այսօր, հազարաւոր սուրիահայեր կ'ապրին սպասողական վիճակի մեջ: Ոմանք անցագիր չունին ու անոր կը սպասեն, երբեմն անկարող ճամբորդելու, վիզա ունենալով հանդերձ: Ուրիշները վիզա կը սպասեն այն երկիրներէն, ուր կը մտադրեն գաղթել: Երկու պարագաներուն ալ սպասումը կ'երկարի ամիսներով, երբեմն տարիներով: ...Աշխատանքի արտօնագիր չունենալով, հոս գտնուող սուրիահայերը մեծ մասամբ չեն կրնար աշխատիլ օրինաւոր կերպով: Ապօրէն կերպով աշխատողներուն ալ վճարումը կ'ըլլայ ողորմելի: Իրենց հետ տանելիք դրամին մեծ մասը հո՛ւ է որ կը սպառի»<sup>3</sup>:

Մակայն միաժամանակ Երկրորդ աշխարհամարտից հետո Լիբանանից նկատվում էր հայերի շարունակական արտագաղթ: Արդեն 1940-ական թթ. վերջին այլ լիբանանցիների պես որոշ թվով հայեր գաղթում էին Հարավային Ամերիկա<sup>4</sup>: Ս.Վարժապետ-

---

<sup>1</sup> *Յակոբեան Ս.*, Հայեցի դաստիարակութիւնը լիբանանահայ համայնքէն ներս. խնդիրներ և հեռանկարներ, Պէյրուք, 2006, էջ 9:

<sup>2</sup> *Boudjikianian A.*, Le travail autonome auprès des Arméniens du Liban: entre la pratique d'une tradition communautaire et un concept des théories des diasporas, "Armenians of Lebanon: From Past Princesses and Refugees to Present-Day Community", ed. by Boudjikianian A., Haigazian University/The Armenian Heritage Press, Beirut, 2009, p. 304. Այս ներհոսքի արդյունքում մեծանում էր ոչ միայն Բէյրութի հայ բնակչությունը: Օրինակ, Ջյունի քաղաքում 1974թ. կար մոտ 200 հայ ընտանիք, որոնց գրեթէ կեսն այստեղ էր հաստատվել 1958թ. հետո, տե՛ս *Վարժապետեան Ս.*, Հայերը Լիբանանի մեջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Գ, Պէյրուք, 1981, էջ 479:

<sup>3</sup> «Ազդակ», Բէյրուք, 25.III.1970, էջ 3:

<sup>4</sup> «Արարատ», Բէյրուք, 20.XI.1950, էջ 6:

յանն այս շրջանում Լիբանանից հայերի գաղթի մասին գրում է. «Արտագաղթը դեպի արեւմտեան երկիրներ - մանաւանդ Ֆրանսա, Քանատա, Միացեալ Նահանգներ, Հարաւային Ամերիկա եւ Աւստրալիա - միշտ ալ տեղի ունեցաւ, թէւ փոքր չափերով»<sup>1</sup>:

Մինչև Լիբանանի քաղաքացիական պատերազմն առավելաբար դեպի Հյուսիսային Ամերիկա հայերի գաղթի մեջ կարևորագույն դեր էին կատարում տարածաշրջանի քաղաքական անկայուն դրությունը, պարբերական պատերազմները<sup>2</sup>: 1970թ. Լիբանանից մեկնել ցանկացողները նշում էին արտագաղթի հետևյալ պատճառները. «-Հոս ապագայ չկայ: -Ասպարեզ չկայ աշխատանքի եւ յառաջադիմութեան: -Մենք մեզի սահմանափակուած կը զգանք հոս: -Դուրսը առիթը ունինք յառաջանալու՝ նիւթապէս եւ բարոյապէս: -Հոս գնահատանք չկայ: -Երկիրը իր պէտք ունեցածէն աւելի մեծ թիով համալսարանականներ եւ արհեստաւորներ ունի: Այսպէս, երկրաչափները առատ են համատարած շինարարական կշռոյթին, փաստաբանները՝ դատական խնդիրներուն, կօշկակարները՝ նորաձեւութեան քմայքին եւայլն, եւայլն»<sup>3</sup>:

Ընդ որում՝ այս շրջանում գաղթողների մեջ հատկապէս մեծ թիվ էին կազմում երիտասարդները<sup>4</sup>: 1958թ. լիբանանահայ երիտասարդների ԱՄՆ տեղափոխման մեջ մեղադրվում էին ՀՅԴ-ն և

<sup>1</sup> *Վարժապետեան Ս.*, Հայերը Լիբանանի մէջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Բ, էջ 23:

<sup>2</sup> *Hovhannesian R.*, The Ebb and Flow of the Armenian Minority in the Arab Middle East, "Middle East Journal", Vol. 28, No. 1 (Winter, 1974), p. 31. 1974թ. Վ.Մարտիրոսյանը գրում էր, որ Լիբանանը լքելու պատճառների մեջ կարևոր տեղ է զբաղեցնում այն հանգամանքը, որ շատ հայեր Լիբանանը չեն համարում իրենց հայրենիքը, տե՛ս «Ազգակ», Բեյրութ, 22.III.1974, էջ 3:

<sup>3</sup> Նույն տեղում, 25.III.1970, էջ 3:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 571, թ. 20:

Հայ Ավետարանական եկեղեցին. «Ստուգուած և հաստատուած է որ Պէրյութի եւ Հալէպի Հ. Բ. Ա. Մ.-ի, դաշնակ ճեմարանի, բողոքականաց երկրորդական վարժարաններու ուսանողները շրջանաւարտելէ եւ երկու տարի Պէրյութի ամերիկեան համալսարանը յաճախելէ ետք՝ դաշնակներու եւ պատուելիներու ընծայած դիւրութիւններով Ամերիկա կը տեղափոխուին անաղմուկ»<sup>1</sup>:

Լիբանանում ԽՍՀՄ դեսպանության 1967թ. տեղեկանքի համաձայն՝ ԱՆՉԱ-ի այստեղի մասնաճյուղը հավաքում էր ԱՄՆ մեկնել ցանկացող հայերի տվյալները, հետո դրանք տրամադրում ԱՄՆ դեսպանությանը: Ընտրվում էին առավել երիտասարդ, մասնագիտական հմտություններ ունեցող առողջ դիմումատուները, իսկ մյուսներին Կանադա կամ Ավստրալիա ուղարկում էր ԱՆՉԱ-ն: Ընդ որում՝ Լիբանանի ԱՆՉԱ-ի մասնաճյուղը հատկապես զբաղվում էր Լիբանանում վերջին շրջանում հաստատված սիրիահայերի, ռումինահայերի, բուլղարահայերի, իրաքահայերի տեղափոխման հարցերով<sup>2</sup>: Կանադա և Ավստրալիա փոխադրվեցին զգալի թվով հայեր: 1955-1966թթ. Լիբանանից Կանադա տեղափոխվեց 577 հայ, ընդ որում՝ նրանց թիվը հատկապես մեծ էր 1960-ական թթ.<sup>3</sup>: Լիբանանից Ավստրալիա գաղթը համեմատաբար մեծ ծավալներ ստացավ սկսած 1964թ.: Արտագաղթի պատճառը գլխավորապես տնտեսական էր<sup>4</sup>:

---

<sup>1</sup> *Եւզ Օ.*, Թուղթ առ հայ արմատ, Պէրյութ, 1958, էջ 8:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 398, թ. 7:

<sup>3</sup> *Chichekian G.*, նշվ. աշխ., էջ 50:

<sup>4</sup> Լիբանանից Ավստրալիա տեղափոխվածների 1/3-ն էր ցանկացել տեղափոխվել այդ երկիր մյուսներն առավելաբար ԱՄՆ, սակայն չէին հաջողել: Հաճախ նրանք գալիս էին այստեղ, քանզի դա միակ երկիրն էր, որը գաղթել ցանկանալու պահին ընդունում էր գաղթողներին: Ավստրալիա տեղափոխված լիբանանահայերի 4/5-ը այստեղ բարեկամներ ուներ, իսկ 60 տոկոսը հովանավորվում էր նրանց կողմից, տե՛ս *Kirkland J.R.*, *Armenian Migration, Settlement and Adjustment in Australia, with Special Reference to the Armenians in Sydney*, PhD thesis, Australian National University, 1980, p. 103.

Դեռևս մինչև քաղաքացիական պատերազմը հայ իրակա-  
նությունում լույս էին տեսնում Լիբանանից արտագաղթի դեմ  
հրապարակախոսական աշխատանքներ, որտեղ խոսվում էր  
Արևմուտքի երկրներում հայերի ուժացման, Լիբանանում մնա-  
լու առավելությունների մասին<sup>1</sup>: Դրա վերաբերյալ Մուշեղ Իշ-  
խանը գրում էր. «Վերջին տարիներուն ո՞վ չէ ճաշակած դառնու-  
թիւնը հրաժեշտի այցելութիւններուն: Անպայման ազգական մը,  
բարեկամ մը կամ ծանօթ մը կայ, որ կը մեկնի դէպի հեռաւոր  
աշխարհներ: Ամերիկան ու Գանատան դարձած են Աւետեաց  
Երկիր, ուր կը ձգտին հասնիլ մեր ազգակիցներու հոգիները:  
Երանի՛ թէ հարցը փակուէր միայն հոգիներու թոխչքով: Մար-  
մինները կը հետեւին շուտով այս թոխչքին՝ օդանաւի մը թելե-  
րուն վրայ»<sup>2</sup>:

1970թ. Կիլիկիո Խորեն կաթողիկոսը կոչ էր անում Մերձա-  
վոր Արևելքի հայերին չարտագաղթել. «Մենք, որպէս Կաթողի-  
կոս Մեծի Տանն Կիլիկիոյ, համաձայն չենք սկսուած այս արտա-  
գաղթին՝ զայն գտնելով ըստ ամենայնի վնասարար ե՛ւ արտա-  
գաղթողներուն, ե՛ւ այն երկիրներուն՝ ուրկէ քան յիսուն տարիէ  
ի վեր կ'ապրինք որպէս հաւատարիմ քաղաքացիներ, ապահո-  
վելով մեզի համար բարօր կեանք մը եւ բերելով մեր նպաստը  
այս երկիրներու ընդհանուր զարգացումին: ...Անշուշտ քաղա-  
քական դժուարութիւններ կան Միջին Արևելքի մէջ. բայց պէտք  
չէ մոռնալ, որ աշխարհի ամէն կողմ կան տեսակ-տեսակ նման-  
օրինակ դժուարութիւններ: Այդ բոլորը վաղանցուկ են:  
Կարելորդ մեր մնալն է արաբական աշխարհին մէջ, համա-

<sup>1</sup> Նորունի Յ., Նամակ ամերիկահայ բարեկամիս, Պեյրութ, 1966:

<sup>2</sup> «Ազդակ», Բեյրութ, 24.VI.1969, էջ 2:

խումբ, եղբայրական ոգիով ապրիլն է եւ ոգի ի բոին աշխատիլ, որպէսզի մեր կեանքը ըլլայ երջանիկ եւ մեր ծառայութիւնը օգտակար արաբական հայրենիքին: ...ի խորոց սրտի հայրական կոչ կ'ուղղենք ձեզի, սերտօրէն ու ջերմօրէն կապուած մնալ Միջին Արեւելքի արաբական երկիրներուն, համբերութեամբ, քաջութեամբ եւ նուիրումով շարունակել ձեր գործերը ու զարգացնել զանոնք»<sup>1</sup>:

Սակայն այս դանդաղ արտագաղթը միանգամայն նոր բնույթ ստացավ 1975թ. սկսված Լիբանանի քաղաքացիական պատերազմի ժամանակ՝ վերածվելով զանգվածային գաղթի: 1975թ. քաղաքացիական կռիւների մեկնարկից հետո հայերը սկսեցին գաղթել Կանադա, Ֆրանսիա, Ավստրալիա և մասնավորապէս ԱՄՆ<sup>2</sup>:

1975-1976թթ. արտագաղթի մասին Էվերեկ-Ֆենեսէի Մեսրոպյան-Ռուբինյան ուսումնասիրաց միության Լիբանանի մասնաճյուղից տեղեկացնում էին. «Այդ տագնապի օրերուն, խառնաշփոթ կացութեան հետեւանքով տասնեակ հազարաւոր լիբանանցիներ և հայեր լքեցին Լիբանանը և մեկնեցան դրացի արաբ եւ արտասահմանեան երկիրներ, փրկելու համար իրենց կեանքը: Թիւր մեծ է մանաւանդ Միացեալ Նահանգներ, Քանատա, Ֆրանսա, Յունաստան Կիպրոս և այլ երոպական երկիրներ մեկնողներուն»<sup>3</sup>:

Արդէն 1976թ., ըստ ՀԲԸՄ տվյալների, Լիբանանից տեղի ունեցած արտագաղթի հետևանքով այստեղ մնացել էր ընդամեն-

---

<sup>1</sup>Նույն տեղում, 18.IV.1970, էջ 2:

<sup>2</sup> *Վարժապետեան Ս.*, Հայերը Լիբանանի մէջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Բ, էջ 22:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 1418, ց. 3, գ. 72, թ. 5:

նր 150 հազար հայ: Միությունն այդ տարի հանգանակեց 1 մլն դոլար, որն ուղղվեց լիբանանահայության կարիքներին: 1976թ. հոկտեմբերին Նյու Յորքում կայացած ՀԲԸՄ 63-րդ ընդհանուր ժողովում Ալեք Մանուկյանը նախագուշացնում էր. «խուսափիլ տարածել է շշուկներ եւ գրոյցներ կամ փորձել է քայլեր, որոնք հեռուոր չափով նոյնիսկ կրնան աւետեաց երկիրներու խոստումը պարզել անտեղեակներու: ...Տարբեր է երբ անհատներ եւ ընտանիքներ կամովին, գիտակցաբար եւ քաջաբար կը հաստատուին նոր կայքեր, նոր կեանքի մը ի խնդիր, եւ հիմնովի՛ն տարբեր երբ զանգուածներ գաղթականի ցուպը ձեռք կ'առնեն մղուած հեռուներէն թեկուզ մարդասիրաբար օրօրուած յոյսի աղօտ ճրագներէ»<sup>1</sup>:

Արդէն 1976թ. հունվարի դրությամբ Լիբանանից արտագաղթել էր 6 հազար հայ<sup>2</sup>: 1975-1976թթ. Լիբանանից մեկնեց շուրջ 35 հազար հայ, որից 20-25 հազարը հաստատվեց Սիրիայում, մյուսները՝ Եգիպտոսում, Քուվեյթում, Հորդանանում, Մերձավոր Արևելքի այլ երկրներում, որոշ մասն էլ՝ ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում<sup>3</sup>: 1976թ. դրությամբ Լիբանանից գաղթողների մեջ մեծամասնություն էին կազմում առավել բարեկեցիկ խավի ներկայացուցիչները<sup>4</sup>:

ՌԱԿ ղեկավարներից Բ.Թովմասյանը ՀԽՍՀ իշխանություններին 1976թ. տեղեկացնում էր, որ մեծ թվով լիբանանահայեր, ստանալով ժամանակավոր աշխատանքի և բնակության արտոնություններ, մեկնում են Ֆրանսիա, իսկ շատերը մշտա-

<sup>1</sup> Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 444-445:

<sup>2</sup> «Հայրենիք», Բոստոն, 15.1.1976, էջ 2:

<sup>3</sup> Վարդանյան Գ., նշվ. աշխ., էջ 365:

<sup>4</sup> «Ազդակ», Բեյրութ, 13.X.1976, էջ 3:

կան բնակության՝ ԱՄՆ, Ավստրալիա և Կանադա<sup>1</sup>: 1976թ. ռազմական գործողությունների հետևանքով բազմաթիվ հայեր նախապատրաստվում էին գաղթել Կանադա, Ավստրալիա, ԱՄՆ<sup>2</sup>:

Ինչպես հայտնի է, Լիբանանի հայությունը քաղաքացիական պատերազմի ժամանակ որդեգրեց «դրական չեզոքություն»: Դա պայմանավորված էր ոչ միայն հայությանը հնարավորինս կորուստներից զերծ պահելով, այլև նրա նախկին դիրքերը պահպանելով: Լիբանանի հայերը բավական հաջող կերպով ներգրավված էին պետական կառավարման համակարգում, իսկ ուժերի հարաբերակցության կտրուկ փոփոխությունը կարող էր հանգեցնել նրանց ազդեցության թուլացմանը: Միասնական տեսակետ չորդեգրելը կխափաներ նաև նոր-նոր առաջ եկող համագործակցության ծավալումը հայկական ազգային կուսակցությունների միջև, իսկ դա բացասական նշանակություն կունենար ոչ միայն Լիբանանում, այլև ողջ Սփյուռքում<sup>3</sup>: Չեզոքության որոշում կայացնելիս լիբանանահայերի առաջնորդները հաշվի էին առնում նաև այն հանգամանքը, որ պատե-

---

<sup>1</sup> *Թովմասեան Բ.*, Հայրենական օրագրություն 1957-1985, Պէյրուք, 1994, էջ 195:

<sup>2</sup> «Արարատ», Բէյրուք, 08.I.1976, էջ 1:

<sup>3</sup> Վ.Համազասպյանի, ՀԿԿ կենտկոմի ինֆորմացիայի և արտասահմանյան կապերի բաժնի վարիչ Լ.Մանասերյանի և ՊԱԿ նախագահ Մ.Յուզբաշյանի համատեղ զեկուցագրում՝ ուղղված ՀԿԿ կենտկոմին, նշվում էր, որ պետք է ամեն կերպ հնչակյաններին թույլ չտալ ՀՅԴ-ի հետ համատեղ որևէ համաձայնագիր ստորագրել: Նրանք վախենում էին, որ կարող է ազգային միասնական ճակատ ստեղծվել, որտեղ անխուսափելիորեն գերակշռելու էր ՀՅԴ-ն: Տե՛ս Հայրենիք-Սփյուռք կամրջող անուն: Վ.Համազասպյան (փաստաթղթերի ժողովածու), կազմ. և ծանոթագր.՝ Ս.Միրզոյան և Մ.Մարտիրոսյան, Երևան, 2011, էջ 258: Այդպիսով ՀԽՍՀ ղեկավարությունը ջանում էր խաթարել քաղաքացիական պատերազմի պայմաններում հայկական բոլոր քաղաքական կուսակցությունների միջև ստեղծված համագործակցության մթնոլորտը: Ի դեպ, ըստ Լիբանանում ԽՍՀՄ դեսպանության տվյալների՝ 1960-ական թթ. վերջին ՀՅԴ-ն այստեղ ուներ 1600, Հնչակյան կուսակցությունը՝ 800, իսկ ՌԱԿ-ը՝ 750 անդամ, տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 398, թ. 4-6, ֆ. 875, ց. 3, գ. 7, թ. 2-3:



րազմում լուրջ ներգրավվածություն ունեն օտար, հատկապես արաբական երկրները և որևէ չհաշվարկված քայլ կարող էր վտանգի տակ դնել Լիբանանում հաստատված՝ Պաղեստինի և Սիրիայի քաղաքացիություն ունեցող, ինչպես նաև Սիրիայում, Իրաքում, Եգիպտոսում, Հորդանանում բնակվող հայերին<sup>1</sup>:

1975թ. Արևմտյան Բեյրութում բնակվում էր շուրջ 30-40 հազար հայ: Նրանց սոցիալական վիճակն ավելի լավ էր, քան Արևելյան Բեյրութում և Բուրջ Համուդում ապրողներին<sup>2</sup>: Հենց նրանք էին, որ առաջինը լքեցին Լիբանանը: Իսկ այստեղ մնացած հայերի զգալի մասը տեղափոխվեց Արևելյան Բեյրութ (շուրջ 13 հազար հոգի<sup>3</sup>), որոնց զգալի մասը հետագայում արտագաղթեց, երբ հարվածների թիրախում հայտնվեց Բեյրութի այդ մասը<sup>4</sup>: Արևմտյան Բեյրութի հայկական կառույցներն առավելաբար դադարեցին գործել, քաղաքացիական պատերազմի ավարտին այստեղ փոքրաթիվ հայեր էին մնացել<sup>5</sup>:

Պատերազմի ժամանակ, ըստ էության, հայերին՝ ի դեմս ՀՅԴ-ի, հաջողվեց վերահսկողություն հաստատել միայն Բուրջ Համուդի նկատմամբ: Հաճըն և Խալիլ Բադավի թաղամասերը, որտեղ տիրապետող դիրքեր ուներ Հնչակյան կուսակցությունը, ի վերջո անցան Լիբանանի քրիստոնեական զինված ուժերի վերահսկողության տակ: ՀՅԴ-ն փորձեց Բուրջ Համուդի օրինա-

<sup>1</sup> *Санджян А.*, նշվ. աշխ., էջ 64:

<sup>2</sup> Արևելյան Բեյրութի հայերն ավելի հստակ ազգային դիմագիծ ունեին, ավանդապահ էին, մինչդեռ արևմտյան Բեյրութի հայերն իրենց ավելի քաղաքակրթված էին համարում, տե՛ս «Արարատ», Բեյրութ, 20.XII.1978, էջ 3:

<sup>3</sup> «Սովետական Հայաստան», Երևան, 1979, թիվ 4, էջ 17:

<sup>4</sup> Նրանցից շատերը զոջում էին, որ միանգամից չէին արտագաղթել Բեյրութից, տե՛ս «Սփիւռք», Բեյրութ, 1990, թիվ 6, էջ 4:

<sup>5</sup> *Санджян А.*, նշվ. աշխ., էջ 69:

կով վերահսկողություն հաստատել արևմտյան հայաբնակ շրջաններում, սակայն խնդիրներ ունեցավ պաղեստինցիների հետ և կարողացավ միայն որոշ հայկական կառույցների ապահովության համար փոքրաթիվ ուժեր պահել այնտեղ: ՀՅԴ-ն զինված ուժեր կազմավորեց նաև Այնճարում, Բայջ ոչ Տրիպոլիում և Ջահլեում<sup>1</sup>:

1978թ. սկզբից Լիբանանի քրիստոնյաները, հայերի դրական չեզոքության կեցվածքը համարելով դավաճանություն (աջակցություն պաղեստինցիներին և Սիրիային), հակահայկական արշավ սկսեցին: 1978թ. հունիսին զինված բախումների սաստկացմամբ դրությունն ավելի լարվեց: Օգոստոսին Խորեն Ա կաթողիկոսը Գարեգին Բ աթոռակցի հետ այցելեց «Լիբանանյան ուժեր» կուսակցության ղեկավար Բաշիր Ժմայելին և Քամիլ Շամունին, հայ պատգամավորները հանդիպեցին Լիբանանի նախագահ Էլիաս Սարգիսի, վարչապետ Սելիմ Հոսսի և այլ պաշտոնյաների հետ: Չնայած քրիստոնյա ղեկավարների խոստումներին՝ դրությունն ավելի բարդացավ: Հոկտեմբերին ակտիվ ռազմական գործողությունների թատերաբեմ դարձավ Բուրջ Համուդը<sup>2</sup>:

1978թ. օգոստոսին հայերի արտագաղթի մասին Հ.Նազգաշյանը գրում էր. «Երեք տարիէ ի վեր սկսած արտագաղթը նոյն թափով, եւ նոյնիսկ յարաճուն թափով կը շարունակուի, հակառակ ազգային կազմակերպութիւններու, կուսակցութիւններու մղած տարհամոզիչ պայքարին: Հայ մարդը չի համոզուիր

---

<sup>1</sup>Նույն տեղում, էջ 68-69:

<sup>2</sup> *Վարժապետեան Ս.*, Հայերը Լիբանանի մէջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Դ, Ֆերլօն, 1983, էջ 351-352:

իրեն տրուած խորհուրդին ճշմարտութեան: Կենա՞յ, ինչո՞ւ կենայ երբ այսքան աւեր ու մահ կայ. չկան օրէնք, արդարութիւն, ապահովութիւն. եւ ո՞վ կրնայ աւելի լաւ ապագայի մը երաշխիք տալ իրեն: Երթա՞յ... ո՞ր երթայ, ինչպէ՞ս երթայ. հոն աւելի լա՞ւ պիտի ըլլայ...»<sup>1</sup>:

1978թ. հոկտեմբերի հայկական թաղամասերի ոմբակոծման հետևանքով հայությունը հայտնվեց ծանրագույն դրության մեջ: Օրեր շարունակ, փորձելով պատասպարվել ոմբակոծություններից՝ բազմաթիվ հայեր մնացին առանց հացի և ջրի: Այդ գործողությունների ժամանակ հայերի զոհերի թիվը կազմեց 65 հոգի (մինչ այդ եղած զոհերի թիվն ավելի քան 230 էր), վիրավորվեց 300-ը, քանդվեցին հայերի 1200 բնակարան, շուրջ 100 վաճառատուն: Հայերի կրած նյութական վնասը կազմեց շուրջ 600 մլն լիբ. ոսկի կամ 200 մլն դոլար: Աշխատավայրերի քանդման հետևանքով ավելի քան 10 հազար հայ դարձավ գործազուրկ: Տարբեր աստիճանի վնասներ կրեցին 28 վարժարան և 18 եկեղեցի: Կոնվների ժամանակ տարբեր տեղերում ապաստանած հայերի թիվը 31 հազար էր: Այս ռազմական գործողությունների հետևանքով մոտ 10 հազար հայ դարձավ գաղթական՝ պատասպարվելով Տրիպոլիում, Այնճարում և Բեյրութի արևմտյան թաղամասերում<sup>2</sup>: Այս իրադարձություններից հետո մոտ 8 հազար հայ արտագաղթեց Սիրիա<sup>3</sup>:

<sup>1</sup> Նազգաշէան Հ., Խճանկար կէս դարու հրապարակագրութեան (1957-2009), Պէյրութ, 2009, էջ 130:

<sup>2</sup> Վարժայէտեան Ս., Հայերը Լիբանանի մէջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Դ, էջ 353-355: 1983թ. նրանց մեծամասնությունն արդէն վերադարձել էր իրենց նախկին բնակարանները՝ բացառությամբ մի քանի հարյուրի, որոնց տները քանդված էին:

<sup>3</sup> Վարդանյան Գ., նշվ. աշխ., էջ 368:

1978թ. հոկտեմբերի 26-ին փորձ արվեց կործանել Բիք-Ֆայայի Ապրիլյան Նահատակաց հուշարձանը: Որպես բողոք՝ նոյեմբերի 1-ին Բեյրութի հայկական հաստատությունները դիմեցին գործադուլի: Հայերը Լիբանանի դեսպանատների դիմաց բողոքի ցույցեր կազմակերպեցին Իրանում, Հունաստանում, Անգլիայում, ԱՄՆ-ում, Արգենտինայում, Բրազիլիայում, Ուրուգվայում, Նյու Յորքում՝ ՄԱԿ գրասենյակի դիմաց<sup>1</sup>:

Այս իրադարձությունները նպաստում էին արտագաղթի մեծացմանը: Ըստ որոշ տվյալների՝ մինչև 1978թ. օգոստոսն արտագաղթել էր 15-20 հազար հայ: Իսկ 1978թ. դեպքերի արդյունքում 1500 ընտանիք տեղափոխվեց Հալեպ, որից 1000-ն ապաստանեց ազգականների մոտ, 500-ը՝ համայնքային կառույցներում<sup>2</sup>: Ըստ որոշ տվյալների՝ այդ իրադարձություններից հետո արտագաղթած հայերի թիվը կազմում էր լիբանանահայ համայնքի 1/4-ը: Մինչդեռ 1978թ. նոյեմբերին, ըստ Գարեգին Բ աթոռակից կաթողիկոսի, Լիբանանից արտագաղթած հայերի թիվը 15-16 հազար էր<sup>3</sup>:

Պատճառված ավերածությունները և վնասները վերականգնելու համար Կիլիկիո կաթողիկոսի կողմից հոկտեմբերի 23-ին Անթիլիասում գումարված ժողովը որոշեց ստեղծել Վերա-

---

<sup>1</sup> *Վարժապետեան Ս.*, Հայերը Լիբանանի մեջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Դ, էջ 355-358:

<sup>2</sup> *Տէմիրճեան Վ.*, նշվ. աշխ., էջ 210, 455: Ըստ որոշ տվյալների՝ Լիբանանից շուրջ 60 հազար հայ տեղափոխվեց Պարսից ծոցի երկրներ, որը, անշուշտ, չափազանցություն է, տե՛ս *Агавельян Ю.*, Некоторые особенности социально-экономического развития армянской общины в Ливане, Ближний Восток и современность. Сборник статей (выпуск пятнадцатый), Москва, 2002, с. 7: Նաև՝ *Վարդանյան Գ.*, նշվ. աշխ., էջ 368:

<sup>3</sup> *Վարժապետեան Ս.*, Հայերը Լիբանանի մեջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Դ, էջ 389, 391:

կանգնումի Կեդրոնական մարմին՝ նախագահությամբ հայ զույգ հայրապետների, փոխնախագահությամբ՝ Հայ Կաթողիկե եկեղեցու և Հայ Ավետարանական համայնքի ղեկավարների: Այդ մարմնի մեջ մտան բոլոր կուսակցությունների, դավանական համայնքների ներկայացուցիչները, իսկ առաջին ատենապետ ընտրվեց Խաչիկ Պապիկյանը, երկրորդ՝ ավետարանականների ներկայացուցիչ Ա.Մանուկյանը: Այդ մարմնի կազմակերպած հանգանակությունների ժամանակ, 1979թ. սկզբի դրությամբ, արդեն ստացվեց 2 մլն լիբ. ոսկի: Մեծ աջակցություն ցույց տվեց նաև Ս.Էջմիածինը: Զգալի նյութական օգնություն ստացվեց Հայաստանից, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իրանի և այլ հայ համայնքներից<sup>1</sup>:

1978թ. հոկտեմբերի վնասների փոխհատուցման համար հանգանակություններ կատարվեցին Լիբանանում, Սիրիայում, Քուվեյթում, Սաուդյան Արաբիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Անգլիայում, Արգենտինայում<sup>2</sup> և մյուս գաղութներում<sup>3</sup>: Քաղաքացիական պատերազմի առաջին տարիներին տեղի ունեցած Սփյուռքի մոբիլիզացիան աննախադեպ էր, ինչը պայմանավորված էր նրանում Լիբանանի բացառիկ կենտրոնական դերով<sup>4</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 364-367:

<sup>2</sup> Արգենտինահայության արձագանքի և օգնության մասին տե՛ս *Der-Ghougassian Kh.*, Lebanon in my mind. The civil war and the centrality of the Lebanese-Armenian community in the making of the Armenian Diaspora nationalism, “Armenians of Lebanon: From Past Princesses and Refugees to Present-Day Community”, ed. by Boudjikian A., Haigazian University/The Armenian Heritage Press, Beirut, 2009, p. 411-430.

<sup>3</sup> *Վարժապետեան Ս.*, Հայերը Լիբանանի մեջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Դ, էջ 369:

<sup>4</sup> *Der-Ghougassian Kh.*, նշվ. աշխ., էջ 411, 415-416:

Թե՛ նյութական, թե՛ բարոյական տեսանկյունից խիստ կարևոր էր Խորհրդային Հայաստանից ստացված զգալի օգնությունը, որն այնքան մեծ էր, որ Բեյրութում ստեղծվեց Հայաստանի Օգնության ընդունման և բաշխման մարմին: 23 չվերթներով ինքնաթիռները Բեյրութ բերեցին 232 տոննա ապրանք (շաքար, բրինձ, օճառ, կոշիկներ, ծածկոցներ, մահճակալներ, դեղորայք, գրքեր ու գրենական պիտույքներ և այլն), որից օգտվեց ավելի քան 19 հազար անձ<sup>1</sup>: Այս օգնության նախաձեռնման հարցում կարևոր դեր կատարեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն<sup>2</sup>:

1979թ. ապրիլին ՀԲԸՄ Կենտրոնական վարչության հատկացրած ընդհանուր գումարը կազմեց 205 հազար դոլար: Լիբանանահայությանն օգնեցին նաև ոչ հայկական կառույցները: Օրինակ, USAID-ը (United States Agency for International Development) ՀԲԸՄ-ին տրամադրեց 500 հազար ԱՄՆ դոլար՝ լիբանանահայերին օգնելու համար<sup>3</sup>: Տնտեսական դժվարությունների հաղթահարման նպատակով Զինիշյան հիմնադրամի նախաձեռնությամբ ստեղծվեց AFED-ը (Armenian Fund for Economic Development), որը ցածր տոկոսով դրամ էր հատկացնում քաղաքացիական պատերազմի հետևանքով վնասներ կրած մանր առևտրականներին, արհեստավորներին և տնտեսական այլ գործունեությամբ զբաղվողներին<sup>4</sup>:

---

<sup>1</sup> *Վարժապետեան Ս.*, Հայերը Լիբանանի մեջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. 7, էջ 370-371:

<sup>2</sup> Հայրենիք-Սփյուռք կամրջող անուն: Վ.Համազասպյան (փաստաթղթերի ժողովածու), էջ 213-214:

<sup>3</sup> Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, հ. 2 (1941-2006), Գահիրէ-Փարիզ-Նիւ Եորք, 2006, էջ 373-374:

<sup>4</sup> «Արարատ», Բեյրութ, 13.VI.1980, էջ 3:

Երկրորդ անգամ 1979թ. սեպտեմբերին կրկին Բեյրութի արևելյան շրջանների հայկական հաստատությունները հայտնվեցին ոմբահարումների թիրախում, սկիզբ առավ հակահայկական նոր արշավ: Դրա հետևանքով 1979թ. սեպտեմբերի 11-ին հայկական հաստատությունները գործադուլ հայտարարեցին: Բուրջ Համուդում և հայահոծ այլ թաղամասերում տեղի ունեցած իրադարձությունները քննարկելու նպատակով Խ.Պապիկյանն ու Սուրեն Խանամիրյանը հանդիպեցին Լիբանանի նախագահ Է.Սարգիսին: Ի վերջո, «Լիբանանյան փաղանգ» կուսակցության և ազատական ուժերի պատասխանատուների հետ հայերի բանակցությունների արդյունքում կացությունը հանդարտվեց<sup>1</sup>:

Հայր Անդրանիկ Կոանյանը լիբանանահայերի արտագաղթում տեսնում էր հստակ շահագրգիռ կողմերի՝ ի դեմս մարոնիների, Իսրայելի և Թուրքիայի<sup>2</sup>: Վերջինիս է մեղադրում նաև Կ.Դալլաքյանը, ըստ որի՝ նրան Լիբանանը հայաթափել օգնում էին ՆԱՏՕ-ն և մասնավորապես ԱՄՆ-ը<sup>3</sup>: Ըստ Ն.Հովհաննիսյանի՝ Իսրայելը, 1982թ. ներխուժելով Լիբանան, նպատակ ուներ թուլացնել հայ համայնքը, որը պայմանավորված էր ԽՍՀՄ-ի դեմ նրա դիրքորոշմամբ: Նույնպիսի նպատակներ ուներ ԱՄՆ-ը, որը ցանկանում էր Սփյուռքի կենտրոնը Լիբանանից տեղափոխել իր մոտ<sup>4</sup>: Այս պնդումները միանշանակ ընդունելի չի

<sup>1</sup> Վարժապետեան Ս., Հայերը Լիբանանի մեջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Դ, էջ 398-400:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 406-408:

<sup>3</sup> Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004, էջ 136:

<sup>4</sup> Հովհաննիսյան Ն., Մերձավոր Արևելքի և Միջին Արևելքի հայ համայնքները և նրանց հեռանկարները, Երևան, 2015, էջ 20: Նաև՝ նույնի Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը (1975-1982թթ.), Երևան, 1982, էջ 73:

կարելի համարել, քանի որ դրանք հիմնված են ենթադրությունների վրա, որտեղ կարևոր է այն հանգամանքը, թե լիբանանահայությունը ԽՍՀՄ ազդեցության ոլորտում էր:

Արտագաղթը մեծ թափ էր հավաքում: Չնայած 1979թ. հոկտեմբերի սկզբին Խ.Պապիկյանի հարցազրույցում նշվում էր, թե 4 տարվա ընթացքում Լիբանանը լքել է շուրջ 12 հազար հայ<sup>1</sup>, սակայն այդ թիվն ավելի մեծ էր՝ նվազագույնը 25-30 հազար<sup>2</sup>:

Համայնքի ողջ ղեկավարությունը ջանքեր էր գործադրում գաղթը կանխելու ուղղությամբ. «Իրօք, որ անգուգական է լիբանանահայ գաղութը: Ո՛չ մէկ ուրիշ գաղթօճախ կրնայ զայն փոխարինել ու ստանձնել առաքելութիւն մը որ հայութեան ամենակենսունակ եւ ուժական այս կեդրոնին վիճակուած է: Ասո՛վ կը բացատրուի նաեւ լիբանանեան չորսամեայ տագնապէն խորշակահար ու հալումաշ եղած մեր ժողովուրդը ամէն գնով պահելու, գաղութին լուծարքը կանխելու, անոր հողմացրիւ բեկորներն իսկ վերամիավորելու եռանդն ու նուիրումը, որ ազգային սեպուհ մտահոգութեան մը հրամայականը կը կազմէ»<sup>3</sup>: Պատասխանելով լիբանանյան թերթի մեղադրական հարցին, թե հայերը գաղթում են երկրից, Լիբանանի հայ պատգամավոր Ս.Խանամիրյանը 1979թ. հոկտեմբերին ասում է. «...լուրջ աշխատանքի լծուած ենք գաղթողները Լիբանան վերադարձնելու համար: Այս աշխատանքը կը տանինք թէ՛ հոս Լիբանանի մէջ, եւ թէ այլուր ցուցմունքներ տուած ենք, որպէսզի չքաջակե-

---

<sup>1</sup> *Վարժապետեան Ս.*, Հայերը Լիբանանի մէջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Գ, էջ 404:

<sup>2</sup> «Զարթօնք», Բեյրութ, 16.VI.1979, էջ 2: Նաև՝ «Հայրենիք», Բոստոն, 27.III.1979, էջ 1:

<sup>3</sup> «Արարատ», Բեյրութ, 21.XII.1978, էջ 2: Չնայած կուսակցության ղեկավարությունը կտրուկ դեմ էր արտագաղթին երկիրը լքեցին նաև զգալի թվով դաշնակցականներ, տե՛ս *Санджян А.*, նշվ. աշխ., էջ 67:



րեն գաղթը: Արդեն, Գարեգին Բ. Կաթողիկոս (որ Նիւ Եորքի Առաջնորդն էր) նախապէս, եւ ես անձամբ, Մ. Նահանգներ եւ Գանատա կատարած շրջապտոյտի ընթացքին՝ շփումներ ունեցանք մեր մշակութային եւ ընկերային հաստատութիւններու հետ եւ պահանջեցինք որ չքաջալերեն Լիբանանահայերուն Ամերիկա արտագաղթը»<sup>1</sup>:

Լիբանանահայ մամուլը ևս պարբերաբար դատապարտում էր արտագաղթը՝ կոչ անելով ժողովրդին մնալ Լիբանանում<sup>2</sup>: Չնայած դրան՝ ծանրագույն դրութիւնը հարկադրում էր հայերին գաղթել: 1987թ. «Արարատ» թերթը գրում էր. «Լիբանանի հայութիւնը 1925-էն սկսեալ արտագաղթած էր տարեկան չորս-հինգ հազար, վերջին տասնամեակին քսան հազարէ աւելի արտագաղթողներ՝ Աղլանտեանէն անդին»<sup>3</sup>: Քաղաքացիական պատերազմի վերջին շրջանում գաղթը շարունակվում էր, որի պատճառ էին հանդիսանում որոշ շրջանների կողմից հակահայկական առանձին դրսևորումները, բայց մանավանդ Բեյրութի արևելյան շրջաններում ռազմական գործողութիւնների ակտիվացումը<sup>4</sup>:

1975-1985թթ. Լիբանանից գաղթեց համայնքի շուրջ 50%-ը<sup>5</sup>: Ըստ որոշ տվյալների՝ 1975-1981թթ. Լիբանանից ԱՄՆ տեղափոխվեց 8700-9000 հայ<sup>6</sup>: Ողջ քաղաքացիական պատերազմի

<sup>1</sup> *Վարժապետեան Ս.*, Հայերը Լիբանանի մէջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Դ, էջ 439-440:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, «Արարատ», Բեյրութ, 26.1.1979, էջ 2, 27.1.1979, էջ 2:

<sup>3</sup> Նույն տեղում, 20.V.1987, էջ 2:

<sup>4</sup> «Սփիւռք», Բեյրութ, 1990, թիվ 1, էջ 11, թիվ 6, էջ 13:

<sup>5</sup> *Մարգարյան Ռ.*, Լիբանանահայ կրթական հաստատութիւնները (1922-1980-ական թվականներ), «Լրաբեր հասարակական գիտութիւնների», 1990, թիվ 2, էջ 48-49:

<sup>6</sup> *Արաւելյան Յ.*, նշվ. աշխ., էջ 6:

ընթացքում ԱՄՆ տեղափոխված լիբանանահայերի թիվը կազմում էր 60-160 հազար<sup>1</sup>: Հ.Թաքուշյանը նշում էր, թե հնարավոր է, որ 60 հազար, 160 հազար, նույնիսկ մինչև 200 հազար լիբանանահայ եկած լինի ԱՄՆ<sup>2</sup>: Ն.Հովհաննիսյանը գրում է, որ Լիբանանը լքել է 200 հազար հայ, սակայն 2015թ. դրությամբ<sup>3</sup>, այսինքն՝ դա ներառում է ևս շուրջ 35 տարիներ, որոնց ընթացքում տեղի է ունեցել զգալի արտագաղթ: Սա արդեն շատ ավելի տրամաբանական և հնարավոր տարբերակ է, մինչդեռ 1986թ. Լիբանանից հայերի արտագաղթը չէր կարող հասած լինել 200 հազարի, առավել ևս միայն ԱՄՆ, քանի որ հազարավոր լիբանանահայեր գաղթել են այլ երկրներ:

Ըստ Կանադայում ԽՍՀՄ դեսպանության 1978թ. տեղեկանքի՝ 1976-1977թթ. Լիբանանի քաղաքացիական պատերազմի պատճառով այստեղ էր տեղափոխվել 4 հազար հայ<sup>4</sup>: Արդյունքում՝ 1981թ. Մոնրեալի հայերի 15,8%-ը Լիբանանում ծնվածներ էին: Լիբանանից արտագաղթող զգալի թվով հայեր ԱՄՆ տեղափոխվելու համար սկզբում մեկնում էին Կանադա, որտեղից ավելի հեշտ էր իրենց վերջնական նպատակակետ հանդիսացող պետություն մեկնելը<sup>5</sup>:

---

<sup>1</sup> *Bakalian A.*, նշվ. աշխ., էջ 11:

<sup>2</sup> *Takooshian H.*, նշվ. աշխ., էջ 142:

<sup>3</sup> *Հովհաննիսյան Ն.*, Մերձավոր Արևելքի և Միջին Արևելքի հայ համայնքները և նրանց հեռանկարները, էջ 20: Նաև *Hovhannisyán N.*, *The Armenian Motherland – the Final Home of Diaspora Armenians*, "Fundamental Armenology", 2015, N 2, p. 324, <http://www.fundamentalarmenology.am/datas/pdfs/175.pdf>: 2013թ. Ա.Եղիայանը գրում է, որ քաղաքացիական պատերազմի արդյունքում լիբանանահայ գաղութը կորցրեց իր ավելի քան 60 տոկոսը, տե՛ս *Եղիայան Ա.*, Յետեղեռնեան արեւմտահայերէն մակընթացութիւն եւ տեղատուութիւն. հեռանկարներ, «Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում» գիտաժողովի նյութեր, Երևան, 2013, էջ 35:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 8, գ. 37, թ. 4:

<sup>5</sup> *Chichekian G.*, նշվ. աշխ., էջ 53-54:

1984թ. մարտի 14-ին կայացած գրույցի ժամանակ «Արարատ» թերթի խմբագիր Ժ.Նայիրին ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար Ջ.Կիրակոսյանին տեղեկացրել էր, որ Լիբանանում մնացել է 150 հազար հայ, սակայն իրենք նշում են 200 հազար թիվը՝ համայնքի շահերը պաշտպանելու համար<sup>1</sup>: Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա.-ն, կարծես փորձելով շատ ավելի փոքր ցույց տալ արտագաղթի ծավալները և բնույթը, 1989թ. նշում էր. «Ոմանք ապահովութեան փնտռութի իրենց ճիգին մէջ՝ տուն-տեղ թողուցին, ուրիշ, համեմատաբար աւելի ապահով, վայրեր գացին: Ուրիշներ նոյնիսկ հարկաւորուեցան երկրէն ժամանակաւորապէս հեռանալ, ոմանք Սուրիա, ոմանք Կիպրոս եւ ոմանք Եւրոպա կամ այլուր ապաստան փնտռելով»<sup>2</sup>:

Չնայած քաղաքացիական պատերազմը հարկադրում էր հայերին զանգվածաբար արտագաղթել, սակայն այլ երկրներից հայերի ներհոսքը Լիբանան չդադարեց նոյնիսկ այս տարիներին. «Մինչեւ օրս ալ, շրջակայ երկիրներէն, նոյնիսկ հեռաւոր Պալքաններէն եւ Արեւելեան Եւրոպայէն հայեր կու գան Լիբանան»<sup>3</sup>: Նշելի է, որ քաղաքացիական պատերազմի ամենածանր շրջանում հայերը չլքեցին Լիբանանն ավելի մեծ թվակազմով, քան մյուս համայնքների ներկայացուցիչները<sup>4</sup>: Կարծիք կար, որ ընդհանրապես գաղթում էին նրանք, ովքեր հնարավորություն

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 3, գ. 53, թ. 3:

<sup>2</sup> «Արարատ», Բեյրութ, 30.IX.1989, էջ 2:

<sup>3</sup> *Վարժապետեան Ա.*, Հայերը Լիբանանի մէջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Բ, էջ 22:

<sup>4</sup> *Kotchikian A.*, Between (Home)land and (Host)land: Lebanese-Armenians and the Republic of Armenia, “Armenians of Lebanon: From Past Princesses and Refugees to Present-Day Community”, ed. by Boudjikianian A., Haigazian University/The Armenian Heritage Press, Beirut, 2009, p. 475.

ունեին. «Դրամ կամ կրթություն ունեցողը, այդ հնարաւորութեան շնորհիւ, ձգեց երկիրը, որ այդ միջոցին աղբիւր էր միայն քանդումի, ճնշումի եւ աղքատութեան: Մնացին անոնք, որոնք հնարաւորութիւն չունէին երթալու...»<sup>1</sup>: Լիբանանը լքեցին բազմաթիւ մտավորականներ, որոնք առավելաբար տեղափոխվեցին Արևմուտքի հայկական համայնքներ<sup>2</sup>:

Այսպիսով՝ լիբանանահայերն արտագաղթեցին ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Ֆրանսիա, Գերմանիա, Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ, Վենեսուելա, Մեծ Բրիտանիա, Նիդերլանդներ, Շվեդիա, Դանիա, Նորվեգիա, Ավստրիա, Շվեյցարիա, Իտալիա, Քուվեյթ, ԱՄԷ, Սաուդյան Արաբիա, Բահրեյն, Հունաստան, Կիպրոս, Հորդանան, ՀԱՀ, Սուդան, Գանա, Լիբերիա:

### ***Հետևանքները Լիբանանի հայ համայնքում***

Արտագաղթն ինքնըստինքյան հանգեցրեց Լիբանանի հայերի թվի կտրուկ նվազմանը: Ստորև ներկայացնում ենք տարբեր տարիներին Լիբանանի հայերի թվի վերաբերյալ տարբեր տվյալներ.

---

<sup>1</sup> *Յակոբեան Ս.*, նշվ. աշխ., էջ 10:

<sup>2</sup> *Migliorino N.*, The Lebanese system and Armenian cultural diversity between yesterday, today, and tomorrow: opportunities and limits, “Armenians of Lebanon: From Past Princesses and Refugees to Present-Day Community”, ed. by Boudjikianian A., Haigazian University/The Armenian Heritage Press, Beirut, 2009, p. 487.

1952	85 հազար <sup>1</sup>	1970	200 հազար <sup>2</sup>	1986	150 հազար <sup>3</sup>
1960	125 հազար <sup>4</sup>	1975	250 հազար <sup>5</sup>	1987	70 հազար <sup>6</sup>
1961	110 հազար <sup>7</sup>	1980	250 հազար <sup>8</sup>	1988	105 հազար <sup>9</sup>
1962	120 հազար <sup>10</sup>	1981	200 հազար <sup>11</sup>	1980-ական թթ. վերջ	100 հազար <sup>12</sup>
1964	100 հազար <sup>13</sup>	1982	175 հազար <sup>14</sup>	1989	90 հազար <sup>15</sup>
1965	100 հազար <sup>16</sup>	1984	250 հազար <sup>17</sup>	1990	50 հազար <sup>18</sup>
1967	137 հազար <sup>19</sup>	1985	176 հազար <sup>20</sup>	2001	105 հազար <sup>21</sup>
				2006	50-60 հազար <sup>22</sup>

<sup>1</sup> Վարժապետեան Ս., Հայերը Լիբանանի մէջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Բ, էջ 79:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 30, թ. 1:

<sup>3</sup> *Брык С.*, նշվ. աշխ., էջ 389:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 279, թ. 2:

<sup>5</sup> Նույն տեղում, ֆ. 875, ց. 6, գ. 20, թ. 1: Այլ տվյալներով՝ այդ թիվը հասնում էր 250 հազարի, տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 573, թ. 1:

<sup>6</sup> «Արարատ», Բեյրութ, 16.V.1987, էջ 2:

<sup>7</sup> Վարժապետեան Ս., Հայերը Լիբանանի մէջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Բ, էջ 79:

<sup>8</sup> *Համազասպյան Վ.*, նշվ. աշխ., էջ 19:

<sup>9</sup> *Ոսկանյան Ս.*, Սփյուռքահայության թվաքանակի դինամիկան 1962-1986թթ., «Լրաբեր հասարակական գիտությունների», 1988, թիվ 11, էջ 49:

<sup>10</sup> *Գասպարյան Ս.*, նշվ. աշխ., էջ 109:

<sup>11</sup> Վարժապետեան Ս., Հայերը Լիբանանի մէջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Բ, էջ 79:

<sup>12</sup> *Bakalian A.*, նշվ. աշխ., էջ 11:

<sup>13</sup> «Սովետական Հայաստան», Երևան, 1964, թիվ 9, էջ 27:

<sup>14</sup> *Takooshian H.*, նշվ. աշխ., էջ 135:

<sup>15</sup> Armenian International Magazine, Glendale, Vol. 1, No 2, 1990, September, p. 17.

<sup>16</sup> *Тер-Мкртчян Л.*, նշվ. աշխ., էջ 17: Ըստ Ե.Խաթանեսյանի՝ այդ թիվը 125 հազար էր, տե՛ս *Խաթանեսյան Ե.*, նշվ. աշխ., էջ 28:

<sup>17</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 13, թ. 2: Նույն թիվն է նշում Ա.Ոսկանյանը, տե՛ս *Ոսկանյան Ս.*, Սփյուռքահայության թվական կազմը, էջ 49:

<sup>18</sup> *Դալլաքյան Կ.*, Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004, էջ 183:

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 398, թ. 1:

<sup>20</sup> *Չիլինգիրյան Հ.*, Միջին Արևելքի հայկական համայնքները պարտադրված իրակալության և անորոշ ապագայի միջև, «Վերլուծական տեղեկագիր» ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, հ. 7, Երևան, 2015, էջ 245:

<sup>21</sup> *Tölölyan K.*, Elites and Institutions in the Armenian Transnation, WPTC-01-21, Wesleyan University, 2001. <http://www.transcomm.ox.ac.uk/working%20papers/WPTC-01-21%20Tololyan.doc.pdf>

<sup>22</sup> *Յակոբեան Ս.*, նշվ. աշխ., էջ 12:

1989թ. Թաիֆի համաձայնագրով հայերը պետք է ունենային 6 պատգամավոր Լիբանանի 128 հոգանոց խորհրդարանում, ինչպես նաև մեկ նախարար կառավարությունում (հայ նախարարների թիվը կհասներ 2-ի միայն այն պարագայում, երբ կառավարության կազմն ունենար 30 և ավելի անդամ)<sup>1</sup>: Արդյունքում, եթե նախկինում լիբանանահայերը հազվադեպ էին ունենում նախարարներ, ապա Թաիֆի համաձայնագրի կնքումից հետո մշտապես ունեցել են մեկ կամ երկու նախարար:

Պատերազմի հետևանքով հայ համայնքն առնվազն կիսվեց: Եթե համեմատենք պատերազմին նախորդող և դրան հաջորդած տարիների տվյալները, ապա համայնքը կորցրեց իր դպրոցների 20%-ը և աշակերտների 43%-ը: 1974-1975թթ. Լիբանանում կային 56 դպրոց և 21 հազար աշակերտ, 1987-1988թթ.՝ 47 և 12.924, իսկ 1991-1992թթ.՝ համապատասխանաբար 45 և 11.939: Ընդ որում՝ այս գործընթացը եղավ շարունակական: Պատերազմին հաջորդած տարիներին շարունակվող արտագաղթի հետևանքով արդեն 2001-2002թթ. հայկական դպրոցների թիվը հասավ 33-ի, իսկ աշակերտության թիվը՝ 8 հազարի<sup>2</sup>: Աշակերտության խիստ նվազման պատճառով որոշ դպրոցներ միացվեցին իրար: Հատկապես նոսրացան Արևմտյան Բեյրութի հայկական դպրոցները<sup>3</sup>: Արտագաղթի հետևանքով առաջացավ քարձրորակ ուսուցիչների կարիք<sup>4</sup>:

<sup>1</sup> *Avsharian R.*, The Ta'ef Agreement and the Lebanese-Armenians, “Armenians of Lebanon: From Past Princesses and Refugees to Present-Day Community”, ed. by Boudjikian A., Haigazian University/The Armenian Heritage Press, Beirut, 2009, p. 403.

<sup>2</sup> *Migliorino N.*, The Lebanese system and Armenian cultural diversity between yesterday, today, and tomorrow: opportunities and limits, p. 486-489.

<sup>3</sup> *Դալլաթյան Կ.*, Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004, էջ 193:

<sup>4</sup> Հ.Բ.Ը. Միութին: Ընդհանուր տեղեկագիր 1977 տարեշրջանի, Նիւ Եորք, 1978, էջ 3:

Պատերազմից հետո զգալի դարձավ հայ երեխաներին օտար դպրոցներ ուղարկելը, ինչը պայմանավորված էր քաղաքում հայերի տեղաբաշխվածության փոփոխմամբ, բայց նաև այն մտայնությամբ թե դրանք գերակայություն ունեն հայկականների նկատմամբ<sup>1</sup>: Քաղաքացիական պատերազմից հետո հայկական դպրոցների անկումը պայմանավորված էր ոչ միայն արտագաղթի հետևանքով աշակերտության կտրուկ նվազմամբ, օտար դպրոցներին նախապատվություն տալով, այլև պետական դպրոցների վարձավճարի ավելի ցածր լինելով: Քաղաքացիական պատերազմին հաջորդող շրջանի սոցիալ-տնտեսական կացությունը, բնականաբար, մեծացնում էր դրա նշանակությունը<sup>2</sup>:

Բեյրութի ներսում հայերի տեղաշարժերի արդյունքում արևմտյան շրջաններից հայությունը հիմնականում հեռացավ, ինչի հետևանքով այստեղի կառույցները լուրջ խնդիրների առաջ կանգնեցին. «Պատերազմն առաջ, աւելի քան քառասուն հազար հայութիւն կար այսպէս բնորոշուած արեւմտեան Պէյրութի շրջաններուն մէջ: Այդ պատճառաւ, մեր (ՀԲԸՄ– Տ.Ղ.) գլխաւոր կրթական եւ երիտասարդական կառոյցները կը գտնուէին այդ շրջաններուն մէջ: Այժմ հայ զանգուածը տեղաւորուած է Նահր էլ Մօթէն մինչեւ Ճիւնի, եւ Անթիլիասէն մինչեւ Պէյթ Քոքոյի տարածութեան վրայ, ուր մենք շատ տկար ներկայութիւն ունինք»<sup>3</sup>:

<sup>1</sup> Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 449:

<sup>2</sup> Ադդարեան Հ., Դպրոցները և կրթութիւնը լիբանանահայ համայնքին մէջ. ուսուցում, ուսումնառութիւն, գործելաոճ. նոր մշակոյթի մը անհրաժեշտութիւնը, Լիզպոն, 2014, էջ 18

<sup>3</sup> Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 447: Եթե 1973թ. ՀԲԸՄ-ն ուներ 4271, 1975թ.՝ 4750, ապա 1979թ.՝ 3757 անդամ (այս թվերի մեջ հաշվվում էին նաև Բեյրութի երկու երկրորդական վարժարանների աշակերտները, որոնք ևս միության անդամներ էին), տե՛ս նույն տեղում, էջ 498:

Պատերազմի հետևանքով էական փոփոխություններ կատարվեցին Լիբանանի հայերի տեղաբաշխման մեջ, մասնավորապես մնաց Բեյրութից դուրս գտնվող հայության միայն փոքր մասը: 1981թ. նախկին 300 ընտանիքի (որոնցից 250-ը՝ առաքելադավան) փոխարեն Ջահլեում հաշվվում էր 200-250, իսկ Բալաբեկում՝ ընդամենը 10 ընտանիք: 1970թ. հետո հայությունը Նահրի շրջանից տարածվեց դեպի արևելք՝ Ջալքա, Ջտեյտեի (Ժտեյտեի) և Անթիլիաս: Իսկ 1975թ. քաղաքացիական կռիվներից հետո հայերը սկսեցին հաստատվել Անթիլիասի շրջանում՝ այն դարձնելով հայաշատ կենտրոն<sup>1</sup>:

Քաղաքացիական պատերազմի հետևանքով համայնքի շուրջ կեսի գաղթից հետո մինչ այդ գործող սոցիալական ցանցերը որոշ չափով կազմալուծվեցին: Հայերը կենցաղում, աշխատանքում ավելի շատ սկսեցին շփվել այլազգիների հետ, ինչը բացասական հետևանքների է հանգեցնում հայոց լեզվին տիրապետելու առումով<sup>2</sup>:

Պատերազմի նախօրյակին լիբանանահայերը շատ կարևոր դերակատարում ունեին Լիբանանի տնտեսությունում<sup>3</sup>: 1969թ. Լիբանանում ԽՍՀՄ դեսպանության տեղեկանքի համաձայն՝ այստեղ կար ավելի քան 50 հայ միլիոնատեր<sup>4</sup>: 1999թ. Լիբանանի զբոսաշրջության նախարար Արա Նազարյանը նշում

---

<sup>1</sup> *Վարժապետեան Ս.*, Հայերը Լիբանանի մեջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Գ, էջ 401, 442-443, 435, 489:

<sup>2</sup> *Jebejian A.*, Patterns of Language Use Among Armenians in Beirut in the Last 95 Years, «Հայկազեան հայագիտական հանդես», հ. ԼԱ, Պեյրութ, 2011, էջ 464:

<sup>3</sup> *Abramson S.*, Lebanese Armenians; a Distinctive Community in the Armenian Diaspora and in Lebanese Society, «The Levantine Review», Vol. 2, N 2, p. 195-196.

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 3, գ. 7, թ. 1:



էր, որ եթէ մինչև քաղաքացիական պատերազմը Լիբանանի գործարանատերերի մեծամասնությունը հայեր էին, ապա դա սկսեց փոխվել հենց պատերազմի մեկնարկից հետո: 1970-ական թթ. կեսերին հարյուրավոր գործարարներ կա՛մ արտագաղթեցին, կա՛մ կորցրին իրենց ունեցվածքը: Նա նաև ընդգծում էր, որ հայերի դերը Լիբանանի տնտեսության մեջ էապես նվազել է քաղաքացիական պատերազմի ավարտից հետո<sup>1</sup>:

Արտագաղթը, բնականաբար, ունեցավ մի շարք բացասական հետևանքներ. «Համայնքին որակական վիճակը ժխտականօրէն ազդուեցաւ նաեւ ունեւորներու, կրթուածներու եւ յատկապէս՝ երիտասարդութեան ընտրանիի արտագաղթին պատճառով ...հայկական կրթական հաստատութիւնները որակապէս փոքրացան, մինչ մշակութային գործունէութիւնը նուազեցաւ, թէ քանակով եւ թէ որակով, մշակոյթի բոլոր բնագաւառներուն մէջ՝ պար, երաժշտութիւն եւ թատրոն: Նմանապէս քանակական եւ որակական անկում արձանագրուեցաւ մամուլի բնագաւառին մէջ, համայնքի անդամներու թիւին եւ անոնց կրթական մակարդակի նուազումին պատճառով»<sup>2</sup>: Արտագաղթի հետևանքով Լիբանանը կորցրեց իր նախկին դերը և վերջին շրջանում չի կարողանում բավարարել այլ գաղութների պահանջները՝ համայնքային գործիչներով մատակարարելու հարցում<sup>3</sup>:

Արտագաղթը բացասական դեր ունեցավ նաև խառնամուսնությունների տեսանկյունից: Եթէ հայկական եկեղեցիներ

<sup>1</sup> Armenian International Magazine, Glendale, Vol. 10, No 12, 1999, December, p. 48.

<sup>2</sup> *Յակոբեան Ա.*, նշվ. աշխ., էջ 11, 13:

<sup>3</sup> *Եղիայեան Ա.*, նշվ. աշխ., էջ 40:

րում արձանագրված խառնամուսնությունները 1974թ. հասնում էին 16,86%-ի, ապա 2001թ.՝ 31,82%-ի<sup>1</sup>:

Չնայած պատերազմի ավերիչ հետևանքներին՝ Լիբանանի հայ համայնքը պահպանեց իր կարևորագույն նշանակությունը հայկական սփյուռքում. «...հայ համայնքը, որ պատերազմի աւարտին թշուառ պատկեր մը կը պարզէր համեմատած իր նախկին վիճակին. նուագում իր ժողովրդագրական կշռին, փակում բազմաթիւ համայնքային հաստատութիւններու, նահանջ միութենական եւ մտաւորական կեանքի: Հակառակ այս բոլորին, Լիբանանը տակաւին այն միակ եւ իւրայատուկ վայրն է, ուր հայերուն պէս փոքրամասնութիւն մը կը վայելէ համայնքային կեանքին նպաստող կարեւոր առաւելութիւններ»<sup>2</sup>:

### *Լիբանանահայերն ԱՄՆ-ում*

Քաղաքացիական պատերազմի արդյունքում Լիբանանից ԱՄՆ գաղթող հայերը հաստատվեցին ԱՄՆ բոլոր հայաշատ բնակավայրերում, բայց առավելաբար Փասադենայում և Ման Ֆերնանդոյի հովտում<sup>3</sup>: 1979թ. լիբանանահայերի ԱՄՆ գաղթի մասին Ջ.Մելքոնյանը գրում էր. «Ամէն տեղ են լիբանանահայերը՝ Հիւսիսային Ամերիկայի բոլոր մեծ ու պզտիկ քաղաքներուն մէջ, եւ եթէ Մերձատր Արեւելքի տագնապը հիմնական լուծումի մը չյանգի (այս ընթացքով՝ այդ լուծումը մօտիկ ըլլալ չի թուիր), լիբանանահայերու թիւը պիտի շարունակէ աճիլ անընդհա-

---

<sup>1</sup> *Յակոբեան Ս.*, նշվ. աշխ., էջ 16:

<sup>2</sup> Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, հ. 2 (1941-2006), էջ 375:

<sup>3</sup> *Գոսազեան Շ.*, նշվ. աշխ., էջ 124:

տօրէն, եւ անոնք, ամէն օր, աւելի եւս զգալի պիտի դարձնեն իրենց ներկայութիւնը մեր ազգային կեանքէն ներս»<sup>1</sup>:

Ըստ ԱՄՆ պաշտոնական մարդահամարների՝ 1980թ. ԱՄՆ հայերից 8305-ը ծնվել էր Լիբանանում, 1990թ.՝ 15.542-ը, իսկ 2000թ.՝ 17.253-ը<sup>2</sup>: 1980թ. ԱՄՆ մարդահամարի տվյալներով՝ Լոս Անջելեսի շրջանում կար Լիբանանից եկած 6 հազար հայ, որոնք կազմում էին տեղի հայերի 14,3%-ը: Նրանց 71,4%-ն այստեղ էր եկել 1975-1980թթ., 13,2%-ը՝ 1970-1974թթ., 8,5%-ը՝ 1965-1969թթ.<sup>3</sup>: Ըստ մի հետազոտության՝ 2007թ. ԱՄՆ հայերի 10,4%-ը ծնվել էր Լիբանանում<sup>4</sup>: 2010թ. մարդահամարի տվյալներով՝ Լոս Անջելեսի շրջանում Լիբանանից եկած հայերի թիվը 10.393 էր<sup>5</sup>:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի ժամանակ ԱՄՆ գաղթող լիբանանահայերը բավական լավ կրթություն ունեին, հմտացել էին գործարարության մեջ, բացի հայերենից հաճախ տիրապետում էին անգլերեն, ֆրանսերեն լեզուներին: Նրանք պատրաստ էին ինտեգրվել ամերիկյան հասարակությանը՝ միաժամանակ պահպանելով հայկական մշակույթը<sup>6</sup>:

Լիբանանը կրթական մշակներով էր մատակարարում Հյուսիսային Ամերիկայի հայությանը. «Միջին Արեւելքը, յատկա-

<sup>1</sup> «Զարթոնք», Բեյրութ, 15.II.1979, էջ 2:

<sup>2</sup> *Мкртчян Т.*, Армянская диаспора в США (1960-е – 1990-е гг.), диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, Тамбов, Тамбовский государственный университет имени Г.Р. Державина, 2015, с. 60-61.

<sup>3</sup> *Sabagh G., Bozorgmehr M., Der-Martirosian C.*, Subethnicity: Armenians in Los Angeles, Volume V. 1989-90 - California Immigrants in World Perspective: The Conference Papers, April 1990, Institute for Social Science Research, UCLA, p. 10-11.

<sup>4</sup> Tourism Market Research on the Armenian-American Diaspora Community, p. 8.

<sup>5</sup> *Գոսազեան Շ.*, նշվ. աշխ., էջ 126:

<sup>6</sup> *Papazian D.*, Armenians in America, *Het Christelijk Oosten* 52, No. 3-4 (2000), p. 311-347. [http://www.umd.umich.edu/dept/armenian/papazian/america.html#N\\_71\\_](http://www.umd.umich.edu/dept/armenian/papazian/america.html#N_71_)

պէս Լիբանանը կը մատակարարէ Ամերիկայի ու Քանատայի հայկական դպրոցներու ուսուցչական կազմերուն եւ վարչական մարմիններուն մէկ կարեւոր տոկոսը»<sup>1</sup>: Ա.Եղիայանն այդ մասին գրում էր. «Եթէ աչքի առաջ ունենանք ամերիկահայ թերթերու, թէկուզ անգլիատառ, անձնակազմերը և հայոց լեզուի ուսուցիչները, ապա պիտի նկատենք, որ ընդհանրապէս գացած են Միջին Արևելքէն՝ Սուրիայէն, մանաւանդ Լիբանանէն»<sup>2</sup>:

Մամուլում հնչում էին մեղադրանքներ ԱՄՆ-ում հաստատված լիբանանահայերի հասցեին, թե նրանք չեն մասնակցում Լիբանանի հայության համար կազմակերպվող հանգանակություններին: Սակայն իրականում նրանց զգալի մասն անհատապէս էր օգնում այնտեղ մնացած իրենց ազգականներին<sup>3</sup>:

Քաղաքացիական պատերազմի հետևանքով ԱՄՆ եկած լիբանանահայերի որոշ մասը հաստատվեց Ռոդ Այլենդում: Սկզբում համայնքը զգուշություն էր ցուցաբերում «բեյրութցիներից»: Նորեկները խոսում էին հայերեն, անգլերենը երկրորդ կամ երրորդ լեզու էր նրանց համար: Նրանց հայերենի բարբառը տարբերվում էր, մանավանդ հարստացել էր Միջին Արևելքում: Նրանք իրենք վերապրած ներգաղթողներ չէին, այլ հիմնականում վերապրածների զավակներ, որոնք ունեին համայնքային կյանքի փորձ: Այս նորեկ ներգաղթողները տարօրինակ էին թվում որոշ տեղացի հայերին, և ժամանակ պահանջվեց նրանց ջերմորեն ընդունելու համար: Միայն նրանից հետո, երբ նորեկներն ընդգրկվեցին համայնքային հարաբերությունների, եկեղե-

---

<sup>1</sup> «Արարատ», Բեյրութ, 10.VIII.1981, էջ 3:

<sup>2</sup> Եղիայան Ա., նշվ. աշխ., էջ 31:

<sup>3</sup> «Զարթոնք», Բեյրութ, 15.II.1979, էջ 2:

ցիների մեջ՝ տեղի հայերն ընդունեցին, որ նրանք իրենց պես հայեր են: «Բեյրութցիներն» իրենք էլ աստիճանաբար ընդունեցին ամերիկահայության մաս լինելը և մոտ 1990թ. արդեն ամբողջությամբ ձուլվել էին Ռոդ Այլենդի հայ համայնքին: Նախկին պիտակավորումն ամբողջությամբ վերացավ<sup>1</sup>:

Սակայն Լիբանանից ԱՄՆ եկած ոչ բոլոր հայերն էին ակտիվորեն մասնակցում համայնքային կյանքին: Լիբանանից և Սիրիայից գնացած որոշ թվով հայեր ցանկանում էին ԱՄՆ-ից հետ դառնալ, սակայն չէին կարող, քանզի վարկեր էին վերցրել, որոնք վճարելու համար երկար ժամանակ էր պահանջվում<sup>2</sup>:

<sup>1</sup> *Karentz V.*, *Mitchnapert the Citadel: A History of Armenians in Rhode Island*, 2004, p. 224.

<sup>2</sup> «Ազդակ», Բեյրութ, 04.I.1979, էջ 3:

## ԱՐՏԱԳԱՂԹԸ ՍԻՐԻԱՅԻՑ

1946թ. Սիրիայի հայերի թիվը 125 հազար էր<sup>1</sup>, իսկ 1952թ.՝ 138 հազար<sup>2</sup>: 1963թ. այն հաշվվում էր ավելի քան 100 հազար, որից 70 հազարը՝ Հալեպում<sup>3</sup>:

1940-1950-ական թթ. ուրբանիզացման գործընթացի պատճառով սկսեցին անկում ապրել Սիրիայի հայկական փոքր համայնքները: Հայրենադարձությունից հետո հաջորդ կարևոր ժողովրդագրական տեղաշարժն այս համայնքներից գաղթն էր դեպի մեծ քաղաքներ կամ այլ երկրներ: Արդյունքում՝ 1940-1950-ական թթ. աստիճանաբար մարեցին Սիրիայով մեկ ցրված փոքրաթիվ հայկական համայնքները, որտեղից հայերը կա՛մ տեղափոխվեցին ավելի խոշոր հայկական կենտրոններ, կա՛մ հայրենադարձվեցին: Հետագա տասնամյակներին մնացածների մի մասն էլ արդեն փոխադրվեց Լիբանան, Կանադա, ԱՄՆ և այլուր<sup>4</sup>:

---

<sup>1</sup> *Migliorino N.*, (Re)constructing Armenia in Lebanon and Syria, p. 89. Ըստ ՀԽՍՀ արտաքին գործերի մինիստրության 1946թ. տեղեկանքի՝ Սիրիայում կար 100 հազար հայ, տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 147, թ. 2: 1949թ. Դամասկոսի հայ ավետարանականների թիվը 120 էր, Հոմսում՝ 72, Հալեպում՝ 2868: 1954թ. Հալեպի թեմի հայ կաթոլիկների թիվը մոտ 14 հազար էր, Դամասկոսի թեմում՝ 2 հազար, իսկ Ջեզիրեի թեմում՝ մոտ 3 հազար, տե՛ս *Մրրոբեան Տ.*, նշվ. աշխ., էջ 199-200, 273-274, 284: Նաև՝ *Գեորգեան Կ.*, Ամենուն տարեգիրքը 1955, Բ. տարի, էջ 349-350:

<sup>2</sup> «Զարթոնք», Բեյրութ, 17.II.1952, էջ 2:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 342, թ. 1: Լ.Տեր-Մկրտչյանը, ուռճացնելով Սիրիայի հայերի թիվը, 1965թ. այն հաշվում էր 135 հազար, որից 110.600-ը՝ առաքելական, 19.900-ը՝ կաթոլիկ և 4500-ը՝ ավետարանական, տե՛ս *Тер-Мкртчян Л.*, նշվ. աշխ., էջ 34:

<sup>4</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 513:

1930-1940-ական թթ. Գնիե և Յադուբիե գյուղերից հայերը տեղափոխվում էին Հալեպ, Լաթաքիա, մասամբ՝ Դամասկոս, նաև արտագաղթում էին: 1950-ական թթ. տնտեսական ճգնաժամը, այգիների չորանալը նպաստեցին դեպի քաղաք արտահոսքին, գլխավորաբար՝ Հալեպ, Լաթաքիա, Դամասկոս, մասամբ էլ՝ Լիբանան: Արտագաղթի պատճառներից էր նաև աճող գործազրկությունը<sup>1</sup>: Արաբ Փունարից այս շրջանում գաղթում էին ինչպես բնական աղետների, տնտեսական դժվարությունների, գործազրկության, այնպես էլ կրթություն ստանալու համար. «Արտագաղթի գլխավոր պատճառներէն մէկն ալ՝ անգործութիւնէն աւելի՝ հասնող պատանիներուն երկրորդական ուսման եւ արհեստներու անկարելիութիւնն է»<sup>2</sup>: Եթե 1952թ. Ազեզի հայերի թիվը 544 էր, ապա 1957թ.՝ 246: Շարունակական արտագաղթը հանգեցնում էր համայնքի կազմալուծմանը. «Այս տարի (1965թ.– Տ.Ղ.) եւս սկսած է նոր արտագաղթ մը դեպի գլխաւոր քաղաքներ եւ մանաւանդ դեպի Լիբանան ու այլ երկիրներ՝ ի խնդիր ապրուստի ապահովման. այսպէսով, երէկի հոծ ու բարգաւաճ հայ գաղութը կազմալուծուած ու պարպուած՝ այսօր իր մէջ կը հաշուէ չքաւոր տասը ընտանիքներ միայն, որոնք նոյնիսկ փոխադրուելու ի վիճակի չեն»<sup>3</sup>:

Քեսաբի նախակրթարանների շրջանավարտները ևս հաճախ իրենց կրթությունը շարունակում էին աշխարհի տարբեր երկրներում. «Բ. Աշխարհամարտէն ետք Քեսապի նախակրթա-

<sup>1</sup> Չոլաքեան Յ., Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը (Պատմա-ազգագրական ուսումնասիրություն), Անթիլիաս, 2006, էջ 178-179, 183:

<sup>2</sup> Չապրեան Ս., Հայկական փոքր գաղութներ. Ազեզ, Աֆրին, Արաբ-Փունար, Պէրյութ, 1965, էջ 136:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 55:

րաններէն եւ միջնակարգ վարժարաններէն շրջանաւարտ ու շրջանաւարտուհիներ կը լեցուէին Սուրիոյ եւ Լիբանանի գիշերօթիկ վարժարանները՝ Հալէպի Գոլէճ, Քարէն Եփփէ Ճեմարան, Պէյրութի Ճեմարան, Լիբանանի Հայ Աւետ. Բարձրագոյն վարժարաններ, Կիպրոսի Մելքոնեան Կրթական Հաստատութիւն, այնուհետեւ ի մասնաւորի Լիբանանի, Մ. Նահանգներու, Ֆրանսայի, Սուրիոյ ու Երեւանի համալսարաններէն վկայուելով իբրեւ բժիշկ, ատամնաբոյժ, դեղագործ, երկրաչափ, մեքենագէտ եւ մասնագետ այլեւայլ ուսմանց եւ գիտութիւններու»<sup>1</sup>:

Հայերի արտագաղթը պայմանավորված էր նաև այս երկրից ընդհանուր աշխատանքային միգրացիայով: 1940-1960-ական թթ. զգալի թվով սիրիացիներ տեղափոխվեցին Լիբանան՝ աշխատելու, հետագայում քաղաքացիական պատերազմի ժամանակ նրանց մի մասը ստիպված վերադարձավ Սիրիա<sup>2</sup>: Այս բնույթի արտագաղթը վերաբերում էր նաև սիրիահայությանը:

Սակայն Սիրիայի հայերի զանգվածային արտագաղթը կապված չէր միայն սոցիալ-տնտեսական որոշ չափով օրյեկտիվ գործընթացների հետ: Հայության համար ծանր նշանակություն ունեցան այս երկրի անկախացմանը հաջորդած ներքաղաքական զարգացումները: 1950-1960-ական թթ. իրարահաջորդ ծայրահեղական, ազգայնական, բռնապետական վարչակարգերը խիստ անբարենպաստ պայմաններ էին ստեղծում տեղի հայության համար: Երբեմն դրանք նույնիսկ ճնշումներ էին կիրառում հայերի նկատմամբ, սակայն արտագաղթի մղիչ գործոնն առավելաբար պետության ընդհանուր քաղաքական կացությունն էր:

---

<sup>1</sup> Չոլաքեան Յ., Քեսապ, Հալէպ, 1995, էջ 149:

<sup>2</sup> Tabar P., նշվ. աշխ.:



Այս առումով կարևորագույն նշանակություն ունեցավ 1950-ական թթ. վերջին-1960-ական թթ. սկզբին տեղի հայ քաղաքական կյանքի առաջատար ուժի՝ ՀՅԴ-ի դեմ սանձազերծված արշավը: Այն մեղադրվեց հակապետական գործունեության մեջ. «Զօր. Դրօ, նոյն ատեն լծուած է ընդյատակեայ ուրիշ աշխատանքի մը՝ 1950էն ի վեր - վտանգաւոր արկածախնդրութեան մը, Սուրիոյ մէջ պետական յեղաշրջում մը յառաջ բերելու՝ հակա-համայնավար ուղղութեամբ: Եւ այս խիստ վտանգաւոր արկածախնդրութեան լծել կու տայ նաեւ դաշնակցական ընտիր եւ անձնուէր մեր տղաք, բարեմիտ եւ հաւատաւոր կուսակցականներ, որոնք ինչպիսի անմարդկային չարչարանքներու պիտի ենթարկուէին 1961ին, քաւելու, Դրոյի կողմէ՝ իրենց պարտադրուած մեղքերը»<sup>1</sup>:

Արդէն 1957թ. դաշնակցականների ձերբակալությունների հետևանքով Սիրիայի ՀՅԴ անդամների մի մասը տեղափոխվեց Լիբանան<sup>2</sup>: Հակադաշնակցականները մեղադրում էին ՀՅԴ-ին, թե այն Հյուսիսային Սիրիայում զենքեր է կուտակում հակաիշխանական ապստամբության մասնակցելու համար<sup>3</sup>: Մեղադրյալներին վերագրվում էր ռազմական օդանավակայանների, Լաթաքիայով ԽՍՀՄ-ի կողմից ստացվող ռազմատեխնիկական օգնության վերաբերյալ գաղտնի տեղեկատվության հավաքում և այլն<sup>4</sup>: ՀՅԴ-ն հերքում էր մեղադրանքները՝ դրանք համարելով

<sup>1</sup> Լուսարձակ հանրային մեր ներկայ կեանքին վրայ, էջ 66:

<sup>2</sup> «Զարթոնք», Բեյրութ, 31.VIII.1957, էջ 3:

<sup>3</sup> Նաճարեան Ե., Դաշնակ դեկավարութիւնը օտարի ծառայութեան մէջ, Հալէպ, 1958, էջ 72:

<sup>4</sup> *Мелконян Э.*, Армянская диаспора в ее сосуществовании с внешним миром /1920-1950-е гг./, «Լրաբեր» ՀԳԱ (հասարակ. գիտ.), 2002, N 2, էջ 81:

գրապարտություններ և երկրի ներքաղաքական խիստ անկայուն վիճակի հետևանք<sup>1</sup>:

Այս դատական գործընթացի և ՀՅԴ-ի դեմ ուղղված քայլերի մեջ Մ.Թռլոյանը մեղադրում էր Սփյուռքի «առաջադիմական» ուժերին, հատկապես ՌԱԿ Բեյրութի ղեկավարությանը, որի գործելակերպին դեմ էին նույնիսկ նույն կուսակցության ԱՄՆ որոշ գործիչներ<sup>2</sup>: Դատը տևեց մինչև 1962թ. գարուն. երեք հոգի դատապարտվեց մահապատժի: Հեռակա կարգով 15 տարվա բանտարկության դատապարտվեց նաև Մովսես Տեր-Գալուստյանը, որը խուսափեց ներկայանալուց<sup>3</sup>: Վերջինիս Լիբանաննի իշխանությունները հրաժարվեցին հանձնել սիրիական դատարանին<sup>4</sup>: Այս դատավարությունը հակահայկական տրամադրություններ հրահրեց նաև սովորական բնակչության մեջ՝ առաջ բերելով անվստահություն հայերի նկատմամբ: Դա, իր հերթին, էապես նպաստեց արտագաղթին<sup>5</sup>: Այդ մասին Ա.Անդ-

<sup>1</sup> «Հայրենիք», Բոստոն, 1962, թիվ 3, էջ 78-79: 1962թ. օգոստոսի 7-ին ԱՕԿՄ-ում ընդունվեցին Սիրիայից եկած ուսուցիչների խմբից դաշնակցական Էդուարդ Էլոյանն ու Գևորգ Տոնապետյանը, որոնք ՀՅԴ-ի դեմ մեղադրանքների շրջանակներում ձերբակալվածների մեջ էին եղել (երկրորդն ավելի երկար էր պահվել և խոշտանգվել բանտում, բայց երկուսն էլ ազատ էին արձակվել առանց դատվելու): Ըստ նրանց ձերբակալվածները չէին կարող Իսրայելի լրտեսներ լինել, և դա հնարավոր մեղադրանք էր: Նրանք նշում էին, որ լրտեսության համար եղած ձերբակալություններն առիթ ծառայեցին, որ արաբական որոշ շրջաններ ամբողջ սիրիահայությանը մեղադրեն դավաճանության մեջ: Է.Էլոյանը նշեց, որ նպատակահարմար է համարում, մինչև հայրենադարձվելը, սիրիահայության տեղափոխումը Լիբանան: Ըստ նրանց նասերական տրամադրություններ ունեցողները հայերին համարում են Եգիպտոս-Սիրիա միասնությանը խոչընդոտողներ, տե՛ս ՆԱԱ, ֆ. 709, ց. 5, գ. 6, թ. 6-7:

<sup>2</sup> *Թեօլեօլեան Մ.*, Պայքարը Հ.Յ. Դաշնակցութեան դեմ, Պոստըն, 1962, էջ 61-62:

<sup>3</sup> *Դալլաքյան Կ.*, Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից, Երևան, 1964, էջ 151:

<sup>4</sup> *Թաղևոսյան Ա.*, Դամասկոսյան դատավարության հետքերով, Երևան, 1968, էջ 75: ԱՆՉԱ-ն փորձում էր բռնաձևոված ՀՅԴ անդամներին որպես հալածյալների տեղափոխել ԱՄՆ, տե՛ս *Zadoian H.*, նշվ. աշխ., էջ 76:

<sup>5</sup> *Kirkland J.R.*, նշվ. աշխ., էջ 80-81:

րեասյանը գրում էր. «Բորբոքած արաբներ, փողոցներու մեջ եւ այլուր, անհատ անմեղ հայերու հանդէպ բուռն արարքներու սկսեր էին դիմել, որոնք կրնային աղիտալի բնոյթի յանգիլ»<sup>1</sup>:

Նույնիսկ մինչև հայկական լրատվամիջոցների և մշակութային հաստատությունների ճնշումը՝ Սիրիայի քաղաքական մթնոլորտը հարկադրեց հայ արվեստագետներին, լրագրողներին և գրողներին հեռանալ երկրից: 1950-ական թթ. սկզբում սիրիահայ գրական շրջանակների ամենանշանավոր ներկայացուցիչներ Անդրանիկ Ծառուկյանը, Վահե Վահյանը, Սիմոն Սիմոնյանը, Զարեհ Մելքոնյանը, Գառնիկ Ադդարյանը տեղափոխվեցին Բեյրութ: Այնուհետև հայ համայնքը մեկը մյուսի հետևից կորցրեց իր պարբերականները, որոնցից վերջինը՝ ՀՅԴ «Արևելքը», փակվեց 1963թ. մարտին, երբ ԲԱԱՄ-ի հեղափոխությունը ճնշեց բոլոր թերթերը<sup>2</sup>:

Քաղաքական զանազան վայրիվերումների հետևանքով Սիրիայից և Միջին Արևելքի այլ երկրներից հայերը, այդ թվում՝ մտավորականները, որոնց գործունեության համար, բնականաբար, ավելի նպաստավոր էին ժողովրդավարական կարգերը, հաստատվում էին Լիբանանում. «1950ականներու երկրորդ կիսուն արաբական ազգայնականութեան եւ համայնավարութեան բախումէն ծագած Միջին Արևելքի յեղափոխական ցնցումներուն հետեւանքով Միջին Արևելքի գաղութներու հայութեան դէմ շղթայագերծուած քաղաքական հալածանքները ու կրթա-

<sup>1</sup> *Անդրէասեան Ա.*, նշվ. աշխ., էջ 63:

<sup>2</sup> *Migliorino N.*, 'Kulna Suriyyin'? The Armenian community and the State in contemporary Syria, *Revue des mondes musulmans et de la Méditerranée* [Enligne], 115-116 | décembre 2006, mis en ligne le 09 février 2007, consulté le 22 avril 2015. <http://remmm.revues.org/3020>

կան սեղմումները պատճառ դարձան արտագաղթի, եւ մտաւորականներու թիւ մը՝ յատկապէս Սուրիայէն, կեդրոնացաւ Պէյրութի մէջ»<sup>1</sup>:

Սիրիայից հայերի արտագաղթը զանգվածային բնույթ ստացավ 1958-1961թթ. «Եգիպտոսի եւ Սուրիոյ միացումով 1958ին եւ 1961ին ալ «դաշնակցական լրտեսական ցանցի մը գտնուիլը Սուրիոյ մէջ», հայեր հոն հալածանքի ենթարկուեցան որու պատճառաւ բազմաթիւ հայեր եկան եւ հաստատուեցան Լիբանան»<sup>2</sup>: Դրա հիմնական պատճառը Նասերի ոստիկանական վարչակարգն էր: Զանգվածային արտագաղթը դեպի Լիբանան նվազեց միայն Սիրիայի՝ Եգիպտոսից անջատվելուց հետո: Սակայն 1963թ. մարտի 8-ի հեղաշրջումից հետո բասականների վարած տնտեսական քաղաքականությունը մեծ վնասներ պատճառեց հայերին, ինչը մղում էր նրանց արտագաղթել: Դրան խոչընդոտելու համար իշխանություններն աշխատում էին ելքի թույլտվություն չտրամադրել: Եթե նախկինում հայերը հանգիստ մեկնում էին Լիբանան, ապա 1963թ. դա բավական դժվարացել էր: Այդ կերպ սիրիական կառավարությունը ջանում էր կանգնեցնել հայերի արտագաղթը<sup>3</sup>:

Հայերը տուժեցին նաև Եգիպտոսի հետ միության շրջանում Սիրիայում ծավալված տնտեսության ազգայնացման քաղաքականությունից<sup>4</sup>: Այդ մասին Ա.Անդրեասյանը գրում էր.

---

<sup>1</sup> *Սշրգեան Շ.*, նշվ. աշխ., էջ 336:

<sup>2</sup> *Վարժապետեան Ս.*, Հայերը Լիբանանի մէջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Բ, էջ 23:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 342, թ. 1, 11:

<sup>4</sup> *Մուրադյան Ս.*, Սիրիական բուրժուազիայի հայկական հատվածի դիրքերը երկրի էկոնոմիկայում (1945-60-ական թվականներ), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, թիվ 10, էջ 47:

«Գործարաններու եւ ըստացուածքի գրաման անողոք օրէնքները ստեղծեր էին ահաբեկիչ մթնոլորտ մը, որ բազմաթիւ հայեր փախուստի մղեր էր դէպի Լիբանան»<sup>1</sup>: Հայերն արտագաղթում էին Լիբանան նաև զինվորական ծառայությունից խուսափելու համար: Այն ավելի բարենպաստ էր, քանի որ կիսով չափ քրիստոնէական երկիր էր՝ անհամեմատելի ազգայնական տրամադրություններով Սիրիայի հետ<sup>2</sup>:

1967թ. սիրիական իշխանությունը որոշեց կենսագործել դեռևս 1948թ. հռչակած օրէնքը, որի նպատակն էր համայնքային դպրոցներում առաջնակարգ դեր հատկացնել արաբերեն լեզվին, ինչպես նաև դրանք ենթարկել պետական վերահսկման: Սա, իհարկէ, լուրջ սպառնալիք էր հայկական դպրոցների համար: Սկզբում մյուս փոքրամասնությունների հետ միասին հայերը հրաժարվեցին հպատակվել այս օրէնքին, սակայն հետագայում բանակցությունների միջոցով<sup>3</sup> որոշվեց հայերենը դասավանդել որպես երկրորդ լեզու (շաբաթական 4 ժամ, և կրոն՝ 2 ժամ): Փոխզիջումն ընդունեց Բերիո թեմը, սակայն հայ կաթոլիկներն, ինչպես արաբ կաթոլիկները, հրաժարվեցին համաձայնել դրան, ինչի հետևանքով նրանց դպրոցները պետականացվեցին<sup>4</sup>:

<sup>1</sup> *Անդրէասեան Ա.*, նշվ. աշխ., էջ 59:

<sup>2</sup> *Kirkland J.R.*, նշվ. աշխ., էջ 99:

<sup>3</sup> Սիրիայի կրթության նախարարի հետ այս բանակցությունները վարեց Գ.Էյլի-դաթյանը, տե՛ս *Փաշայան Ա., Հարությունյան Լ.*, Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2011, էջ 22:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 427, թ. 3: Նաև՝ «Գեղարդ» Սուրիահայ տարեգիրք, հ. Ե, Հալէպ, 1996, էջ 404-406:

Այս որոշումը հայկական դպրոցների համար խիստ բացասական նշանակություն ունեցավ<sup>1</sup>: Բացի դասաժամերի սահմանափակումներից, հայկական դպրոցներում արաբ տնօրեններ նշանակելուց՝ այստեղ պարտադիր դարձավ պետական քաղաքականացված քարոզչությունը, բոլոր աշակերտները պարտավորվեցին անդամակցել պետական աշակերտական միություններին: Սիրիայի հայկական դպրոցներն ամբողջությամբ ենթակա դարձան պետական համակարգին<sup>2</sup>: Հայերեն լեզվով դասավանդման սահմանափակումը նպաստում էր նրան, որ սիրիահայ դպրոցականների լեզվամտածողությունը հիմնված լինի արաբերենի, ոչ թե հայերենի վրա, ինչպես մինչև 1967թ. որոշման կիրառումն էր<sup>3</sup>:

Դպրոցներին վերաբերող այս փոփոխությունը նպաստեց արտագաղթին: Այդ մասին 1967թ. դեկտեմբերի 25-ին Վ.Համազասպյանը ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ա.Քոչինյանին գրում է. «...վերջին իրադարձությունը (դպրոցների ազգայնացում – Տ.Ղ.) ցնցել է համայնքը, և այժմ տիրում է հուզումնալի և դառնադետ կացություն: Ժողովուրդը գտնվում է շփոթված վիճակում: Ըստ հասած լուրերի, ԱՆՉԱ-ն դարձյալ սկսել է ակտիվանալ, որպեսզի հայ զանգվածներին փոխադրի հեռավոր Կանադա, Ավստրալիա կամ այլուր»<sup>4</sup>: Միաժամանակ, 1967թ. որոշումը մե-

<sup>1</sup> Չոլաքեան Յ., Արևմտահայերենի ուսուցման դպրոցական պայմանները եւ միջոցներու պատրաստութիւնը, «Արևմտահայերենի ուսուցման վիճակը Սփյուռքում» զեկույցների ժողովածու, Երևան, 2011, էջ 127-137:

<sup>2</sup> Հարությունյան Ն., Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները, Երևան, 2002, էջ 210-211:

<sup>3</sup> Migliorino N., ‘Kulna Suriyyin’? The Armenian community and the State in contemporary Syria.

<sup>4</sup> Հայրենիք-Սփյուռք կամրջող անուն: Վ.Համազասպյան (փաստաթղթերի ժողովածու), էջ 131:

ծացրեց հայրենադարձվել ցանկացող սիրիահայերի թիվը<sup>1</sup>:

Հալեպում ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսության 1970թ. տեղեկագրում նշվում էր, որ հայերի արտագաղթը Հալեպից սկսվել էր 15-18 տարի առաջ և չէր դադարել: Նշանակալի թվով հայեր, հատկապես նախորդ 5 տարիների ընթացքում, մշտական բնակության էին մեկնել ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա: Տարանցիկ ճանապարհ էր հանդիսանում Բեյրութը, որտեղ դաշնակցականները, համագործակցելով ԱՄՆ ներկայացուցիչների հետ, կազմակերպում էին գաղթողների փաստաթղթերը և հովանավորում ճանապարհաձախար: Սիրիայից հայերը հիմնականում մեկնում էին ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Լիբանան, Քուվեյթ և այլուր<sup>2</sup>:

1970-ական թթ. Գամիշլիից արտագաղթի մասին կարդում ենք. «Վերջին տարիներուն, դժբախտաբար ոմանք կարտագաղթեն, ընդհանրապես դէպի Լիբանան եւ ապա Ամերիկա կամ այլուր: Ազգային կեանքի պատասխանատուները ճիգ չեն խնայեր հակազդելու համար այս տխուր երեւոյթին. արդիւնք ձեռք կը ձգուի, քանի որ այլ կարգ մը վայրերու համեմատութեամբ յարաբերաբար քիչ են արտագաղթողները Գամիշլիէն: 1975-ին Ճեզիրէի Հայութեան թիւը 1000 ընտանիք կամ 8500 հայ էր, որոնցմէ 500 ընտանիքներ կը բնակէին Գամիշլիի մէջ, 150 ընտանիքներ ալ շրջակայ գիւղերուն...»<sup>3</sup>:

Հալեպում ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսության 1971թ. տեղեկանքում նշվում էր, որ քաղաքական անկայունության, ապագայի անորոշության, ազգային փոքրամասնությունների նկատ-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 34, թ. 2:

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 1:

<sup>3</sup> *Տէմիքճեան Վ.*, նշվ. աշխ., էջ 497:

մամբ իշխանությունների ճնշումների, սոցիալ-տնտեսական գործոնների հետևանքով վերջին շրջանում սիրիահայերն արտագաղթում էին ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Լիբանան, Լիբիա և այլ երկրներ: Ըստ տեղեկանքի՝ 1967-1968թթ. հայրենադարձության դադարեցումը, որը պայմանավորված էր Իսրայելի դեմ պատերազմական գործողություններով, տեղի հայերին դրդեց արտագաղթել Արևմուտք: Սիրիայի և Լիբանանի (որտեղից սիրիահայերը մեկնում են Արևմուտք) իշխանությունները որևէ կերպ չէին խոչընդոտում այս գործընթացին<sup>1</sup>:

Սիրիահայերը ցանկանում էին գալ Հայաստան, բայց հաճախ շատ ավելի հեշտ էր ԱՄՆ մեկնելը<sup>2</sup>: Հալեպում ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսությունում հայերի հետ 1970թ. տեղի ունեցած զրույցների արդյունքում պարզվում էր, որ սիրիական քաղաքացիությունից հրաժարվելու դեպքում արական սեռի յուրաքանչյուր ներկայացուցչի համար (անկախ տարիքից) պետք է մուծվեր 2 հազար սիրիական ֆունտ: Շատ ընտանիքներ, որոնք պիտի մուծեին 6-8 հազար ֆունտ, չունեին այդ գումարը, ինչը լուրջ խոչընդոտ էր հանդիսանում հայրենադարձվելու համար: Միաժամանակ, համայնքի ներկայացուցիչները նշում էին, որ Լիբանան մեկնելու պարագայում՝ առանց սիրիական քաղաքացիությունից հրաժարվելու կարելի է տեղափոխվել Հայաստան, ինչպես դա անում էին ԱՆՉԱ-ի միջոցով 1966-1970թթ. Ավստրալիա, ԱՄՆ, Կանադա մեկնող հայերը: Սակայն խորհրդային դիվանագետները դա նպատակահամար չէին համարում<sup>3</sup>:

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 60, թ. 34-35:

<sup>2</sup> *Կապուտիկյան Ս.*, Քարավանները դեռ քայլում են, էջ 427:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 465, թ. 1:



Ուշագրավ է 1972թ. ՌԱԿ առաջնորդներից Բ.Թովմասյանի և ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ա.Քոչինյանի խոսակցությունը, որի ժամանակ առաջինն առաջարկում էր Սիրիայից հայրենադարձություն կազմակերպել, մանավանդ որ սիրիահայերը, չգալով Հայաստան, չեն մնում տեղում, այլ արտագաղթում են. «Առաջարկեցի ներգաղթ կազմակերպել Թուրքիայէն ու Սուրիայէն, թէեւ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու բնոյթը կրնայ դժուարացնել այս խնդիրը: Ըսաւ թէ Սուրիան ալ ժամանակին արգիլած էր ներգաղթի ընթացք տալ: Ըսի թէ պարագան ծանօթ է մեզի եւ անհաւանական չէ, որ այդ ուղղութեամբ աշխատանք տարուելու պարագային արտօնութիւն առնուի: Ժամանակին Նիկողոս Գասպարեանը Սուրիա այցելած էր այս հարցերով եւ Սուրիոյ պետական ներկայացուցիչները առարկեր էին թէ չեն ուզեր որ հայերը հեռանան երկրէն, որովհետեւ շինարար եւ օգտակար քաղաքացիներ են: Հիմա թող երթայ եւ նոյն մարդոց հարցնէ թէ ո՞ր են այդ Սուրիոյ օգտակար հայերը: Շատ մը հայաբնակ շրջաններ պարպուած են՝ հայերուն մեկնումովը արեւմտեան երկիրներ, բայց ո՛չ Հայաստան...»<sup>1</sup>:

Ըստ Կ.Դալլաքյանի հրապարակած, Բեյրութի Թեքեյան կենտրոնի արխիվում պահվող թարգմանությունների՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարարության և Սիրիայի արտաքին գործերի, ներքին գործերի և պաշտպանության նախարարությունների միջև 1970թ. տեղի է ունեցել մի ուշագրավ խիստ գաղտնի նամակագրություն: Մասնավորապես, թուրքերը հայտնել են Սիրիայի անվտանգության մարմիններին, որ հայերը համագործակցում են հրեաների հետ, այդ խնդրում ամերիկահայ

<sup>1</sup> Թովմասյան Բ., նշվ. աշխ., էջ 107:

համայնքի օգնությամբ ստանում ԱՄՆ աջակցությունը և լուրջ վտանգ են ներկայացնում սիրիական պետության համար: Թուրքիայի փոխարտգործնախարարի և Թուրքիայում Սիրիայի դեսպանի 1971թ. խոսակցության ժամանակ առաջինը տեղեկացրել էր, որ «ձախ» հայերն ուղղակիորեն ենթարկվում են ԽՍՀՄ դեսպանությանը, իսկ «աջերը»՝ Բեյրութում ԱՄՆ դեսպանությանը<sup>1</sup>:

Քանի որ սիրիական կողմը հերքում էր հայերի վտանգավոր լինելն իր պետության համար, թուրքերը ջանում էին նորանոր փաստեր տրամադրել: Այս առումով հետաքրքրական է 1971թ. Սիրիայի պաշտպանության նախարարի նամակը Սիրիայի ներքին գործերի նախարարին, որտեղ նա ներկայացնում էր Թուրքիայի անվտանգության մարմինների հաղորդած տեղեկությունները: Վեց կետից բաղկացած հաղորդագրության մեջ մեզ հետաքրքրող թեմայի շրջանակներում հատկապես կարևոր են 5-րդը և 6-րդը. «5. Թուրքիոյ սահմանակից՝ դրացի Սուրիոյ մէջ զօրաւոր գաղութի մը գոյութիւնը, քաղաքական, կրօնական, մշակութային եւ մարզական կազմակերպութիւններով, Թուրքիոյ ապահովութեան եւ հողային ամբողջականութեան վտանգ մը կը կազմէ: ...6. Սիսլ է այն կարծիքը, թէ «Մ.Նահանգաց կառավարութիւնը կը ձգտի Սուրիայէն հեռացնել հայերը, որպէսզի արհեստաւորներ, աշխատող ձեռքեր հեռանան Սուրիայէն եւ երկիրը տկարանայ»: Իրականութիւնը ճիշդ հակառակն է,- եթէ հայերը հեռանան Սուրիայէն, Սուրիան չի տկարանար, շատ մը գլխացաւեր կը պակսին Սուրիոյ համար եւ

---

<sup>1</sup> *Դալլաքյան Կ.*, Ռամկավար ազատական կուսակցության պատմություն, գիրք 2, «Մուղնի», 2007, էջ 271-276:

ապագան իր ներքին անդորրութեան, իր ապահովութեան եւ մասնաւորաբար իր կրօնքին որեւէ վտանգ չի սպառնար»<sup>1</sup>:

Նույն թվականին Սիրիայի պաշտպանության նախարարի՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարարին ուղղված նամակում, որտեղ հերքվում էին հայերի և հրեաների համագործակցությունը և հայերին ուղղված այլ մեղադրանքները, նաև նշվում էր. «Սուրիոյ հայերը օրէնքի սահմանին մէջ կ'ապրին եւ կը վայելեն կատարեալ ազատութիւն: Հայերը կրօնական գրգռութիւն չեն արծարծած եւ չեն կրնար արծարծել: Նկատելով, որ հետզհետէ կը պակսին եւ երկրէն կը հեռանան հայերը, ուրեմն պէտք չէ ազդեն բարի դրացիութեան յարաբերութեան վրայ: Սուրիոյ մէջ, պատկան սպասարկութեանց կեցուածքը հայերու հանդէպ հինէն ի վեր շատ յստակ է.- սուրիահայերը օրինապահ քաղաքացիներ են այս երկրին»<sup>2</sup>: Նույն թվականին հետևում է Թուրքիայի արտաքին գործերի նախարարության պատասխանը Թուրքիայում Սիրիայի դեսպանությանը: Թուրքական կողմը կրկին տարակուսանք էր հայտնում հայերին պաշտպանելու կապակցությամբ՝ հայերի արտագաղթի մասին նշելով. «Որքան որ ճնշուին եւ զսպուին, որքան պայուսակները պատրաստեն եւ հեռանան, այնքան վտանգներէ, գլխացուերէ եւ դժուարութիւններէ կ'ազատին արաբ Սուրիացիները: Սուրիոյ հայերը Լիբանանի հայ քաղաքական եւ կրօնական պատեհապաշտ ղեկավարներու անմիջական ազդեցութեան տակ են»<sup>3</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 278-279:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 280-281:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 281-282:

Արդեն 1965թ. Սիրիայից արտագաղթել էր մոտ 20 հազար հայ: Նրանք տեղափոխվել էին Լիբանան, Հարավային Ամերիկա, Կանադա, Ավստրալիա, ինչպես նաև հայրենադարձվել<sup>1</sup>: Ըստ Ա.Սանջյանի՝ 1960-1975թթ. Սիրիայից Լիբանան էր տեղափոխվել մոտ 30-40 հազար հայ, որոնց մի զգալի մասը Լիբանանից տեղափոխվեց այլ երկրներ<sup>2</sup>: Ըստ Հ.Թաքուշյանի՝ միայն Լիբանան արտագաղթած սիրիահայերի թիվը 60 հազար էր<sup>3</sup>: 1969թ. Լիբանանում ԽՍՀՄ դեսպանության տեղեկանքի համաձայն՝ այստեղ կար վերջին շրջանում հաստատված 30 հազար սիրիահայ<sup>4</sup>: Թերևս, Սիրիայից Լիբանան արտագաղթած հայերի թիվը կազմել է շուրջ 30-40 հազար, որոնց մի մասը, սակայն, արտագաղթել է այլ երկրներ:

Բացի Լիբանանից, ԱՄՆ-ից, Կանադայից<sup>5</sup>, Ավստրալիայից<sup>6</sup>, Քուվեյթից, Ֆրանսիայից<sup>7</sup> սիրիահայերը արտագաղթեցին նաև Լիբիա<sup>8</sup>, Գանա, Հունաստան, Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ, Վենեսուելա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Նիդերլանդներ, Շվեդիա, Ավստրիա, Իտալիա, ԱՄԷ, Բահրեյն, Կիպրոս:

<sup>1</sup> «Հայրենիք», Բոստոն, 16.VII.1965, էջ 3:

<sup>2</sup> *Санджян А.*, նշվ. աշխ., էջ 87:

<sup>3</sup> *Takooshian H.*, նշվ. աշխ., էջ 137:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 3, գ. 7, թ. 1:

<sup>5</sup> 1951-1966թթ. Սիրիայից Կանադա է տեղափոխվել 141 հայ, որից 104-ը՝ 1964-1966թթ.: 1981թ. Մոնրեալի հայերի 10 տոկոսը ծնվել էր Սիրիայում, տե՛ս *Chichikian G.*, նշվ. աշխ., էջ 50, 54:

<sup>6</sup> Սիրիայից արտագաղթը դեպի Ավստրալիա մեծ ծավալներ ստացավ 1964-1973թթ.: Այս ընթացքում ոչ մի շրջան չի առանձնանում գաղթի տեմպերի խիստ մեծ լինելով, տե՛ս *Kirkland J.R.*, նշվ. աշխ., էջ 98:

<sup>7</sup> 1960-ական թթ., հատկապես 1966-1969թթ., միայն Վալանս տեղափոխվեց 100 սիրիահայ ընտանիք (շուրջ 300 հոգի), տե՛ս *Սկրոյյան Ն.*, Վալանսի հայ համայնքը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1991, թիվ 2, էջ 112:

<sup>8</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 441, թ. 1:

Հաֆեզ Ասադի նախագահ դառնալուց (1971թ.) հետո հայերի նկատմամբ քաղաքականությունը մեղմվեց: Այդ շրջանում իշխանությունները սկսեցին հանդուրժողականություն ցուցաբերել փոքրամասնությունների հանդեպ, որպեսզի դրանով ապահովեն նրանց աջակցությունը վարչակարգի պահպանմանը<sup>1</sup>:

Չնայած պաշտոնապես էական փոփոխություններ տեղի չունեցան, սակայն իրականում վարչակարգը թույլ տվեց համայնքին համեմատաբար ազատ գործել՝ միաժամանակ իր ձեռքում պահելով ամբողջ վերահսկողությունը և ամեն պահի պատրաստ լինելով կրկին վերականգնել 1960-ական թթ. կեսերի ծանր կացությունը: Դա հանգեցրեց համայնքի համեմատական ակտիվացմանը, սակայն նաև զգուշավորության պահպանմանը: Այսպես, օրինակ, հայ համայնքն իրավունք չունեի համայնքային բացահայտ քաղաքական գործունեություն իրականացնել՝ պաշտոնապես հայ քաղաքական կուսակցությունները շարունակում էին գոյություն չունենալ: Վերականգնվեց հայերի ձևական ներկայությունը Սիրիայի խորհրդարանում, որտեղ հայերի թեկնածուներին իրականում նշանակում էր վարչակարգը: Հետաքրքրական է, որ և՛ Հ.Ասադի, և՛ Բ.Ասադի օրոք, չնայած ազգային փոքրամասնություններից ընտրված պատգամավորները որևէ կերպ չպիտի ներկայացնեին իրենց հավաքականությունը, սակայն նրանք ապահովում էին դրանց ներկայացուցչական առկայությունը խորհրդարանում<sup>2</sup>:

<sup>1</sup> Փաշայան Ա., *Հարությունյան Լ.*, նշվ. աշխ., էջ 23-24:

<sup>2</sup> Migliorino N., 'Kulna Suriyyin'? The Armenian community and the State in contemporary Syria. Մինչև 1990թ. Սիրիայի բոլոր խորհրդարաններում հայերն ունեցել են իրենց ներկայացուցիչները, ընդ որում՝ 1953 թվականից երկու բացառություններով (1954 և 1973) դա եղել է Գրիգոր Էպլիդարյանը: Նա 1953-1994թթ. այդ պաշտոնում ընտրվել է ութ անգամ, տե՛ս «Գեղարդ» Սուրիահայ տարեգիրք, հ. Ե, էջ 536:

Հ.Ասադի օրոք ՀՅԴ դիրքերը բավական բարելավվեցին: Չնայած համայնքի հակառակ թնի գործադրած ջանքերին՝ իշխանություններն ի վերջո թույլատրեցին Խորեն կաթողիկոսին այցելել Սիրիա (1972թ. դեկտեմբեր): Դաշնակցականները աշխատանքներ էին իրականացնում նաև, որպեսզի կարողանան թույլտվություն ստանալ՝ «Ազդակ» թերթը Սիրիա բերելու համար, որը երկար ժամանակ արգելված էր<sup>1</sup>:

Հայերի հանդեպ քաղաքականության փոփոխությունը հանգեցրեց նրան, որ 1970-ական թթ. վերջին Սիրիայից հայերի արտագաղթը գրեթե դադարեց<sup>2</sup>: Սակայն խոսքը զանգվածային գաղթի մասին էր, քանի որ բազմաթիվ անհատներ, կրթություն ստանալու<sup>3</sup>, ավելի բարեկեցիկ ապրելու, արդեն արտագաղթած հարազատներին միանալու և այլ նպատակներով, շարունակում էին հեռանալ:

Միաժամանակ, պետք է նշել, որ առանձին ժամանակահատվածներում, հատկապես Լիբանանի քաղաքացիական պատերազմի ժամանակ<sup>4</sup>, նկատվեց հայերի ներհոսք Սիրիայում: Հատկապես վերադառնում էին մեկ-երկու տասնամյակ առաջ արտագաղթածները, որոնց զգալի մասն այստեղ հարազատներ ուներ:

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 529, թ. 3-4:

<sup>2</sup> «Հայրենիք», Բոստոն, 13.II.1979, էջ 2:

<sup>3</sup> 1980-ական թթ. վերջից սկսվեց Դամասկոսի հայ երիտասարդների արտագաղթ դեպի Ամերիկա՝ ուսանելու նպատակով, որը հետագայում ավելի մեծ ծավալներ ստացավ, տե՛ս *Փաշայան Ա., Հարությունյան Լ.*, նշվ. աշխ., էջ 84:

<sup>4</sup> Օրինակ, Քեսաբի հայերի պարագայում տե՛ս *Չոլաքեան Յ.*, Քեսապ, էջ 142: ՀԲԸՄ-ն օգնություն էր ցուցաբերում Լիբանանի քաղաքացիական պատերազմի հետևանքով Հավեյ տեղափոխված հայերին, տե՛ս Հ.Բ.Ը. Միութիւն: Ընդհանուր տեղեկագիր 1978 տարեշրջանի, Նիւ Եորք, 1979, էջ 24, 55:

## **Արտագաղթի հետևանքները Միրիայի հայ համայնքում**

Արտագաղթն էապես նվազեցրեց հայերի թիվը Միրիայում (տե՛ս *Աղյուսակը*): Օրինակ, Դամասկոսում 1947թ. կար 9900 հայ, արդեն 1962թ.<sup>1</sup> 8 հազար<sup>1</sup>, իսկ 1972թ. արտագաղթի հետևանքով այստեղ մնացել էր ընդամենը 3500-ը<sup>2</sup>: Ըստ Հոմսի հայկական դպրոցի հոգաբարձու Եղիշե Էքմեջյանի՝ 1970թ. Հոմսում ապրում էր 110 հայ ընտանիք (600-700 հոգի): Տասը տարի դրանից առաջ համայնքի թիվը 5 հազար էր, սակայն բազմաթիվ ընտանիքներ տեղափոխվեցին Բեյրութ, ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա և Հունաստան<sup>3</sup>:

Միրիայի հայերի թվաքանակի վերաբերյալ կան իրարամերժ մի շարք տվյալներ.

1965	110 հազար <sup>4</sup>	1980	120 հազար <sup>5</sup>	1990	90 հազար <sup>6</sup>
1967	110 հազար <sup>7</sup>	1984	120 հազար <sup>8</sup>	2001	70 հազար <sup>9</sup>
1970	150 հազար <sup>10</sup>	1986	120 հազար <sup>11</sup>	XXI դ. սկիզբ	65-70 հազար <sup>12</sup>

<sup>1</sup> *Անդրեասեան Ա.*, նշվ. աշխ., էջ 61:

<sup>2</sup> *Եղիայեան Բ.*, նշվ. աշխ., էջ 894:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 24, թ. 10:

<sup>4</sup> *Խաթանասեան Ե.*, նշվ. աշխ., էջ 28:

<sup>5</sup> *Համազասյան Վ.*, նշվ. աշխ., էջ 19:

<sup>6</sup> «Հայրենիքի ձայն», Երևան, 11.VII.1990, էջ 6:

<sup>7</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 414, թ. 1:

<sup>8</sup> *Ոսկանյան Ա.*, Միյուրքահայության թվական կազմը, էջ 49:

<sup>9</sup> *Tölölyan K.*, նշվ. աշխ.:

<sup>10</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 30, թ. 1:

<sup>11</sup> *Երյկ Շ.*, նշվ. աշխ., էջ 422:

<sup>12</sup> *Մուրադյան Ա.*, Միրիայի հայ համայնքը, ա.տ., 2014, էջ 22:

1974	170 հազար <sup>1</sup>	1987	65 հազար <sup>2</sup>	2011	50 հազար <sup>3</sup>
1975	100 հազար <sup>4</sup>				

Չնայած 1960-ական թթ. սկսված արտագաղթին՝ Հալեպի հայերի թիվը շատ ավելի չէր կրճատվում, քանի որ այն համալրվում էր Հյուսիսային Սիրիայից, Կամիշլիից հայերի ներհոսքով: Սակայն արտագաղթն ունենում էր շոշափելի հետևանքներ Հալեպի հայության համար: Եթե մինչև 1960-ական թթ. Նոր Գյուլ (Մեյդան) թաղամասը գրեթե ամբողջությամբ հայաբնակ էր, ապա 1977թ. հայերը կազմում էին նրա միայն 50-60%-ը: Բարեկեցիկ հայերը հաճախ ավելի լավ պայմանների համար Նոր Գյուլից հեռանում էին Սուլեյմանիե թաղամաս<sup>5</sup>:

1960-ական թթ. Հալեպում հայերի արտագաղթի հետևանքների մասին Կ.Լեփեճյանը գրում է. «...սկսած էր անդրովկիանոսեան գաղթը. Ամերիկաներ, Աւստրալիա, եւ այլն: Այն թաղամասերն ու արուարձանները, որոնք հայու քրտինքով շաղախուած էին, արագօրէն սկսան պարպուիլ: Քացողները առանց ետ նայելու, 30-35 տարի հիւրանոցի մէջ ապրողի հոգեբանութեամբ գաղթեցին... Երբ մենք այդ արուարձաններէն մէկուն մէջ գտնուող Վարդանեան վարժարանի 35-ամեակը նշեցինք, այդ թաղամասը արդէն հայաթափուած էր»<sup>6</sup>:

<sup>1</sup> *Takooshian H.*, նշվ. աշխ., էջ 135:

<sup>2</sup> «Արարատ», Բեյրութ, 16.V.1987, էջ 2:

<sup>3</sup> *Փաշայան Ա., Հարությունյան Լ.*, նշվ. աշխ., էջ 89: Ըստ Բ.Քորթոշյանի՝ այդ թիվը 54500 էր, տե՛ս *Քորթոշյան Բ.*, Հալեպի արձանագրությունները, Երևան, 2013, էջ 27:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 573, թ. 1:

<sup>5</sup> «Հայրենիք», Բոստոն, 06.XII.1977, էջ 1:

<sup>6</sup> *Լեփեճեան Կ.*, Հայրենադարձությունը և ՄԴՀԿ-ի դերակատարությունը, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2009, էջ 72-73:



Հայրենադարձությունից հետո, երբ Հայաստան տեղափոխվեց 2407 քեսաբցի, Քեսաբը մասամբ դարձավ ամառանոցային բնակավայր: Շատ քեսաբցիներ, որոնք հաստատվել էին Սիրիայի և Լիբանանի տարբեր բնակավայրերում, այն օգտագործում էին որպես ամառանոց: Հայրենադարձության և արտագաղթի հետևանքով փոխվեցին Քեսաբի գյուղատնտեսական ուղղությունները: Մասնավորապես, տեղացիները հրաժարվեցին մեծաքանակ աշխատուժ պահանջող բերքատեսակների մշակումից: Բնակչության նվազման հետևանքով խիստ թուլացավ կրթական կյանքը, որոշ գյուղերում դպրոցները վերածվեցին նախակրթարանների: Այս հանգամանքն ինքնին ևս նպաստում էր արտագաղթին: Աստիճանաբար մեծանում էր հոսքը դեպի Լաթաքիա, Հալեպ և Դամասկոս, հատկապես Բեյրութ: 1960-ական թթ. տեղի ունեցավ բավական մեծ ծավալի արտագաղթ դեպի Կանադա, ԱՄՆ, որոշ չափով՝ նաև Ավստրալիա: Արտագաղթի պայմաններում շրջանում աստիճանաբար սկսեց մեծանալ ալևիների թիվը<sup>1</sup>:

Արտագաղթի հետևանքներից էր խառնամուսնությունների աճը: 2008թ. դրությամբ Բերիո թեմում գրանցվող տարեկան շուրջ 300 ամուսնությունների 5-10%-ն արաբ քրիստոնյաների հետ էր, սակայն մահմեդականների հետ խառնամուսնությունները գրեթե բացակայում էին<sup>2</sup>:

<sup>1</sup> Չոլսթեյն Յ., Քեսապ, էջ 138-139, 141:

<sup>2</sup> Migliorino N., (Re)constructing Armenia in Lebanon and Syria, p. 194.

### *Սիրիահայերն ԱՄՆ-ում*

Սիրիահայերը, լիբանանահայերի և մերձավորարևելյան այլ երկրների հայ համայնքների ներկայացուցիչների հետ միասին, XXդ. երկրորդ կեսից սկսեցին ողջ Սփյուռքին մատակարարել ազգային գործիչներ. «Միջինարևելեան հայ գաղութները անցած դարու արդեն կեսերուն ոչ միայն լայնօրէն ինքնաբաւ էին, այլև կը հասնէին այլ գաղութներու կարիքներուն, մասնաւորաբար Ամերիկայի՝ Հիւսիսային թէ Հարաւային, մերթ ընդ մերթ նաեւ Եթովպիայի, Իրաքի, Յունաստանի, Ֆրանսայի եւ այլն, ուր ծառայելու կ'ուղարկուէին մասնաւորաբար ուսուցիչներ, խմբագիրներ, այլև աշխարհիկ ու հոգևոր գործիչներ: Սփիւռքի մէջ չկայ հայկական համայնք մը, որուն հայախօսութեան ու հայեցիութեան իր նպաստը բերած չըլլան յատկապէս մայր գաղութ Սուրիան ու մանաւանդ Լիբանանը»<sup>1</sup>:

Սփյուռքի գանազան համայնքներում հայտնված սիրիահայերը ստանձնեցին կարևոր դերակատարություն. «Սուրիահայ տոհմիկ գաղութի մէջ սնած հայորդիներ, երկրի սահմաններէն դուրս հաստատուելով, անզուգական դեր վերցուցած են, որդեգիր նոր հայ համայնքներու մշակութային կեանքի ու կենցաղի մէջ, ներուժ տալով հայապահպանման անոնց յաճախ նուազող ջանքերուն»<sup>2</sup>:

---

<sup>1</sup> *Եղիայեան Ա.*, նշվ. աշխ., էջ 28: «Գեղարդ» տարեգրքում նշված է ավելի քան 120 սիրիահայ, որոնք տարբեր երկրներում զգալի ավանդ են ունեցել համայնքային կյանքում: Նրանց թվում գերակշռում են Բեյրութ մեկնածները, զգալի թիվ են կազմում նաև ԱՄՆ տեղափոխվածները, հաճախ նախ Բեյրութում, ապա ԱՄՆ-ում հաստատվածները, տե՛ս «Գեղարդ» Սուրիահայ տարեգիրք, հ. Ե, էջ 285-288:

<sup>2</sup> «Գեղարդ» Սուրիահայ տարեգիրք, հ. Ե, էջ 284:

Զգալի թվով սիրիահայեր հայտնվեցին ԱՄՆ-ում, որտեղ 1960-ական թթ. գաղթողներն առավելաբար հաստատվում էին Լոս Անջելեսում և Բոստոնում<sup>1</sup>: ԱՄՆ եկած հալեպահայերն ապրում էին մշակութային ցնցում (հատկապես իրենց զավակների ուժացման հարցում)<sup>2</sup>: Ըստ մի հետազոտության՝ 2007թ. ԱՄՆ հայերի 1%-ը ծնվել էր Սիրիայում<sup>3</sup>: 2010թ. մարդահամարի տվյալներով՝ Լոս Անջելեսի շրջանում Սիրիայից եկած հայերի թիվը 6.319 էր<sup>4</sup>:

Սփյուռքի տեղաշարժերի տեսանկյունից՝ Քեսաբի մասին խիստ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Հ.Չոլաքյանը. 1955թ. Քեսաբն ուներ 1632 բնակիչ, նույն ժամանակ Սիրիայում և Լիբանանում կար 1251 քեսաբցի, Հյուսիսային Ամերիկայում՝ 560, իսկ Հարավային Ամերիկայում՝ 320<sup>5</sup>: Արդյունքում՝ արդեն 1958թ. Լոս Անջելեսում սկսեց գործել 1930թ. հիմնված Քեսաբի ուսումնասիրաց միության մասնաճյուղը: Միությունն իր առջև նպատակ դրեց օգնել քեսաբցի կարիքավոր ուսանողներին<sup>6</sup>: Քեսաբը Սփյուռքի բազմաթիվ գաղութներին տվեց բազմաթիվ կրթական մշակներ, դասախոսներ, համայնքային ու կուսակցական գործիչներ, հրապարակագիրներ, խմբագիրներ: Հարկ է առանձնացնել Գաբրիել Ինճեճիքյանին, որը հիմնեց ԱՄՆ առաջին հայկական ամենօրյա դպրոցը<sup>7</sup>:

<sup>1</sup> *Գոսազեան Շ.*, նշվ. աշխ., էջ 123:

<sup>2</sup> *Թորանեան Թ.*, Պատկերներ մեր կենսքեն (պատմուածքներ), Երևան, 2000, էջ 44-47:

<sup>3</sup> Tourism Market Research on the Armenian-American Diaspora Community, p. 8.

<sup>4</sup> *Գոսազեան Շ.*, նշվ. աշխ., էջ 126:

<sup>5</sup> *Չոլաքեան Յ.*, Քեսապ, էջ 138:

<sup>6</sup> Այն ունի ամառային «Քեսաբ» ճամբար, կազմակերպում է գեղարվեստական ձեռնարկներ: Հրատարակում է «Kessabtsis» տարեգիրքը, տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 718:

<sup>7</sup> *Չոլաքեան Յ.*, Քեսապի երեք օրերը (21-23 մարտ 2014), Երևան, 2014, էջ 120: Նաև նույնի Քեսապ, էջ 149:

Այսպիսով՝ XXդ. երկրորդ կեսին Սիրիայից տեղի ունեցած արտագաղթն էապես թուլացրեց հայկական համայնքը: Չնայած արտագաղթած սիրիահայերը չափազանց կարևոր դերակատարում էին ստանձնում նորահաստատ երկրներում, սակայն արդեն իսկ գաղթողների համար ակնհայտ էր, որ իրենց սերունդներին այս երկրներում ուժացման վտանգը շատ ավելի է սպառնում, քան Սիրիայում: Տեղաշարժերի հետևանքով հայերի թվի էական նվազմամբ հանդերձ՝ XXդ. վերջին-XXIդ. սկզբին սիրիահայ գաղութը շարունակում էր հանդիսանալ Մփյուռքի կարևոր համայնքներից մեկը՝ վերոնշյալ արտագաղթի արդյունքում բազմաթիվ համայնքային գործիչներով ապահովելով աշխարհի տարբեր երկրներում ցրված հայկական կրթական, մշակութային, հասարակական-քաղաքական և այլ կառույցներին:

Մակայն 2011թ. Սիրիայում սկսված քաղաքացիական պատերազմն իսկական աղետ դարձավ նաև տեղի հայության համար: Անցնող հինգ տարիների ընթացքում, չնայած համայնքը պահելու վճռական ջանքերին, այն կրեց անվերականգնելի կորուստներ: Հատկապես 2012թ. սկսած, երբ ակտիվ ռազմական գործողությունների թատերաբեմ դարձավ Սիրիայի ամենահայաահոծ քաղաքը՝ Հալեպը, ակնհայտ դարձավ, որ համայնքի նախկին հզորությունը պահպանել հնարավոր չի լինի: Տեղի ազգային-եկեղեցական, կուսակցական բոլոր շրջանակները միավորեցին ուժերը՝ հայությանը կոչ անելով չլքել մայր գաղութը: Մակայն ֆիզիկական գոյության, պատերազմի առաջ բերած սոցիալ-տնտեսական անասելի դժվարությունները հարկադրեցին տասնյակ հազարավոր հայերի լքել Սիրիան: Բազմահազար

հայեր նախընտրեցին հաստատվել հայրենիքում, սակայն արտագաղթող սիրիահայերի մի զգալի մասն էլ հաստատվեց Լիբանանում, Կանադայում, Ավստրալիայում, Շվեդիայում, Հոլանդիայում, ԱՄՆ-ում և այլուր: Այդպիսով սիրիահայությունը դարձավ XXIդ. Սփյուռքի ներքին տեղաշարժերին մասնակից ամենախոշոր խումբը:

## ՎԵՐՉԱԲԱՆ

